

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՊԱՐՏՎԵԼՈՒ  
ԵՎ ՈՉ ՄԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

«АРМЕНИИ НЕ ДАНО ПРОИГРАТЬ НИ ОДНОЙ ВОЙНЫ»

«ARMENIA CAN NOT AFFORD TO LOSE ANY WAR»

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՆՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՅՈՎՈՒՄ  
ЭКОНОМИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ ОБОРОННЫХ РЕФОРМ  
ECONOMIC SUPPORT OF THE DEFENSE REFORMS

**ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ՝  
ԿԱՅՈՒՆ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՄԲ  
ԵՎ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ**



ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանը ԵԱՀԿ 7-րդ զագաքնաժողովում.

Աստանա, 2010 թ. դեկտեմբերի 2



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Լույս է տեսնում 1995 թվականից տարին չորս անգամ

4(66). 2010

## ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴ

- Քոթանջյան Հ. Ա.**  
քաղաքական գիտությունների դոկտոր (Ռ-Դ), Ռ-ազմական գիտությունների ռուսաստանյան ակադեմիայի իսկական անդամ, հակահախարհային գծով փորձագետ (ԱՄՆ)  
(նախագահ)
- Չիլինգարյան Գ. Ս.**  
(գլխավոր խմբագիր)
- Այդինյան Ռ. Ա.**
- Ապրիանով Է. Ա.**
- Ավետիսյան Վ. Պ.**  
(գլխ. խմբ. տեղակալ)
- Բաբայան Ն. Մ.**
- Գասպարյան Վ. Ս.**
- Գասպարյան Տ. Շ.**
- Գավթյան Ա. Մ.**
- Թունյան Վ. Վ.**
- Իսախանյան Մ. Ռ.**
- Խաչատուրով Յու. Գ.**
- Կարապետյան Մ. Ն.**
- Կարապետյան Մ. Ս.**
- Մաթևոսյան Ի. Ժ.**
- Մարգարյան Վ. Հ.**  
(գլխ. խմբ. տեղակալ)
- Մարտիրոսյան Ս. Ս.**
- Մարտիրոսով Լ. Ա.**
- Միրզաբեկյան Ա. Ռ.**
- Նազարյան Ա. Ս.**
- Սեդրակյան Ս. Գ.**
- Տեր-Գրիգորյանց Ն. Գ.**
- Տոնոյան Գ. Է.**
- Փարսադանյան Ա. Մ.**

## Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՆՍՏԻՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

- Վ. Ն. Ալիբախյան**, ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և զարգացման որոշ հարցեր . . . . . 9
- Ա. Ռ. Գևորգյան**, ՀՀ-ում պաշտպանական բարեփոխումների տնտեսական նախադրյալները . . 23
- Վ. Բ. Տերտերյան**, Տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը պաշտպանության կազմակերպման բնագավառում . . . . . 29
- Վ. Վ. Թունյան**, Գնումները՝ որպես պաշտպանական բարեփոխումների նյութատեխնիկական ապահովման կարևոր գործիքարան . . . . . 35
- Մ. Ա. Փարվանյան**, ՀՀ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը . . . . . 41
- Մ. Ռ. Իսախանյան, Ա. Ռ. Թովմասյան**, Ռ-ազմատնտեսագիտության հասկացությունը և խնդիրները ՀՀ պաշտպանական բարեփոխումների համատեքստում . . . . . 51

### ՕՊԵՐԱՏԻՎ ԱՐՎԵՏ

- Խ. Թ. Խաչատրյան, Վ. Բ. Բաղդասարյան**, Զոդարկումը և տարաշարժը՝ որպես ՀՕՊ-ի համակարգի մարտունակության պահպանման կարևոր միջոց . . . . . 57

### ՍՊՈՒԱԶԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՆՆԻԿԱ

- Ա. Պ. Նազարեթյան**, Երկրաֆիզիկական զենքը ՀՀ բնապահպանական անվտանգության համատեքստում . . . . . 62

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ**

*Կ. Ա. Բրուսյան*, Չորամասն ինքնակամ թողնելու և դասալքության համար քրեական պատասխանատվության որոշ հարցեր . . . . . 75

**ՈԱԶՄԱԿԱՆ ՏԵՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

*Ս. Ա. Սուշյան*, Ռ-ազմական աշխարհագրության դերն ու նշանակությունը գորքերի տեղագրաերկրաբաշխական ապահովման գործում . . . . . 83

**ՈԱԶՄԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅՈՒՆ**

*Լ. Գ. Հովհաննիսյան*, ՀՀ ՁՈՒ-ում ժամկետային պարտադիր զինծառայողների ֆիզիկական զարգացման հիգիենիկ բնութագիրը . . . . . 89

**ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Վ. Հ. Մարգարյան*, Մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական գործոնների հարաբերակցության հարցի շուրջ . . . 96

**ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Մ. Շահվերդյան*, Պատերազմի կործանարար ազդեցությունը բնության վրա: Հակառակորդի բնահամակարգը՝ որպես պատերազմի թիրախ . . . . . 103

**ՏԵՂԵԿՈՒԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆ**

*Ա. Լ. Քինակցյան, Գ. Ն. Ենիգիբարյան*, Հայաստանում պետական գաղտնիքի սահմանակարգի զարգացումը պատմական հոլովույթում . . . . . 113

**ՈԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ**

*Լ. Ժ. Խաչարյան*, Հայերենի ռազմագիտական տերմինաշինության որոշ սկզբունքներ . . . . . 123

*Ն. Ս. Մկրտչյան, Լ. Հ. Պապիկյան, Գ. Ս. Չիլիևզարյան*, Համարի բառարան . . 126

**ԳԻՏԱՆՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ**

- Ռ. Վ. Աղուզումցյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
- Ն. Հ. Առաքելյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Գ. Ե. Բաղդասարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ա. Գևորգյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ռ. Գ. Գևորգյան*, երկրաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Վ. Մ. Հարությունյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Ա. Հ. Մանթաշյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Է. Գ. Մինասյան*, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Մ. Մ. Միրիջանյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Կ. Ա. Մոսոյան*, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
- Յու. Ս. Չիլիևզարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Վ. Ա. Մարգարյան*, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
- Հ. Ս. Սիսակյան*, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

# «АЙКАКАН БАНАК» («АРМЯНСКАЯ АРМИЯ»)

ВОЕННО-НАУЧНЫЙ ЖУРНАЛ ИНСТИТУТА  
НАЦИОНАЛЬНЫХ СТРАТЕГИЧЕСКИХ ИССЛЕДОВАНИЙ  
ИМЕНИ ДРАСТАМАТА КАНАЯНА  
МИНИСТЕРСТВА ОБОРОНЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

№ 4(66). 2010

Издается 4 раза в год

## РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

*Котанджян Г. С.*, доктор политических наук (РФ), Действительный член  
Российской Академии военных наук, научный эксперт  
по контртерроризму (США) (председатель), *Чилингарян Д. С.* (гл. редактор),  
*Аветисян В. П.* (зам. гл. редактора), *Айдинян Р. А.*, *Априамов Э. А.*, *Бабаян Н. М.*,  
*Гаспарян В. С.*, *Гаспарян Т. Ш.*, *Давтян А. М.*, *Исаханян М. Р.*, *Карапетян М. Н.*,  
*Карапетян М. С.*, *Маргарян В. Г.* (зам. гл. редактора), *Мартirosов Л. А.*,  
*Мартirosян С. С.*, *Матевосян И. Ж.*, *Мирзабекян А. Р.*, *Назарян А. С.*,  
*Парсаганян А. М.*, *Сегракян С. Г.*, *Тер-Григорьянц Н. Г.*,  
*Тоноян Д. Э.*, *Тунян В. В.*, *Хачатуров Ю. Г.*

## СОДЕРЖАНИЕ

### ОБОРОННЫЕ РЕФОРМЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ: ЭКОНОМИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ

- В. Н. Аветисян.* Некоторые вопросы внедрения и развития  
системы программного бюджетирования в Министерстве обо-  
роны РА . . . . . 9 (20)\*
- А. Р. Геворкян.* Экономические предпосылки оборонных ре-  
форм в РА . . . . . 23 (27)
- В. Б. Тертерян.* Деятельность органов местного самоуправления  
в сфере организации обороны . . . . . 29 (33)
- В. В. Тунян.* Закупки как важный инструментарий материаль-  
но-технического обеспечения оборонных реформ . . . . . 35 (40)
- М. А. Парванян.* Правовые основы экономического обеспече-  
ния оборонной системы РА . . . . . 41 (50)
- М. Р. Исаханян, А. Р. Товмасян.* Понятие и задачи военно-  
экономической науки в контексте оборонных реформ РА . . . . . 51 (55)

### ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО

- Х. Т. Хачатрян, В. Б. Багдасарян.* Маскировка и маневриро-  
вание как важное средство сохранения боеспособности системы  
ПВО . . . . . 57 (61)

### ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА

- А. П. Назаретян.* Геофизическое оружие в контексте экологи-  
ческой безопасности РА . . . . . 62 (73)

---

\* Цифры в скобках обозначают страницу, с которой начинается текст на русском языке.

## **ВОЕННОЕ ПРАВО**

*К. А. Брутян.* Некоторые вопросы уголовной ответственности за самовольное оставление части и дезертирство . . . . . 75 (82)

## **ВОЕННАЯ ТОПОГРАФИЯ**

*С. А. Суджян.* Роль и значение военной географии в топогеодезическом обеспечении войск . . . . . 83 (88)

## **ВОЕННАЯ МЕДИЦИНА**

*Л. Г. Оганисян.* Гигиеническая характеристика физического развития военнослужащих обязательной срочной службы ВС РА . . 89 (94)

## **ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ**

*В. Г. Маргарян.* К вопросу соотношения психологических факторов, определяющих эффективность боевой деятельности . . . 96 (102)

## **ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*А. М. Шахвердян.* Разрушительное воздействие войны на природу. Экосистема противника как мишень войны . . . . . 103 (111)

## **ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ**

*А. Л. Кинакцян, Г. Н. Енгибарян.* Развитие института государственной тайны в Армении в историческом измерении . . . . . 113 (121)

## **ВОЕННАЯ ТЕРМИНОЛОГИЯ**

*Л. Ж. Хачатрян.* Некоторые принципы образования военных терминов в армянском языке . . . . . 123

*Н. С. Мкртчян, Л. Г. Папикян, Д. С. Чилингарян.* Словарь номера . . . . . 126 (128)

## **НАУЧНО-КОНСУЛЬТАЦИОННЫЙ СОВЕТ:**

- Р. В. Агузумцян,* кандидат психологических наук, доцент;  
*Н. У. Аракелян,* академик НАН РА;  
*В. М. Арутюнян,* академик НАН РА;  
*Г. Е. Багдасарян,* академик НАН РА;  
*Г. А. Геворкян,* академик НАН РА;  
*Р. Г. Геворкян,* доктор геологических наук, профессор;  
*А. А. Манташян,* академик НАН РА;  
*Э. Г. Минасян,* доктор исторических наук, профессор;  
*М. М. Мириджянян,* доктор медицинских наук, профессор;  
*К. С. Мосоян,* доктор технических наук, профессор;  
*В. С. Саркисян,* академик НАН РА;  
*А. С. Сисакян,* доктор медицинских наук, профессор;  
*Ю. С. Чилингарян,* академик НАН РА

# «HAIKAKAN BANAK» («ARMENIAN ARMY»)

DEFENSE-ACADEMIC JOURNAL,  
DRASTAMAT KANAYAN INSTITUTE FOR NATIONAL STRATEGIC STUDIES,  
MINISTRY OF DEFENSE, REPUBLIC OF ARMENIA

№ 4(66). 2010

Is published 4 times a year

## EDITORIAL BOARD

*Kotanjian H. S.*, Doctor of Political Sciences (RF), Fellow Member,  
Russian Academy of Military Sciences, Counterterrorism Fellow (USA) (Chairman),  
*Chilingaryan D. S.* (Editor-in-Chief), *Apremov E. A.*,  
*Avetisyan V. P.* (Deputy Editor-in-Chief), *Babayan N. M.*, *Davtyan A. M.*,  
*Gasparyan T. Sh.*, *Gasparyan V. S.*, *Idynyan R. A.*, *Isakhanyan M. R.*,  
*Karapetyan M. N.*, *Karapetyan M. S.*, *Khachatourov Yu. G.*,  
*Margaryan V. H.* (Deputy Editor-in-Chief), *Martirossyan S. S.*, *Martirossov L. A.*,  
*Matevosyan I. Zh.*, *Mirzabekyan A. R.*, *Nazaryan A. S.*, *Parsadanyan A. M.*,  
*Sedrakyan S. G.*, *Ter-Grigoryants N. G.*, *Tonoyan D. E.*, *Tounyan V. V.*

## CONTENTS

### THE DEFENSE REFORMS OF THE REPUBLIC OF ARMENIA: ECONOMIC SUPPORT

- V. N. Avetisyan.* Some issues of implementing and developing the program budgeting system in the RA Ministry of Defense . . . . . 9 (21)\*
- A. R. Gevorkyan.* The economic premises for the defense reforms in the Republic of Armenia . . . . . 23 (28)
- V. B. Terteryan.* The activity of local self-governments in the sphere of defense organization . . . . . 29 (34)
- V. V. Tunyan.* Purchases as important tools of logistics support to the defense reforms . . . . . 35 (40)
- M. A. Parvanyan.* The legal bases of economic support of the RA defense system . . . . . 41 (50)
- M. R. Isakhanyan, A. R. Tovmasyan.* The notion and tasks of the war economy science in the context of the RA defense reforms . . . . . 51 (56)

### OPERATIVE ART

- Kh. T. Khachatryan, V. B. Baghdasaryan.* Camouflaging and maneuvering as an important means of keeping fighting efficiency of the Air Defense System . . . . . 57 (61)

### ARMAMENT AND MILITARY EQUIPMENT

- A. P. Nazaretyan.* Geophysical weapon in the context of Ecological Security of the Republic of Armenia . . . . . 62 (74)

---

\* Numbers in brackets mean the page of the text in English.

#### **MILITARY LAW**

*K. A. Brutyan.* Some issues on criminal responsibility for the unauthorized abandonment of the military unit and desertion . . . . . 75 (82)

#### **MILITARY TOPOGRAPHY**

*S. A. Sujyan.* The role and significance of military geography in the troops' topogeodesic support . . . . . 83 (88)

#### **MILITARY MEDICINE**

*L. H. Hovhannisyán.* The hygienic characteristics of physical development of the RA Armed Forces compulsory draftees . . . . . 89 (95)

#### **MILITARY PSYCHOLOGY**

*V. H. Margaryan.* To the issue of the correlation of psychological factors determining the efficiency of combat activities . . . . . 96 (102)

#### **ECOLOGICAL SECURITY**

*A. M. Shahverdyán.* The destructive effect of war on the nature. Enemy's ecosystem as a war target . . . . . 103 (112)

#### **INFORMATION SECURITY**

*A. L. Kinaktsyan, G. N. Yengibaryan.* The development of the Institute of State Secret in Armenia in the historical dimension . . . . . 113 (122)

#### **MILITARY TERMINOLOGY**

*L. Zh. Khachatryan.* Some principles of forming military terms in the Armenian language . . . . . 123

*N. S. Mkrtychyan, L. H. Papikyan, D. S. Chilingaryan.* Volume Dictionary . . . . . 126 (129)

#### **SCIENTIFIC-ADVISORY COUNCIL:**

*R. V. Aghouzoumstian,* Candidate of Psychological Sciences, Docent;

*N. H. Arakelian,* Full Member, NAS RA;

*G. Y. Baghdassarian,* Full Member, NAS RA;

*Y. S. Chilingarian,* Full Member, NAS RA;

*H. A. Gevorkian,* Full Member, NAS RA;

*R. G. Gevorkian,* Doctor of Geological Sciences, Professor;

*V. M. Haroutyunian,* Full Member, NAS RA;

*A. H. Mantashian,* Full Member, NAS RA;

*E. G. Minasyan,* Doctor of Historical Sciences, Professor;

*M. M. Miridjanian,* Doctor of Medical Sciences, Professor;

*K. S. Mossoyan,* Doctor of Technical Sciences, Professor;

*V. S. Sargsian,* Full Member, NAS RA;

*H. S. Sissakian,* Doctor of Medical Sciences, Professor



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.  
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

**ОБОРОННЫЕ РЕФОРМЫ  
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ:  
ЭКОНОМИЧЕСКОЕ ОБЕСПЕЧЕНИЕ**

**THE DEFENSE REFORMS  
OF THE REPUBLIC OF ARMENIA:  
ECONOMIC SUPPORT**



ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ  
ԾՐԱԳՐԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻ  
ՆԵՐԴՐՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ

Վ. Ն. ԱՎԵՏԻՍՅԱՆ, ԹՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական,  
ՀՀ ՊՆ Ֆինանսաբյուջետային և պլանավորման վարչության պետ



Ժամանակակից շուկայական տնտեսության պայմաններում պետական ծախսերի կառավարումը պետության ֆիսկալ քաղաքականության կարևոր բաղադրիչն է, իսկ դրա արդյունավետության մեծացումը՝ կառավարության գլխավոր խնդիրներից մեկը: Այս հանգամանքը պայմանավորված է, մի կողմից, տնտեսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում պետության սոցիալական, տնտեսական, պաշտպանական և այլ գործառնությունների առավելագույն արդյունավետ իրականացման, մյուս կողմից՝ տնտեսական երևույթների վրա պետության ազդեցության լծակների արդյունավետ ու տեղին կիրառման անհրաժեշտությամբ:

Միջազգային փորձը վկայում է, որ հնարավոր չէ պետական ծախսերի արդյունավետությունը մեծացնել միայն կառավարչական տեխնոլոգիաների կատարելագործմամբ: Անհրաժեշտ է բյուջետային գործընթացի համակարգային բարեփոխում: Պետական ծախսերի կառավարման լավագույն փորձի վերլուծությամբ առաջ է քաշվել ծրագրային բյուջետավորման, կամ արդյունքի հիման վրա բյուջետավորման, գաղափարը<sup>1</sup>:

Ծրագրային բյուջետավորման էությունը կատարված ծախսերի և այդ ծախսերի կատարումից սպասվող արդյունքների փոխկապվածությունն է<sup>2</sup>: Ծրագրային բյուջետավորման հիմնական հատկանիշներն են մատուցվող ծառայությունների և արդյունքների թափանցիկությունն ու հաշվետվականությունը, որոնց դեպքում պետական բյուջեի միջոցների հաշվին մատուցվող ծառայությունների, ինչպես նաև պետական մարմինների գործունեության ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշները համարվում են նույնքան կարևոր, որքան ֆինանսական ցուցանիշները: Դա նշանակում է, որ պետական մարմինների ղեկավար պաշտոնյաները բյուջետային ռեսուրսների օգտագործման համար հաշվետու են ոչ միայն ֆինանսական արդյունքների, այլև տվյալ պետական մարմնի կողմից մատուցվող կամ գնվող ծառայությունների և ոչ ֆինանսական արդյունքների

<sup>1</sup> Տես «Обзор международного опыта внедрения бюджетирования, ориентированного на результат» (<http://www.rostu-comp.ru/content/view/143/>):

<sup>2</sup> Տես Լ. Բաղսյան, Կ. Աբգարյան, Ա. Սալնազարյան և ուրիշներ, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ: Գաաագիրք: Ե., 2007, էջ 202–203:

համար՝ դրանց պլանավորման, հաշվետվության և մշտագնման (մոնիտորինգ) միջոցով: Մինևույն ժամանակ, ոչ ֆինանսական արդյունքների մասին տեղեկությունները հաշվի են առնվում բյուջետային հատկացումների վերաբերյալ որոշումների կայացման ժամանակ<sup>3</sup>: ՌԻստի բյուջետային ծրագիրը չի մնում որպես փաստաթուղթ միայն ֆինանսիստների համար, այլ դառնում է կարևոր գործիք որոշում կայացնողների համար և բնութագրում տարաբնույթ հարաբերությունների համակարգը:

Կարևորելով վերոգրյալը՝ ՀՀ-ն մույնպես ձեռնամուխ է եղել բյուջետային բարեփոխումների՝ ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման ճանապարհով: Այդ նպատակով պետությունը համագործակցում է Գերմանիայի Տեխնիկական համագործակցության ընկերության հետ: 2008 թ. ՀՀ կառավարությունն ընդունել է «ՀՀ պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման» հայեցակարգ, որով նախատեսվում է այս գործընթացում ներգրավել հանրապետության բոլոր գործադիր մարմինները<sup>4</sup>: Բնականաբար, պաշտպանության նախարարությունը ևս անմասն չէ այդ գործընթացին:

Վերջին երկու տարվա ընթացքում պաշտպանական բարեփոխումների շրջանակներում նախապատրաստական աշխատանքներ են տարվում ծրագրային բյուջետավորման բարեփոխումների, այդ թվում՝ պլանավորման և բյուջետավորման գործընթացների կատարելագործման, միջոցով պաշտպանական ծախսերի կառավարման արդյունավետությունը մեծացնելու ուղղությամբ, ինչը ռեսուրսների օպտիմալ կառավարման շնորհիվ կնպաստի պաշտպանական բարեփոխումների համար ավելի հաստատուն ֆինանսատնտեսական հիմքերի ստեղծմանը: Պաշտպանության նախարարության համակարգում ծրագրային բյուջետավորմանը նպատակաուղղված բարեփոխումների կարևորությունը շեշտելու համար հարկ ենք համարում նշել դրանց երկու էական առանձնահատկությունները.

– ՀՀ պաշտպանական ծախսերը մեծ տեսակարար կշիռ ունեն ՀՀ պետական բյուջեի ծախսային մասում<sup>5</sup>,

– պաշտպանական ծախսերի մեծ մասը ներկայումս գաղտնի է և չի վերահսկվում հասարակության կողմից:


<sup>3</sup> Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 2.8: Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ» (ՄՁՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը») ([http://minfin.am/up/prdas/Paper%202.8\\_How%20to%20define%20P&P%20Action\\_arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%202.8_How%20to%20define%20P&P%20Action_arm.pdf)):

<sup>4</sup> Տես «ՀՀ կառավարության 2008 թ. նոյեմբերի 27-ի նիստի «Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» հմ. 48 արձանագրությունից քաղվածք» (<http://minfin.am/up/prborenq/28380002.pdf>):

<sup>5</sup> Տես, օրինակ, «Հայաստանի Հանրապետության 2011 թվականի բյուջեի մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 9-ի հմ. ՀՕ-176-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 65 (799)):

Միևնույն ժամանակ, ՊՆ համակարգում ծրագրային բյուջետավորման ներդրումը դեռևս գտնվում է սաղմնային վիճակում: Ուստի մենք նպատակ ունենք վերլուծելու տվյալ գործընթացի հիմնական փուլերը և ուղղությունները՝ նշելով առկա հնարավորություններն ու հիմնական խոչընդոտները և ներկայացնելով վերջիններիս վերացման վերաբերյալ առաջարկություններ:

Ծրագրային բյուջետավորման փուլերը սերտորեն փոխկապված են և ունեն փուլաշրջանային բնույթ (տես նկ. 1):



Նկ. 1. Բյուջետային ծրագրման փուլերը

**Ռազմավարական պլանավորման փուլում** ըստ պաշտպանական համակարգի սահմանված առաքելությունների կատարվում են կանխատեսումներ և մշակվում է համապատասխան ռազմավարություն՝ զարգացման գերակայությունների, հիմնական նպատակների, դրանց հասնելու համար ռեսուրսների բաշխման հիմնական ուղղությունների նախանշմամբ<sup>6</sup>: Հաշվի առնելով մասնագիտական գրականության մեջ ներկայացված հիմնական մոտեցումը<sup>7</sup>, կարող ենք առանձնացնել պաշտպանական համակարգի ռազմավարական պլանավորման հետևյալ մակարդակները. «Ազգային անվտանգության ռազմավարություն»– «Ռազմական դրկտրին»–պաշտպանական համակարգի նպատակների և գերակայությունների սահմանում–պաշտպանության նախարարության նպատակների սահմանում–այդ նպատակներին հասնելու համար ռեսուրսների բաշխման հիմնական ուղղություններ, ընդամին այդ ուղղությունները սահմանվում են միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ՄԺԾԾ): Ռազմավարական պլանավորումը կատարվում է պետական կառավարման համապատասխան մակար-

<sup>6</sup> Տես «Մենեջմենտ», դասագիրք, հրատ. 2: Յու. Մ. Սուվարյանի ընդհանուր դեկլարությամբ և խմբագրությամբ: Ե., 2002, էջ 89–92:

<sup>7</sup> Տես Ե. Կ. Кузык, В. И. Кушлин, Ю. В. Яковец. Прогнозирование, стратегическое планирование и национальное программирование. Учебник, изд. 2. М., 2008, сс. 289–298:

դակներում, և պաշտպանության նախարարությունը հիմնականում պատասխանատու է վերջին երկու ռազմավարությունների մշակման համար: Այս գործընթացն իրականացվում է պաշտպանության նախարար–ոլորտները համակարգող փոխնախարարներ–ոլորտների համար պատասխանատու ստորաբաժանումներ շղթայով՝ վերից վար և հակառակը:

Քանի որ ծրագրային բյուջետավորման հիմքում դրված է նախանշված արդյունքներին հասնելու պայմանը, այս փուլում կարևոր է պաշտպանության նախարարության համակարգի «նպատակների ծառի» ճիշտ կառուցումը: Այս տեսակետից անհրաժեշտ է ապահովել\*:

• ստորաբաժանումների կողմից մշակվող ոլորտային ռազմավարությունների համապատասխանությունը պաշտպանության նախարարության ընդհանուր ռազմավարությանը,

• ռազմավարական պլանավորում իրականացնող պաշտոնատար անձանց պատասխանատվության մակարդակի խստիվ սահմանումը,

• ստորաբաժանումներում գործառույթների հստակ տարանջատումը,

• պաշտպանական ռազմավարության համատեքստում ոլորտային ռազմավարությունների գերակայությունների համակարգային համաձայնեցումն ու դրանց առաջնահերթությունների ճշգրիտ որոշումը, հակառակ դեպքում դա կարող է հանգեցնել ՄԺԾԾ մակարդակում ռեսուրսների բաշխման ուղղությունների ոչ ճիշտ համամասնության սահմանմանը:

**Բյուջեի պլանավորման փուլում** կատարվում է ռազմավարական պլանավորման ժամանակ սահմանված նպատակների հստակեցում, նախանշվում են այդ նպատակներից բխող ենթանպատակները, դրանց հասնելու համար անհրաժեշտ միջոցառումները և վերջիններիս իրականացման համար պահանջվող ռեսուրսները: Այս գործընթացը կարելի է ներկայացնել հետևյալ շղթայի տեսքով՝ ծառայություններ – քաղաքականության միջոցառումներ – ծրագրեր → վերջնական արդյունքներ\*\*:

Տվյալ համատեքստում բյուջեի մշակման ռազմավարությունը ներառում է հետևյալ տարրերը<sup>8</sup>.

- *գերակա վերջնական արդյունքների սահմանում և համաչայնեցում,*
- *քաղաքականության միջոցառումների այլընտրանքային քննարկում:*

\* Ստորաբաժանումների կարողությունների մասին եզրակացությունները արված են ծրագրային բյուջետավորման համատեքստում:

\*\* Պարզության համար նշված են միայն ծառայությունները, թեև, ինչպես կերևա հետագա շարադրանքից, այս մակարդակում, բացի ծառայություններից, կան նաև այլ միջոցառումներ:

<sup>8</sup> Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: Բյուջետավորման համակարգի առաջարկվող մոտեցման և ծրագրային նոր փաստաթղթերի նկարագրությունը» (ՄՁՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը») ([http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2\\_arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf)):

Գերակա արդյունքների ուրվագծման գործընթացը քննարկվել է ռազմավարական պլանավորման փուլում:

Քաղաքականության միջոցառումները ներառում են նախարարությունների կամ պետական այլ կազմակերպությունների կողմից մատուցվող ծառայություններ, տրանսֆերտներ, ֆինանսավորման ծախսեր, ոչ ֆինանսական ակտիվներից առնչվող (կապիտալ) ծախսեր: Պաշտպանության նախարարության համակարգում քաղաքականության միջոցառումների այլընտրանքների քննարկումն ու համաձայնեցումը կատարվում են պաշտպանության նախարարի մակարդակով՝ յուրաքանչյուր տարվա սկզբին ստորաբաժանումների գործունեության պլանների հաստատմամբ, թեև բյուջեն պլանավորվում է նախորդ տարվա ընթացքում<sup>9</sup>:

Քաղաքականության՝ միմյանց առնչվող միջոցառումները խմբավորվում են մեկ ծրագրում, ինչը միտված է սահմանված վերջնական արդյունքի, կամ նպատակի, ապահովմանը: ՌԻստի կարևորվում է ոչ ֆինանսական ցուցանիշների ճիշտ պլանավորումը, որոնք և դրված են վերջնական արդյունքներին հասնելու աստիճանի որոշման հիմքում: Ծառայությունների և քաղաքականության մյուս միջոցառումների պլանավորմանը ենթակա ոչ ֆինանսական ցուցանիշներն են<sup>10</sup>․

- քանակական ցուցանիշները, որոնք կանխորոշում են քանակը կամ ծավալը,
- որակական ցուցանիշները, որոնք ցույց են տալիս համապատասխանությունը որոշակի ստանդարտին,
- ժամկետայնության ցուցանիշները, որոնք բնորոշում են մատուցվող ծառայությունների շահառուների կարիքներին արագ և ժամանակին արձագանքելու աստիճանը:

Այս առումով խիստ կարևոր են՝

- ոչ ֆինանսական ցուցանիշների իրատեսական և օպտիմալ պլանավորումը,
- ծառայությունների և քաղաքականության մյուս միջոցառումների այն ցուցանիշների մշակումը, որոնք ցույց կտան նշվածների ուղղակի կամ անուղղակի կապը վերջնական արդյունքների հետ և կհիմնավորեն դրանց իրականացման անհրաժեշտությունը,
- առաջադրված նպատակները բնութագրող մշակված և սահմանված ցուցանիշներին չհասնելու հետ կապված ռիսկերի կանխատեսումը և դրանց կանխարգելման գործիքարանի նկարագրությունը<sup>11</sup>,

<sup>9</sup> Տես «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հունիսի 24-ի հմ. ՀՕ-197 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 18):

<sup>10</sup> Տես «Գերատեսչության տարեկան բյուջետային ծրագրերի (Գ-ի րր 3-ի) լրացման մեթոդական ձեռնարկ» ([http://minfin.am/up/prdas/Paper%202.7%20Doc%203%20manual\\_final\\_Arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%202.7%20Doc%203%20manual_final_Arm.pdf)):

<sup>11</sup> Ռիսկերի գնահատման որոշ տարրեր ներդրված են արդեն ՄԺԾԾ մակարդակում (տես «Հայաստանի Հանրապետության օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների,

➤ այն ֆինանսական պարամետրերների սահմանումը, որոնց շրջանակում պետք է ֆինանսավորվեն քաղաքականության միջոցառումները:

Ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում հատկացումները պետք է հաստատվեն քաղաքականության միջոցառումների մակարդակում<sup>12</sup>, ինչի շնորհիվ բյուջեի պլանավորումը և ծախսերի կառավարումը դառնում են ավելի ճկուն: Այս իմաստով կարևորվում է այն հանգամանքը, որ բյուջեի պլանավորումը իրականացվելու է վերից վար, այսինքն՝ Կառավարության կողմից սահմանվելու են ազդեցացված ցուցանիշներ՝ սահմանաչափեր, իսկ գերատեսչությունները հարաբերական ինքնուրույնություն են ունենալու այդ որոշված սահմանաչափերի շրջանակում<sup>13</sup>: Ուստի մեծ նշանակություն է ստանում ՄԺԾԾ-ն, որը հանդես է գալիս որպես ռազմավարական պլանավորման գործիք: Այս մակարդակում ՄԺԾԾ-ն պետք է կենտրոնացած լինի գերակայությունների և ըստ դրանց՝ ռեսուրսների ընդհանուր բաշխման վրա: Այստեղ կարևորն այն է, որ ստորաբաժանման ղեկավարները դառնում են «պատվիրատու» և «կառավարիչ», այսինքն՝ նրանք, մի կողմից, ձգտում են գնումներն իրականացնելու հնարավորինս նվազագույն գներով, մյուս կողմից՝ ցանկանում են պլանավորման գործընթացում իրենց ստորաբաժանման գործառույթների իրականացման համար ապահովել ռեսուրսների ձեռքբերման հիմքերը: Ուստի անհրաժեշտ են ճիշտ կանխատեսում և գնագոյացման հաշվարկման մեթոդների ճիշտ ընտրություն:

Վերը շարադրվածից հետևում է, որ բյուջեի պլանավորման փուլում կարող են ի հայտ գալ հետևյալ հիմնական խոչընդոտները.

- քաղաքականության միջոցառումների ու ծառայությունների համաձայնեցման և հաստատման գործընթացը ժամանակային առումով չի համընկնում բյուջեի պլանավորման հետ,

- օպտիմալ ոչ ֆինանսական ցուցանիշների մշակման փորձը բավարար չէ,
- չկան համապատասխան որակական ստանդարտներ,
- մշակված չէ վերջնական արդյունքների հետ ծառայությունների ու քաղաքականության մյուս միջոցառումների համահարաբերակցական կապը արտահայտող ցուցանիշների համակարգը,

Հայաստանի Հանրապետության դատախազության, Հայաստանի Հանրապետության օրենքներով ստեղծված մշտապես գործող մարմինների կողմից 2012–2014 թվականների միջնաժամկետ ծախսերի ծրագրի հայտերի և 2012 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտերի կազմման և դրանք Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն ներկայացման մեթոդական ցուցումներ» (<http://minfin.am/up/mtefg/2.Metwdcu.pdf>):

<sup>12</sup> Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 2.8: Ծրագրերի և քաղաքականության միջոցառումների ձևակերպման ձեռնարկ» ([http://minfin.am/up/prdas/Paper%202.8\\_How%20to%20define%20P&P%20Action\\_arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%202.8_How%20to%20define%20P&P%20Action_arm.pdf)):

<sup>13</sup> Տես «Базовая модель программного бюджетирования и классификация программ». М., май 2010 г. (<http://info.minfin.ru/files/%C3%CF/%C0%ED%E0%EB%E8%F2%E8%F7%E5%F1%EA%E8%E5%20%EC%E0%F2%E5%F0%E8%E0%EB%FB/%CA%EB%E0%F1%F1%E8%F4%E8%EA%E0%F6%E8%FF%20%EF%F0%EE%E3%F0%E0%EC%20%E8%20%EA%EE%ED%F6%E5%EF%F6%E8%E8%20%EC%EE%E4%E5%EB%E8.pdf>):



- ռիսկերի կանխատեսման և դասակարգման փորձը բավարար չէ,
- չկա գնագոյացման բազմազործոն համակարգ:

**Բյուջեի մասին օրենքի ընդունման փուլի** հիմնական առանձնահատկություններն են՝ բյուջեի հաստատումն ըստ քաղաքականության միջոցառումների և ծրագրերի միասնական դասակարգումը<sup>14</sup>: Այս փուլն իրականացվում է ԱԺ – Կառավարություն մակարդակում:

**Բյուջեի կատարման փուլը** կարելի է բաժանել միմյանց հետ սերտորեն կապված փոխյրացնող երկու՝ բյուջետային հատկացումների և բյուջեով նախատեսված միջոցառումների կատարման ենթափուլերի: Հարկ է նշել, որ ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում էլ կատարման նկատմամբ ընդհանուր մոտեցումը չի փոխվի<sup>15</sup>: Բյուջետային հատկացումները կատարվում են հաստատված բյուջեներին համապատասխան՝ սահմանված համամասնություններով<sup>16</sup>:

Բյուջեով նախատեսված միջոցառումների կատարումը ներառում է<sup>17</sup>.

- *սահմանված ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ռեսուրսների որոշարկում, այնուհետև այդ ռեսուրսների ձեռքբերում գնումների վերաբերյալ Կառավարության քաղաքականությանը և անչնակազմին համապատասխան: ՀՀ-ում գնումների քաղաքականության մեջ տեղի են ունեցել սկզբունքային դրական փոփոխություններ, մասնավորապես՝ պատվիրատուն, եթե չի կարողանում հստակ կերպով կանխորոշել ֆինանսական ռեսուրսների չափերը, կարող է նախքան ֆինանսական միջոցների նախատեսումը կնքել պայմանագիր, և, ռազմական բնույթի կամ ուղղակիորեն դրան վերաբերող ռեսուրսներից բացի, այլ ռեսուրսների ձեռքբերումը պետք է կատարվի բաց մրցույթով (բաց ընթացակարգով)*<sup>18</sup>,

- *ծառայությունների «արտադրության» համար անհրաժեշտ գործընթացների նախագծում կամ/և վերանախագծում՝ «արտադրական» արդյունավետությունը առավելագույնի հասցնելու նպատակով: Ենթադրվում է պատասխա-*

<sup>14</sup> Տես «Պետական բյուջեի մասին օրենքի նոր ձևաչափի (Գ-իքը 1-ի) լրացման մեթոդական ձեռնարկ» ([http://minfin.am/up/prdas/Paper%202.5%20Doc%201%20manual\\_revised\\_final\\_Arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%202.5%20Doc%201%20manual_revised_final_Arm.pdf)):

<sup>15</sup> Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: ...» ([http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2\\_arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf)):

<sup>16</sup> Տես ՀՀ կառավարության 2002 թ. հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» հմ. 48 որոշումը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 6 (181)):

<sup>17</sup> Տես «Կառավարությանը փոխանցվող փաստաթղթերի փաթեթ: Փաստաթուղթ 1.1: ՀՀ Կառավարության ծրագրային բյուջեի ձևաչափ: ...» ([http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2\\_arm.pdf](http://minfin.am/up/prdas/Paper%201.1%20Revised%20Budget%20DesignV2_arm.pdf)):

<sup>18</sup> Տես «Գնումների մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-206-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 69 (803)):

նատուների սահմանում ըստ մատուցվող ծառայությունների: Ինչպես վկայում է միջազգային փորձը, ծրագրային բյուջետավորման ներդրման դեպքում նպատակահարմար է ծառայությունների, քաղաքականության միջոցառումների և ծրագրերի համար սահմանել կոնկրետ պատասխանատու պաշտոնյաների<sup>19</sup>:

• *Ծառայությունների մատուցման («արտադրության») կառավարում (մուլթերի և արտադրական գործընթացների օգրագործում սահմանված ծառայությունների «արտադրության» համար):* Տվյալ գործընթացի արդյունավետ կառավարումն իրականացվում է ֆինանսական տեղեկատվության ճիշտ խմբավորման, դասակարգման և ձևակերպման միջոցով: Տեղեկույթի բազմազանության պարագայում ծրագրային բյուջետավորման համակարգը ենթադրում է ավտոմատացված համակարգերի ներդրում՝ կառավարման համակարգի արդյունավետության մեծացման նպատակով:

• *Ծառայությունների մատուցման գործընթացի մշտազննում՝ համոզվելու համար, որ սահմանված ծառայությունները մատուցվում («արտադրվում») են ժամանակին, անհրաժեշտ որակով ու զուտարով և մատուցվում են նախատեսված շահառուին:*

Ըստ այդմ՝ պաշտպանության նախարարության բյուջեի կատարման փուլում արդյունավետության մեծացմանը կարող են էապես նպաստել՝

- ծրագրեր – քաղաքականության միջոցառումներ – ծառայություններ շղթաներում կոնկրետ պատասխանատու պաշտոնյաների սահմանումը<sup>20</sup>,
- հաշվապահական հաշվառման արդի համակարգի ձևավորումը,
- ռեսուրսների կառավարման ավտոմատացված համակարգերի ներդրումը:

**Մշտազննման փուլ:** Մշտազննման նպատակն է օբյեկտի ընթացիկ վիճակի և շեղումների վերաբերյալ տեղեկույթի անընդհատ մատակարարումը<sup>21</sup>: Պաշտպանության նախարարության բյուջեի մշտազննումը պետք է ներառի ռեսուրսների օգտագործման և նախանշված արդյունքների կատարողականի վերաբերյալ նորմատիվային, պլանային, հաշվապահական ու վերլուծական բնույթի տեղեկատվություն, ինչպես նաև հայտնաբերված շեղումների օպերատիվ վերացման հնարավորություն:

<sup>19</sup> Տես «Программный бюджет: цели, классификация и принципы построения» ([http://www.nifi-abik.ru/nifi/info/p701\\_018.pdf](http://www.nifi-abik.ru/nifi/info/p701_018.pdf)):

<sup>20</sup> Նման գործառնություններ սահմանվում են պետական հիմնարկի կանոնադրությամբ (տես ՀՀ Կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Զինված ուժերի Գլխավոր շտաբի, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և ՀՀ Պաշտպանության նախարարության բնիչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «ՀՀ Պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և ՀՀ Պաշտպանության նախարարության բնիչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշում, հոդ. 29 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 2 (668)):

<sup>21</sup> Տես «Современный экономический словарь», под ред. Б. А. Райзберга, изд. 6. М., 2008, с. 244:

Մշտագնման արդյունավետության ապահովման հիմնական երաշխիքներն են՝

- բոլոր ստորաբաժանումների համար համապատասխան գործառույթի նախատեսումը,

- մշտագնման համակարգի ձևավորումն ու մեթոդների մշակումը:

**Հաշվետվության և աուդիտի փուլում** իրականացվում են գործունեության ցուցանիշների ներկայացում ու վերլուծություն, շեղումների հայտնաբերում և դրանց առաջացման պատճառների պարզում: Ստացվող տվյալները հիմք են ծառայում ռազմավարության մեջ համապատասխան ճշգրտումներ կատարելու համար: Ընդհանուր առմամբ, պաշտպանական ծախսերի վերլուծությունը հնարավորություն կտա եզրակացություններ անելու իրականացվող քաղաքականության ուղղությունների, այլ պետական մարմինների և կազմակերպությունների հետ փոխհարաբերությունների վերաբերյալ<sup>22</sup>:

Հաշվետվությունը որոշակի հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական վիճակի նկարագիրն է<sup>23</sup>: Ծրագրային բյուջետավորման ձևաչափը ինքնին պարտադրում է արդյունավետության մակարդակի որոշման համար վերլուծություններ: Ծրագրային բյուջետավորման համակարգը ենթադրում է արդյունավետության գնահատում ըստ երեք հիմնական պարամետրների՝ տեխնիկական, որը ներկայացնում է ուղղակի արդյունքների և մուտքերի հարաբերակցությունը, նպատակային, որը բնորոշում է, թե ուղղակի արդյունքների տրամադրման միջոցով որքանով են իրագործվել ցանկալի վերջնական արդյունքները, կամ նպատակները, և ֆինանսական, որը ցույց է տալիս, թե որքանով են ծախսերը փոխակերպվում ցանկալի արդյունքների<sup>24</sup>: Վերլուծությունները կարևոր են այն առումով, որ առանց ճշգրիտ պատկեր ունենալու հնարավոր չէ կատարել համապատասխան կանխատեսումներ և մշակել ռազմավարություն<sup>25</sup>:

Ընթացիկ վերլուծություններին հաջորդում է վերջնական վերահսկողությունը, որի կարևոր գործիքն է աուդիտը: Կատարվում է ծախսերի օրինակառությունն ստուգելու, կատարված վերլուծությունների մեթոդաբանությունը գնահատելու և ռեսուրսների արդյունավետ օգտագործման հնարավորությունները պարզելու նպատակով<sup>26</sup>:

**Հաշվետվության և աուդիտի ասպարեզում պաշտպանության նախարարության հիմնական խնդիրներն են՝**

- կատարելագործել հաշվետվականության գործող համակարգը, որը ներ-

<sup>22</sup> Տես «Анализ экономики», под ред. В. Е. Рыбалкина. М., 1999, сс. 58—61:

<sup>23</sup> Տես К. К. Арабян. Анализ бухгалтерской (финансовой) отчетности внешними пользователями. М., 2008, сс. 16—18:

<sup>24</sup> Տես «Ոչ ֆինանսական արդյունքների ցուցանիշների սահմանումը»: ՈՒԷցույց-ձեռնարկ ծրագրային բյուջետավորման փորձարարական պետական մարմինների համար (ՄՋՆ ծրագիր. «Աջակցություն Հայաստանում ծրագրային բյուջետավորման ընդլայնմանը»), 2007 թ. ապրիլ:

<sup>25</sup> Տես Роберт Грант. Современный стратегический анализ. М., 2008, сс. 64—66:

<sup>26</sup> Տես В. П. Суяц, В. А. Ситникова. Аудит. М., 2008, сс. 8—10:

կայուն հիմնականում նկարագրական բնույթի է, իսկ դրա վերլուծական մասում կիրառվում են համեմատման պարզ մեթոդներ<sup>27</sup>,

- բարձրացնել անձնակազմի վերլուծական, մասնագիտական կարողությունների մակարդակը,

- ընդլայնել աուդիտի գործառույթները, որոնք այժմ սահմանափակվում են միայն միջոցների ծախսման օրինակառության ստուգմամբ:

ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման ներդրման նպատակով Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարի 2010 թ. մայիսի 4-ի հմ. 442 հրամանով հաստատվել է «ՀՀ ՊՆ համակարգում ծրագրային պլանավորման և բյուջետավորման գործընթացի ներդրման» հայեցակարգը, որի հիմքում դրված է փուլային մոտեցումը\*։ Հայեցակարգում սահմանվել են մի շարք թիրախներ<sup>28</sup>.

- հաստատութենական շրջանակի համապատասխանեցում ծրագրային բյուջետավորման համակարգի պահանջներին, մասնավորապես՝ ՀՀ ՊՆ և ՁՈՒ-ի ԳՇ ստորաբաժանումների լիազորությունների մասով,

- պաշտպանության բնագավառի ծրագրերի և համապատասխան միջոցառումների ձևակերպում, մշակում, հաստատում, մասնավորապես՝ այս գործընթացում որոշ մոտեցումների մշակում,

- բյուջեների պլանավորման գործում ներգրավված անձնակազմի կարողությունների զարգացում, մասնավորապես՝ վերապատրաստման դասընթացներ:

Կարծում ենք՝ ծրագրային բյուջետավորման ներդրման նախնական փուլում Հայեցակարգի թիրախների իրականացումը բավարար հիմքեր կստեղծի այս գործընթացի հետագա խորացման համար: Սակայն միայն Հայեցակարգով ակնկալվող արդյունքները բավարար չեն լինի ծրագրային բյուջետավորման գործում և արդյունավետ համակարգ ձևավորելու համար, քանի որ, ինչպես ցույց է տալիս սույն հոդվածում կատարված վերլուծությունը, ծրագրային բյուջետավորման ներդրմանը խոչընդոտող խնդիրները տարաբնույթ են՝ հաստատութենա-

<sup>27</sup> Տես ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008 թ. փետրվարի 4-ի «Բյուջեների կատարման, ինչպես նաև պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց ենթակա հիմնարկների ֆինանսական գործունեության հետ կապված հաշվետվությունների կազմման, ներկայացման, ամփոփման ընդհանուր պայմանները, հաշվետվությունների առանձին տեսակների կազմման ու ներկայացման առանձնահատկությունների մասին հրահանգը հաստատելու և ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2002 թվականի դեկտեմբերի 30-ի թիվ 930-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 80-Ն հրամանը («ՀՀ գերատեսչական տեղեկագիր», 2008, հմ. 8 (282)):

\* Բարեփոխումների սկզբնական փուլում աշխատանքներ են կատարվում ՀՀ Զինված ուժերի ռազմաստորոջապահական, կրթական և սոցիալական ապահովության ոլորտներում:

<sup>28</sup> Հայեցակարգով նախատեսվող միջոցառումների մասին ավելի հանգամանորեն տես ՀՀ Պաշտպանության նախարարի 2010 թ. մայիսի 4-ի «ՀՀ ՊՆ համակարգում ծրագրային պլանավորման և բյուջետավորման գործընթացի ներդրման հայեցակարգը հաստատելու մասին» հմ. 442 հրամանը:

կան, մեթոդաբանական, տեխնիկական և մասնագիտական\*։ Ուստի **առաջարկում ենք**.

*հասարարութենական խնդիրների լուծման նպատակով՝*

- նորմատիվային ակտերով սահմանել ծրագրերի և ենթածրագրերի պատասխանատուների,

- պաշտպանության նախարարության առաքելությունների և հիմնական նպատակների համատեքստում գերակայությունների և ծրագրերի համաձայնեցման նպատակով ստեղծել գերատեսչական խորհուրդ,

- հստակ կերպով սահմանել ըստ ծրագրերի արդյունքների պատասխանատվության և խրախուսման համակարգը:

*մեթոդաբանական խնդիրների լուծման նպատակով՝*

- մշակել ոչ ֆինանսական ցուցանիշների արդյունավետ և օպտիմալ համակարգ,

- մշակել ստանդարտների համակարգ և այն ենթարկել դինամիկ փորձաքննության,

- մշակել առանձին ծառայությունից կամ քաղաքականության այլ միջոցառումից մինչև պաշտպանության նախարարության ընդհանուր աշխատանքների արդյունավետության գնահատման համընդգրկուն և մասնավոր ցուցանիշներ: Նման ցուցանիշների համակարգի մշակումը և կիրառումը լայն տարածում ունեն գարգացած պետություններում<sup>29</sup>,

- մշակել ծրագրերի ռիսկերի գնահատման համակարգ, ինչը հնարավորություն կտա, մի կողմից, գնահատելու ծրագրի ակնկալվող արդյունքների ռեալությունը, մյուս կողմից՝ մշակելու կանխարգելման միջոցառումներ,

- մշակել հաշվապահական հաշվառման համակարգ, մասնավորապես՝ հրահանգագրեր, ձևաթղթեր և այլն, ներդրել հաշվապահական հաշվառման ստանդարտներ,

- մշակել մշտազննման վերաբերյալ հաշվետվության ձևեր և արդյունավետ մշտազննման մեթոդներ,

- ծրագրային բյուջետավորման արդյունավետությունը մեծացնելու նպատակով սահմանել պատասխանատու անձանց տրամադրվող տեղեկության քանակը ու ծավալը: Փորձը ցույց է տալիս, որ ինչպես անբավարար, այնպես էլ ավելորդ քանակությամբ և ոչ էական տեղեկությունների հաղորդումը հանգեցնում է ժամանակի կորստի և ոչ օպտիմալ որոշումների կայացման<sup>30</sup>,

\* Ծրագրային բյուջետավորումը ենթադրում է մեկ օրենսդրական համապատասխան փոփոխություններ, սակայն այս խնդիրը համապետական է և դուրս է սույն հոդվածի ուսումնասիրության շրջանակից:

<sup>29</sup> Տես В. М. Ржехин, Д. А. Алеканг, Н. В. Коваленко. Разработка показателей эффективности подразделений, отделов, персонала. Пошаговая инструкция. М., СПб., 2008, сс. 44—76:

<sup>30</sup> Տես «Финансовый менеджмент». Учебник. Под ред. Г. Б. Поляка, изд. 2. М., 2008, сс. 34—38:

• մշակել հաշվետվության վերլուծական ձևեր, որոնք, նկարագրական բնույթից զատ, կունենան հիմնավոր վերլուծական բաժին: Այսպիսի հաշվետվությունները իրատեսորեն են արտացոլում իրավիճակը և պարունակում են ռազմավարական կողմնորոշման համար անհրաժեշտ տարրեր<sup>31</sup>,

• մշակել աուդիտի իրականացման կարգ և ներդրել համապատասխան ստանդարտներ,

*տեխնիկական բնույթի խնդիրների լուծման նպատակով՝*

• ներդրել համակարգչային ծրագրեր՝ անհրաժեշտության դեպքում հատուկ ՊՆ-ի համար պատվեր կատարելու ճանապարհով,

• ստեղծել միասնական տեղային ցանց, ինչը համապատասխան պաշտպանվածության դեպքում անհամեմատ կբարձրացնի աշխատանքների օպերատիվության մակարդակը,

*մասնագիտական բնույթի խնդիրների լուծման նպատակով՝*

• ծրագրային բյուջետավորման գործընթացում ներգրավված անձնակազմի համար կազմակերպել սեմինարներ, քննարկումներ, ծանոթացնել կատարված սկզբունքային փոփոխություններին,

• սահմանել մասնագիտական որակավորման քննություններ\*:

Ե՛վ հայեցակարգային, և՛ առաջարկվող հեռանկարային բարեփոխումների շնորհիվ պաշտպանության նախարարության համակարգում ծախսերի կառավարման արդյունավետությունն զգալիորեն կմեծանա՝ նպաստելով պաշտպանական բարեփոխումների համալիր իրականացմանը, հետևաբար՝ նաև պետության ազգային անվտանգության ապահովմանը:

<sup>31</sup> Տես *Г. В. Савицкая. Анализ эффективности и рисков предпринимательской деятельности: методологические аспекты. М., 2008, сс. 225—242:*

\* Խոսքը չի վերաբերում հատուկ քաղաքացիական ծառայողներին, որոնք օրենքով սահմանված կարգով պարբերաբար հանձնում են նմանաբնույթ քննություններ:

## НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ВНЕДРЕНИЯ И РАЗВИТИЯ СИСТЕМЫ ПРОГРАММНОГО БЮДЖЕТИРОВАНИЯ В МИНИСТЕРСТВЕ ОБОРОНЫ РА

*В. Н. АВЕТИСЯН, Государственный советник 2-го класса СГС, начальник Финансово-бюджетного и планового управления МО РА*

### РЕЗЮМЕ

В условиях современной рыночной экономики важной составляющей фискальной политики государства является управление государственными затратами, повышение эффективности которого одна из главных задач правительства. Анализ международного опыта в данной сфере показывает, что наиболее успешным средством решения этой задачи является внедрение системы программного планирования и бюджетиро-

вания, суть которой заключается во взаимосвязи произведенных расходов и ожидаемых от них результатов. При программном бюджетировании, обеспечивающем прозрачность и отчетность оказываемых услуг и их результатов, нефинансовые показатели результатов услуг за счет госбюджета и деятельности государственных органов оказываются такими же важными, как финансовые.

В статье анализируются основные этапы и направления процесса внедрения программного бюджетирования с указанием наличествующих реальных возможностей и главных препятствий, приводятся предложения по преодолению последних.

Основными этапами программного бюджетирования являются стратегическое планирование, планирование бюджета, принятие закона о бюджете, исполнение бюджета, мониторинг, отчет и аудит, которые тесно взаимосвязаны и имеют циклический характер.

Основными направлениями внедрения в МО РА системы программного бюджетирования, указанными в утвержденной Министром Обороны РА Концепции внедрения в системе МО РА процесса программного планирования и бюджетирования, являются институциональное (приведение институциональных рамок в соответствие с требованиями системы программного бюджетирования), методологическое (формулировка, разработка и утверждение программ и соответствующих мероприятий в сфере обороны), профессиональное (развитие возможностей личного состава, вовлеченного в процесс планирования бюджета). В статье предлагается комплекс этих направлений дополнить задачами технического характера, а также даются конкретные предложения по каждому направлению.

## SOME ISSUES OF IMPLEMENTING AND DEVELOPING THE PROGRAM BUDGETING SYSTEM IN THE RA MINISTRY OF DEFENSE

*V. N. AVETISYAN, Second-Class State Adviser of the Special Civil Service,  
Head of the Financial-Budgeting and Planning Board of the MOD, RA*

### SUMMARY

An important component of the state's fiscal policy under conditions of the contemporary market economy is the state expenses management. The increase of its efficiency is one of the main priorities of the Government. The analysis of international experience in this sphere shows that the most effective tool of solving this problem is the implementation of the program planning and budgeting system. Its kernel lies in the interrelation between the incurred expenses and their presumable results. The nonfinancial performance measures at the expense of the state budget and the state bodies' activities prove to be just as important as financial ones at the program budgeting ensuring transparency and reporting of the services being rendered and their results.

Basic stages and directions of the process of implementing the program budgeting highlighting the existing real possibilities and main handicaps are analyzed in the article. The proposals on overcoming these handicaps are given as well.

The basic stages of the program budgeting are strategic planning, budget planning, adoption of a law on the budget, budget execution, monitoring, report and audit. They are closely interrelated and are of a cyclical character.

The basic directions of implementing the program budgeting system in the MOD, RA, stated in the Concept of implementing the program planning and budgeting process in the system of the MOD, RA, which was approved by the RA Defense Minister, are: institutional (conforming the institutional frameworks with the requirements of the program budgeting system), methodological (drafting, elaborating and approving the programs and relevant measures in the defense sphere), professional (developing the scopes of the staff involved in the budget planning process). A complex of these directions is proposed to be supplemented with the tasks of a technical character in this article. Concrete proposals on each direction are given as well.



## ՀՀ-ՈՒՄ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ

Ա. Ռ. ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀՀ Էկոնոմիկայի նախարարի գլխավոր խորհրդական



Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում մշակվել և ընդունվել են պետության կենսունակության ապահովմանն ուղղված երկու հույժ կարևոր փաստաթուղթ՝ «Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ռազմավարությունը» և «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրինը»: Դրանցով սահմանվում են պետության համար առկա և հնարավոր սպառնալիքներն ու դրանց չեզոքացմանն ուղղված պետական գործունեությունը, Հայաստանի Հանրապետության կայուն և անվտանգ զարգացման ուղիները, ինչպես նաև նախանշվում են Հայաստանի Հանրապետության

Ձինված ուժերի բարեփոխումների ու արդիականացմանն ուղղված գործունեությունները՝ կարճաժամկետ ու միջնաժամկետ հեռանկարով պետության պաշտպանական ռազմավարության ու ռազմական շինարարության ձևավորմամբ:

Այսպես. «Ռազմական դոկտրինում» հստակ կերպով սահմանվում են ռազմական անվտանգության համակարգի բարեփոխումների նպատակները և խնդիրները, որոնց իրականացումը պետք է, ի թիվս այլ գործոնների, հիմնված լինի ռազմական անվտանգության համակարգի արդյունավետ ռազմատնտեսական ու ռազմատեխնիկական ապահովման վրա:

Հայաստանի պաշտպանական անվտանգության ապահովմանն ուղղված և «Ռազմական դոկտրինի» շրջանակներում նախանշված պաշտպանական բարեփոխումների իրագործման երաշխիքը համապատասխան տնտեսական հիմքերի ամրապնդումն է: Հետևաբար, հեռանկարային տնտեսական զարգացման ռազմավարությունը պետք է հնարավորություն տա արդյունավետ կերպով լուծելու դրված խնդիրը, ուղղված լինի կայուն և արագ տեմպերով տնտեսական աճի ապահովմանը: Այդ առումով ՀՀ տնտեսական զարգացման հիմնական ռազմավարական ուղղություններն են.

- ՀՀ տնտեսության մրցունակության մակարդակի բարձրացումը, որը մեծապես պայմանավորված է արտադրողականության աճի և միավոր աշխատանքի արժեքի մրցունակ մակարդակի ապահովմամբ, բարձր ավելացված արժեք ձևավորող աշխատատեղերի առկայությամբ և այլ գործոններով: Հայաստանի տնտեսության մրցունակությունը կախված է իրական հատվածում արդիականացման և նորարարությունների ներդրման հնարավորությունից: Այս առումով Հայաստանը պետք է առկա համեմատական առավելությունների հիման վրա ձևավորի մրցակցային առավելություններ,

• *արդյունաբերական քաղաքականության իրականացումը*, որը Հայաստանում ենթադրում է տեխնոլոգիական համալիրների ներմուծման խրախուսում, ՀՀ տնտեսություն վերագրային կորպորացիաների մուտք գործելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծում, գոյություն ունեցող հեռանկարային արտադրական համալիրների արդիականացում և տնտեսության իրական հատվածում պետության ակտիվ աջակցություն: Հայաստանի արդյունաբերական քաղաքականությունը ուղղվելու է տնտեսության բազմազանեցմանը (դիվերսիֆիկացիա) և արտահանման հատվածի ընդլայնմանը: Վերջինս լինելու է երկրի համաշխարհային մրցունակության մակարդակի բարձրացման գործառական նպատակը, ուստի և որոշակի ժամանակահատվածում արդյունաբերական քաղաքականությունը հիմնականում, եթե ոչ ամբողջովին, կուղղվի այդ նպատակի իրագործմանը,

• *ՀՀ տնտեսության բացության աստիճանի մեծացումը՝ համաշխարհային տնտեսությանը ինտեգրումը առաջին հերթին ենթադրում է արտահանման ծավալների մեծացում՝ արտաքին առևտրի պայմանների դյուրինացման, միջազգային ստանդարտների ներդրման և այլ եղանակներով արտահանումը խթանելու միջոցով: Այժմ Հայաստանի Հանրապետությունը Եվրամիության հետ բանակցություններ է վարում ազատ առևտրի համաձայնագրի կնքման վերաբերյալ, ինչը ենթադրում է լուրջ և հետևողական հաստատութենական բարեփոխումներ մի շարք ոլորտներում (ոչ տարիֆային կարգավորման ընթացակարգեր, ստանդարտացման և սերտիֆիկացման համակարգեր, հավատարմագրում, հեղինակային իրավունքներ, մրցակցություն, պետական գնումներ և ֆիտոսանիտարական համակարգեր և այլն): Դա ոչ միայն հնարավորություն կտա բարելավելու գործարարության ընթացակարգերը և սպառողների շահերի պաշտպանությունը, այլև իրական հիմքեր կստեղծի արտահանման ընդլայնման համար,*

• *գիտելիքի վրա հիմնված տնտեսության հիմնական հասարակությունների սրեղծումն ու զարգացումը*, ինչը ենթադրում է գիտության՝ որպես ՀՀ տնտեսական ռազմավարության կարևոր հենակետի զարգացման արդյունավետ պետական քաղաքականություն՝ ուղղված գիտական ներուժի նպատակային վերարտադրության ապահովմանը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների ներդրման գործուն համակարգի կազմակերպմանը, գիտության և կրթության ինտեգրմանը և այլ նմանատիպ ձեռնարկումների: Այս իմաստով առաջընթացի առանցքային շեշտը դրվում է Հայաստանում մարդկային կապիտալի զարգացման վրա, ինչի շնորհիվ մրցակցությունն առավելապես հիմնված կլինի արդիական տեխնոլոգիաների ներդրման կարողությունների վրա: Դա իր հերթին կհանգեցնի առանձին բնական ռեսուրսների ռազմավարական դերի նվազեցմանը և, միևնույն ժամանակ, տնտեսական առավել արդյունավետ գործունեության ծավալմանը՝ նոր արժեքների ստեղծման գործում մարդկային գործունի դերի մեծացմամբ,

• *տնտեսական գործունեության համար հավասար պայմանների սրեղ-*

ծունը ենթադրում է ազատ տնտեսական մրցակցության ապահովման և մենաշնորհների սահմանափակման քաղաքականություն՝ նպատակաուղղված բոլոր տնտեսավարող սուբյեկտների համար հավասար մրցակցային դաշտի ձևավորմանը: Հայաստանում գործարար միջավայրի բարելավման ծրագիրը ներառում է բարեփոխումներ հարկային և մաքսային վարչարարության, տեխնիկական և նորմատիվային կանոնակարգման, ներդրողների պաշտպանության և աշխատանքային հարաբերությունների կարգավորման բնագավառներում: Միևնույն ժամանակ, տնտեսության իրական հատվածում կապիտալ ներդրումների ապահովմամբ արդիականացման գործընթացները խթանելու նպատակով դրվում է ներդրումային միջավայրի շարունակական բարելավման խնդիրը: Դա վերաբերում է ՀՀ-ում գործարարության իրականացման և ներդրումների կատարման հիմնական արգելքների վերացման, ենթակառուցվածքների որակի բարձրացման, կորպորատիվ կառավարման մշակույթի զարգացման ու սկզբունքների ներդրման, մակրոտնտեսական կայունության ապահովման և այլ հիմնահարցերի,

- *տարածքային համաչափ զարգացման ապահովումը*, ինչի համար անհրաժեշտ է ՀՀ տարածքային զարգացման անհամաչափությունների համահարթեցում՝ մարզերում պետական ներդրումային ծրագրերի իրականացմամբ, տարածքային զարգացման պետական ֆինանսավորման համակարգի մշակմամբ և ներդրմամբ, տեղական ինքնակառավարման որակի բարձրացմամբ և այլ միջոցառումների իրագործմամբ: Այս ուղղությամբ վարվող քաղաքականությունը կոչված է ապահովելու հավասար կենսամակարդակ և տնտեսավարման հնարավորություններ ինչպես մայրաքաղաքում, այնպես էլ հանրապետության մարզերում: Խնդիրը անմիջականորեն կապված է երկրի ժողովրդագրական վիճակի հետ, որի բարելավման համար առաջնահերթ հարց է դրվում մարզերում ապահովելու պատշաճ մակարդակի զբաղվածություն և ստեղծելու աշխատատեղեր,

- *պեյրակյան կառավարման որակի բարձրացումը*, ինչը մեծապես պայմանավորված է կոռուպցիայի կրճատմանն ուղղված միջոցառումների իրականացմամբ, որոշումների կայացման գործում հանրային մասնակցության աստիճանի, ինչպես նաև այդ որոշումների կայացման թափանցիկության մակարդակի բարձրացմամբ:

Ելնելով վերոշարադրյալից՝ կարող ենք ձևակերպել պաշտպանական բարեփոխումների տնտեսական ապահովման հետևյալ հիմնական սկզբունքներն ու միջոցառումները՝

- երկրի սոցիալ-տնտեսական զարգացման մակրոտնտեսական կանխատեսման ցուցանիշների վրա հիմնվող ծրագրային-նպատակային մեթոդների կիրառմամբ պետության ռազմական կարիքների պլանավորման, ֆինանսավորման ու գնահատման համակարգի ձևավորում,

- պետության ռազմական կազմակերպվածքի ֆինանսական ու նյութական ապահովման մակարդակի և պետության տնտեսական հնարավորությունների ու

ռազմական անվտանգության իրական պահանջների առավելագույն համարժեքություն,

– շուկայական մեխանիզմների օգտագործմամբ ռազմատնտեսական գործընթացների կենտրոնացված պետական կառավարում,

– ռազմական անվտանգության հանգուցային խնդիրների լուծման գործում ֆինանսական, նյութատեխնիկական և մտավոր ռեսուրսների համախմբում,

– պետության ռազմական անվտանգության կարիքների համար մրցունակ և ներմուծմանը փոխարինող, առավելապես երկակի նախանշանակման տեխնոլոգիաների և արտադրության արագընթաց զարգացում,

– Հայաստանի Հանրապետության ռազմատնտեսական բնագավառը կարգավորող օրենսդրական դաշտի մշակում և կատարելագործում, պետության ռազմական անվտանգության ապահովման խնդիրների լուծման գործում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև այլ պետական կազմակերպությունների գործառույթների հստակ բաշխվածություն և համաձայնեցվածություն,

– պետական գորահավաքային պատվերի համակարգի հնարավորությունների արդյունավետ օգտագործում՝ շուկայական մեխանիզմների հաշվառմամբ,

– տնտեսության գիտատեխնիկական և արտադրական ներուժի ռացիոնալ օգտագործում, հետագա կատարելագործում և պետական աջակցություն:

Բնականաբար, կարիք է առաջանում լուրջ միջոցառումներ իրականացնելու նաև այսպես կոչված միկրոտնտեսական, կամ առանձին ձեռնարկությունների, մակարդակով՝ դրանց ցուցաբերվող պետական աջակցության և խթանման կոնկրետ ծրագրերի իրականացմամբ:

Պետական աջակցության առավել փորձված եղանակներն ու ձևերն են ռազմական նախանշանակման արտադրանք թողարկող և գորահավաքային նախապատրաստության միջոցառումներին մասնակցող ձեռնարկություններին կատարված ծախսումների ուղղակի փոխհատուցումը պետական բյուջեի միջոցներից ու հարկային արտոնությունների և արտոնյալ վարկերի տրամադրումը, դրանց ֆինանսատնտեսական վիճակի ամրապնդումը ռազմական նախանշանակման արտադրության խթանման, բազմազանեցման և վերակազմակերպման միջոցով, գորահավաքային առաջադրանքների կատարման համար նախատեսված արտադրական հզորությունների վերակառուցման և զարգացման հետ կապված կապիտալ ներդրումների, այդ թվում՝ ոչ պետական, խրախուսումը և այլն: Պարտադիր պայմաններից մեկը գորահավաքային առաջադրանք ունեցող կազմակերպությունների արտադրական գործունեության համար նյութատեխնիկական ապահովման համակարգի ներդրումն է՝ նոր տնտեսական հարաբերությունների ու կազմակերպական կառուցվածքների հաշվառմամբ:

Տնտեսական զարգացման արդի վիճակում հույժ կարևոր է բյուջետային ծախսերի առավել արդյունավետ օգտագործումը: Դրան կարելի է հասնել գործող արտադրության մեջ հիմնական ֆոնդերի ռացիոնալ օգտագործմամբ, «երկակի

նախանշանակման» հիմնական սարքավորանքի արդիականացմամբ, առավել արդյունավետ և կիրառման լայն շրջաններ ունեցող արտադրական միջոցներով ձեռնարկությունների ապահովմամբ և այլ միջոցներով:

Եվ այսպես, որպես ամփոփում՝ մեկ անգամ ևս ամրագրենք այն իրողությունը, որ կայուն տնտեսական զարգացումը ազգային անվտանգության կարևորագույն երաշխիքներից մեկն է: Հայաստանը կարող է համաշխարհաին զարգացումներին համահունչ տնտեսություն ունենալ միայն այդ խնդրի հստակ գիտակցման հիման վրա կառուցված տնտեսական քաղաքականության անշեղ և հետևողական իրագործման պարագայում: Դա կարող է ստեղծել արդեն գործնական հենք ազգային, այդ թվում՝ պաշտպանական, անվտանգության ապահովման և ազգային շահերի հուսալի պաշտպանության համար:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարություն»: «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի հատուկ թողարկում: Ե., 2007:
2. «ՀՀ ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեքստեր», 2007, հմ. 4:
3. «Научные проблемы военно-экономических исследований в переходный период». М., 2008.
4. М. А. Бендигов. Экономическая безопасность промышленного предприятия в условиях кризисного развития. «Менеджмент в России и за рубежом», 2000, № 2.

## ЭКОНОМИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ОБОРОННЫХ РЕФОРМ В РА

*А. Р. ГЕВОРКЯН, главный советник Министра экономики РА*

### РЕЗЮМЕ

Гарантией реализации оборонных реформ в РА является укрепление их экономической базы на основе стратегии перспективного экономического развития, нацеленной на обеспечение устойчивого и высокого темпа экономического роста. Приоритетными стратегическими направлениями развития экономики РА являются: повышение уровня конкурентоспособности; реализация промышленной политики, нацеленной на стимулирование внедрения технологических комплексов, привлечение транснациональных корпораций, модернизацию существующих перспективных промышленных комплексов; повышение уровня открытости экономики с углублением интегрированности в мировую экономику; создание и развитие основных институтов наукоемкой экономики с нацелом на обеспечение целевого воспроизведения научного потенциала; создание равных условий для экономической деятельности хозяйствующих субъектов с обеспечением их экономической конкуренции и ограничения монопольности; обеспечение симметричного регионального развития; повышение качества государственного управления с нацелом на борьбу с коррупцией с вовлечением гражданского общества.

Основными принципами и мероприятиями экономического обеспечения оборонных реформ являются: формирование эффективной системы планирования, финансирования и оценки военных потребностей страны; соответствие уровня финансового и материального обеспечения военной организации и экономических возможностей страны; централизованное государственное управление военно-экономическими процессами с применением рыночных механизмов; консолидация финансовых, материально-технических и интеллектуальных ресурсов для решения приоритетных задач военной безопасности; ускоренное развитие и внедрение технологий и производства преимущественно двойного предназначения; разработка и совершенствование законодательства РА, регулирующего отношения в военно-экономической сфере.

## THE ECONOMIC PREMISES FOR THE DEFENSE REFORMS IN THE REPUBLIC OF ARMENIA

*A. R. GEVORKYAN, Chief Advisor to the RA Minister of Economy*

### SUMMARY

The guarantee of implementing defense reforms in the RA is reinforcement of their economic base through the strategy of perspective economic development aimed at ensuring sustainable and high rate of economic growth. The strategic priority directions of the RA economy development are: increasing the competitiveness level; implementing industrial policy targeted at the promotion of technological complexes, involvement of transnational corporations, modernization of the existing perspective industrial complexes; raising the economic transparency with the deepening of integration into the global economy; establishing and developing basic institutions of science-intensive economy to ensure targeted reproduction of academic potential; creating equal conditions for economic activities of entities through ensuring their economic competition and restricting the monopoly; ensuring symmetric regional development; improving the quality of public administration to struggle against corruption involving civil society.

The main principles and measures in economic support of the defense reforms are: formation of an efficient system of planning, financing and assessing the country's military needs; conformity of the financial and material support level of the military organization with the country's economic opportunities; centralized public administration of military-economic processes using market mechanisms; consolidation of financial, material and technical and intellectual resources to solve the priority tasks of military security; accelerated development and introduction of technologies and production mainly of dual purpose; elaboration and amendment of the RA legislation regulating relations in the military-economic sphere.

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԻ  
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

*Վ. Բ. ՏԵՐՏԵՐՅԱՆ, տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,  
ՀՀ Տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ*



Յուրաքանչյուր պետություն իր գերակա խնդիրն է համարում ազգային անվտանգության ապահովումը<sup>1</sup>, այդ թվում՝ պաշտպանունակության ամրապնդմամբ, որի կարևոր բաղադրիչն է պետության պատրաստումը պաշտպանությանը: Վերջինս պետական և ոչ պետական կառույցների կողմից փոխհամաձայնեցված այնպիսի միջոցառումների իրականացումն է, որոնց նպատակն է պետության կենսագործունեության բոլոր ոլորտների պատեհաժամ և լրիվ պատրաստությունը զինված հարձակումից պաշտպանությանը<sup>2</sup>:

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումները միտված են պաշտպանունակության ամրապնդմանը, Չինված ուժերի մարտունակության բարձրացմանը, արդիականացմանը, շարունակական զարգացմանը և քաղաքացիական վերահսկման ապահովմանը<sup>3</sup>: Դրա գրավականներից է պաշտպանության բնագավառում տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների արդյունավետ համակարգված գործունեության կազմակերպումը: Տվյալ ոլորտում ՀՀ-ում ավելի քան տասը տարի է, ինչ իրականացվում են բարեփոխումներ. ընդունվել են մեծ թվով օրենքներ և իրավական այլ ակտեր, կատարելագործվում է քաղաքացիական ու համայնքային ծառայության համակարգը, մասնավորապես՝ սերտանում է տեղական իշխանությունների և տվյալ տարածքում տեղաբաշխված զորամասի հրամանատարության միջև կապը<sup>4</sup>: Առանձնակի ուշադրություն է դարձվում պաշտպանության բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինների դերի մեծացմանը:

<sup>1</sup> Տես «Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր ազգային անվտանգության խորհրդի քարտուղար, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար, ազգային անվտանգության ռազմավարության նախագծի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի նախագահ Սերժ Սարգսյանի ներածական խոսքը»: «Հայկական բանակ», 2006, հմ. 2:

<sup>2</sup> Տես *Յու. Գ. Խաչատրյան*, Պաշտպանությանը պետության և նրա Չինված ուժերի պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2009, հմ. 3:

<sup>3</sup> Տես «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տետրեր», 2007, հմ. 4, էջ 35:

<sup>4</sup> Այդ մասին ավելի հանգամանորեն տես *Վ. Բ. Տերտերյան*, ՀՀ տարածքային կառավարման համակարգի կատարելագործումը պաշտպանությանը պետության պատրաստման համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 3:

Տեղական ինքնակառավարման մարմինների (այդ թվում՝ համայնքի ղեկավարի) լիազորությունները ընդհանուր առմամբ սահմանվում են «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ ՏԻՄ օրենք) 10-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունները լինում են սեփական և պետության կողմից պատվիրակված: Սեփական լիազորությունները բաժանվում են պարտադիր և կամավոր լիազորությունների... Պետության պատվիրակած լիազորություններն ամբողջովին և պարտադիր ֆինանսավորվում են պետական բյուջեից՝ պետության պատվիրակած լիազորությունների ֆինանսավորման նպատակով նախատեսված հատկացումների հաշվին»<sup>5</sup>:

ՏԻՄ օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝ «համայնքի ղեկավարը պաշտպանության կազմակերպման բնագավառում իրականացնում է հետևյալ պարտադիր լիազորությունները.

1) օրենքով սահմանված կարգով վարում է համայնքի զինապարտների գրանցամատյան, նրանց վերաբերյալ ցուցակները, ինչպես նաև համայնքի բնակության վայրի հաշվառումից հանվելու, աշխատանքի ընդունվելու և աշխատանքից ազատվելու վերաբերյալ տվյալները ներկայացնում է տարածքային զինվորական կոմիսարիատ,

2) օրենքով սահմանված դեպքերում և կարգով մասնակցում է գորակոչի, գորահավաքի ու վարժական հավաքների կազմակերպմանը,

3) իրենց պարտականությունները խախտած զինապարտ քաղաքացիների վերաբերյալ տեղեկություններ ունենալու դեպքում այդ մասին անհապաղ գրավոր տեղեկատվություն է տրամադրում տարածքային զինվորական կոմիսարիատին»<sup>6</sup>:

Համայնքի ղեկավարը նշված բնագավառում իրականացնում է նաև որոշ կամավոր լիազորություններ. աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավմանը, ինչպես նաև զինծառայությունից արձակվածների, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծմանը, բնակչության, հատկապես՝ երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությանը<sup>7</sup>:

Պարտադիր և պետության պատվիրակած լիազորությունները ենթակա են համայնքի կողմից առաջնահերթությամբ և օրենքով սահմանված կարգով կատարման: Կամավոր լիազորություններն իրականացվում են համայնքի բյուջեով նախատեսված հատկացումներին համապատասխան և ավագանու սահմանած կարգով<sup>8</sup>: Դա ենթադրում է, որ տվյալ լիազորությունները կարող են

<sup>5</sup> «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ 2002 թ. մայիսի 7-ի հմ. ՀՕ-337 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2002, հմ. 21 (196)):

<sup>6</sup> Նույն տեղում:

<sup>7</sup> Տես նույն տեղում:

<sup>8</sup> Տես նույն տեղում:



իրականացվել միայն այն դեպքում, երբ համայնքի բյուջեով դրա համար գումարներ են նախատեսված:

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2010 թ. մայիսի 25-ի հմ. 657-Ն որոշմամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների զինվորական հաշվառման կարգով նախատեսվում է, որ պաշտպանության կազմակերպման բնագավառում տեղական ինքնակառավարման մարմինները պետք է վարեն «համայնքում բնակվող (համայնքում հաշվառված կամ չհաշվառված, սակայն փաստացի բնակվող (1 ամսվանից ավելի)... զինապարտների վերաբերյալ գրանցամատյան՝ ըստ տարեթվերի և այբբենական հերթականության»<sup>9</sup>: Ըստ այդ որոշման՝ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են գրանցամատյանում կատարված փոփոխությունների մասին երեք ամիսը մեկ տեղեկություններ հաղորդել տարածքային զինվորական կոմիսարիատներին: Վերջիններս, իրենց հերթին, համայնքում բնակվող զինապարտների վերաբերյալ առկա տվյալների փոփոխությունների մասին երեք ամիսը մեկ տեղեկությո են տրամադրում տեղական ինքնակառավարման մարմիններին:

Համայնքում բնակվող զինապարտների գրանցամատյանի վարման գործընթացն արդյունավետ կերպով կազմակերպելու նպատակով ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի և ՀՀ պաշտպանության նախարարի ու ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության պետի համատեղ հրամանով հաստատվել է համապատասխան մեթոդական ուղեցույց:

Տեղական ինքնակառավարման մարմինները մասնակցում են նաև զորակոչի կազմակերպման աշխատանքներին՝ համագործակցելով համապատասխան տարածքային զինվորական կոմիսարիատների հետ:

Չորսհավաքային նախապատրաստության և քաղաքացիական պաշտպանության աշխատանքների կազմակերպման ու համակարգման նպատակով ՀՀ կառավարության քննարկմանն է ներկայացվել առաջարկություն այն մասին, որ զորահավաքային մարմիններ պետք է ստեղծվեն միայն 5000-ից ավելի բնակչություն ունեցող համայնքներում:

ՏԻՄ օրենքով սահմանված լիազորություններից բացի, տեղական ինքնակառավարման մարմիններին սույն բնագավառը կարգավորող առանձին օրենքներով և այլ իրավական ակտերով վերապահված են նաև մի շարք այլ լիազորություններ: Դրանց ամբողջական կատարումը հնարավոր չէ առանց համապատասխան ֆինանսական միջոցների հատկացման: Այսպես, ՏԻՄ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ այլ օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունները համայնքները կարող են իրականացնել միայն որպես կամավոր լիազորություններ, այսինքն՝ դրանք կարող են

<sup>9</sup> «ՀՀ կառավարության 2010 թ. մայիսի 27-ի «Չինվորական հաշվառման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1997 թվականի հուլիսի 17-ի հմ. 282 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հմ. 657-Ն որոշումը» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 25 (759)):

իրականացվել միայն այն դեպքում, եթե այդ նպատակով համայնքի բյուջեով գումար է նախատեսված:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում կա 915 համայնք<sup>10</sup>: Այդ համայնքների հիմնական մասի համայնքային բյուջեի ծավալները բավականին փոքր են: Միջհամայնքային միավորումների ստեղծումն ու համայնքների խոշորացումը փոքր բյուջե ունեցող համայնքներին հնարավորություն կտան միավորելու իրենց ֆինանսական միջոցները և դրանց առավել օպտիմալ ու նպատակային օգտագործման շնորհիվ արդյունավետ կերպով իրականացնելու ինչպես սեփական, այնպես էլ պետության կողմից պատվիրակված լիազորությունները:

Պաշտպանության կազմակերպման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենքներով տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված լիազորությունների շրջանակներում նրանք պետք է մասնակցեն գաղտնի տեղեկույթ պարունակող փաստաթղթերի մշակմանը, ինչպես նաև գաղտնիության պահպանմանն առնչվող միջոցառումների կատարմանը: Ներկայումս միջոցներ են ձեռնարկվում նշված լիազորությունների ամբողջական կատարումն ապահովելու նպատակով:

Հաշվի առնելով պետության պաշտպանունակության ամրապնդման գործում տեղական ինքնակառավարման մարմինների կարևոր դերը՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է նաև տեղական ինքնակառավարման մարմիններին օժտել պաշտպանության կազմակերպման բնագավառին առնչվող որոշ լրացուցիչ լիազորություններով, օրինակ՝ պատվիրակել զինված հարձակումից վարչատարածքային միավորների պաշտպանության, պատերազմի ժամանակ տնտեսության և բնակչության պահանջմունքները համայնքային մակարդակում բավարարելու համար անհրաժեշտ լիազորություններ: Ընդ որում, նշված լիազորությունների իրականացման համար պետական բյուջեից համայնքներին պետք է տրամադրվեն նաև որոշակի ֆինանսական միջոցներ, իսկ պետական կառավարման համապատասխան մարմինները ՏԻՄ օրենքով սահմանված կարգով մասնագիտական հսկողություն իրականացնեն՝ այդ լիազորությունների կատարման օրինականությունը, արդյունավետությունն ու միասնականությունը ստուգելու նպատակով:

Այդ նկատառումներով մշակվում է «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը, որով նախատեսվում է հստակ կերպով տարանջատել պաշտպանության կազմակերպման բնագավառում համայնքի ղեկավարի պատվիրակված, պարտադիր և կամավոր լիազորությունները:

Այսպիսով՝ ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումների հա-

<sup>10</sup> Տես «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ 1995 թ. դեկտեմբերի 4-ի հմ. ՀՕ-18 օրենքը («ՀՀ Ազգային ժողովի տեղեկագիր», 1995, հմ. 9):

մար համայնքային մակարդակով բարենպաստ միջավայր ստեղծելու նպատակով ՀՀ տարածքային կառավարման նախարարության համադասամբ կենսագործվում են մի շարք միջոցառումներ, որոնց վերջնական արդյունքն է լինելու Հայաստանի պաշտպանունակության ամրապնդումը՝ որպես հայ ժողովրդի ու նրա պետության կայուն անվտանգ զարգացման գլխավոր երաշխիքի:

## ДЕЯТЕЛЬНОСТЬ ОРГАНОВ МЕСТНОГО САМОУПРАВЛЕНИЯ В СФЕРЕ ОРГАНИЗАЦИИ ОБОРОНЫ

*В. Б. ТЕРТЕРЯН, кандидат экономических наук, доцент,  
первый заместитель Министра территориального управления РА*

### РЕЗЮМЕ

Одной из гарантий укрепления обороноспособности государства, повышения боеспособности Вооруженных сил и обеспечения гражданского контроля над ними является организация эффективной систематизированной деятельности в сфере обороны органов территориального управления и местного самоуправления.

Согласно действующему Закону РА «Об органах местного самоуправления», полномочия этих органов подразделяются на делегированные государством и собственные (обязательные и добровольные). Делегированные государством полномочия финансируются из государственного бюджета, а добровольные полномочия осуществляются за счет средств общин.

В этом свете представляется необходимым расширение роли органов местного самоуправления в области обороны путем передачи им дополнительных делегированных полномочий. Немалую роль может сыграть также включение в добровольные полномочия органов местного самоуправления оборонных задач местного значения, чему в настоящее время препятствуют ограниченные финансовые возможности малых общин. Оптимальным решением данной проблемы являются укрупнение общин и создание межобщинных объединений, что позволит путем объединения финансовых средств общин повысить эффективность их деятельности.

В данном направлении предпринимаются соответствующие организационные и законотворческие меры в сфере укрепления обороноспособности государства. В частности, разрабатывается проект закона РА «О внесении изменений и дополнений в Закон РА «О местном самоуправлении»», которым предусматривается четкое разграничение делегированных, обязательных и добровольных полномочий, а также осуществление ряда мероприятий, направленных на повышение роли органов местного самоуправления в сфере организации обороны.

THE ACTIVITY OF LOCAL SELF-GOVERNMENTS  
IN THE SPHERE OF DEFENSE ORGANIZATION

*V. B. TERTERYAN, PhD in Economy, Associate Professor,  
First Deputy Minister of Territorial Administration of the RA*

SUMMARY

One of the guarantees of strengthening a state's defense capability, increasing the fighting efficiency of the Armed Forces and ensuring the civil control over them is the organization of an efficient systematized activity of the bodies of territorial administration and local self-government in the defense sphere.

According to the current RA Law «On local self-government bodies» the powers of these bodies fall into two types: delegated by the state and their own (mandatory and voluntary). The powers delegated by the state are financed through the state budget, and the voluntary powers are exercised through the community budgets.

In this regard, it seems necessary to increase the role of local self-government bodies in the defense sphere through transferring standby delegated powers to them. Including the defense missions of local significance in the voluntary powers of the local self-government bodies can play a considerable role, but scarce financial resources of small communities impede that nowadays. An optimal solution to this problem is the consolidation of communities and the creation of intercommunity resources that will allow to increase the efficiency of their activities by pooling communities' financial units.

Adequate organizational and lawmaking measures are taken in this direction in the sphere of strengthening the state's defense capability. Particularly, the RA Draft Law «On making alterations and amendments to the RA Law «On local self-government»» is in the progress now. It envisages the clear-cut differentiation of delegated, mandatory and voluntary powers, as well as the implementation of a number of measures targeted at increasing the role of local self-governments in the sphere of defense organization.

ԳՆՈՒՄՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ  
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ  
ԱՊԱՀՈՎՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ԳՈՐԾԻՔԱՐԱՆ

*Վ. Վ. ԹՈՒՆՅԱՆ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական,  
ՀՀ ՊՆ Նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի  
տնօրենսագիտական վերլուծության և գնումների փաստաթղթերի  
ձևակերպման վարչության պետ*



Ցանկացած երկրի բանակի բարձր մակարդակի մարտունակությունը պայմանավորված է ոչ միայն ՁՈՒ-ի անձնակազմի մասնագիտական պատրաստակալությամբ, բարոյական ոգու մշտական ամրապնդմամբ և բարոյահոգեբանական վիճակով, այլև նյութատեխնիկական ապահովվածությամբ: Ընդ որում, անձնակազմը պետք է, մասնավորապես, ապահովված լինի ժամանակակից մարտունակ սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով, սարքավորանքով, դրանց շահագործման համար անհրաժեշտ վառելիքաքսուքային միջոցներով,

դեղորայքով, համապատասխան հանդերձանքով ու սննդամթերքով, բարվոք գորանոցային ու բնակավորման պայմաններով, ինժեներական պահանջներին համապատասխան կառուցված և կահավորված մարտական դիրքերով ու հրամանատարական կետերով: Այս իմաստով բանակի կարիքների ապահովումը պահանջում է զգալի ֆինանսական միջոցներ, ու շատ դեպքերում դրանց ճիշտ և արդյունավետ օգտագործմամբ է պայմանավորված վերջնական արդյունքը:

2000 թ. հունիսի 5-ին, այնուհետև՝ 2004 թ. դեկտեմբերի 6-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքների<sup>1</sup> ընդունումից հետո ՀՀ Ձինված ուժերի կարիքների համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնումները կազմակերպվում են դրանց հիման վրա, և ոլորտի պատասխանատուների աշխատանքի շնորհիվ այդ գործընթացը տարեցտարի բարելավվում և դառնում է արդյունավետ կերպով գործող մեխանիզմ:

ՀՀ ՁՈՒ-ի բարեփոխումների ընդհանուր համատեքստում առանձնակի ուշադրություն է դարձվում նյութատեխնիկական ապահովմանը: Այսպես. ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի հմ. 1554-Ն որոշմամբ<sup>2</sup> ՀՀ ՊՆ համա-

<sup>1</sup> Տես «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2000 թ. հունիսի 5-ի հմ. ՀՕ-62 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2000, հմ. 13 (111)), «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թ. դեկտեմբերի 6-ի հմ. ՀՕ-160-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2004, հմ. 72 (371)):

<sup>2</sup> Տես «ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության, Հայաստանի Հանրապետության Ձինված ուժերի Գլխավոր շտաբի, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախա-

կարգում ստեղծվեց սկզբունքորեն նոր կառուցվածքային միավոր՝ Նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ, որն իրականացնում է ՀՀ ՁՈՒ-ի նյութատեխնիկական ապահովման, ռազմաարդյունաբերական ոլորտում նախարարության գնումների կազմակերպման ու վերահսկողության գործառնություններ: Դեպարտամենտի նպատակներն են՝ «զինված ուժերի մարտունակությունն ապահովող անհրաժեշտ նյութատեխնիկական միջոցների և այլ գույքի կենտրոնացված մատակարարումը և ռազմաարդյունաբերական համալիրի զարգացումը»<sup>3</sup>:

Դեպարտամենտի առջև դրվեցին մի շարք խնդիրներ. մասնավորապես՝ Ջինված ուժերը ժամանակակից սպառազինությամբ ու ռազմական տեխնիկայով ապահովելը, նրանց կենսագործունեության համար անհրաժեշտ պարենային, իրային ու վառելիքաքսուքային միջոցներով և դրանց օգտագործման ու պահպանման համար տեխնիկական սարքավորումներով ապահովման կազմակերպումը, ռազմաարդյունաբերական համալիրի, սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման ապահովումը, սպառազինության և ռազմական տեխնիկայի պլանային վերականգնողական աշխատանքների կազմակերպումը, սպառազինության ու ռազմական տեխնիկայի և դրանց առանձին հանգույցների ու սարքավորումների արդիականացման համար գիտափորձարարական աշխատանքների պլանավորումը՝ ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպությունների գիտատեխնիկական հնարավորությունների օգտագործմամբ:

Նշված խնդիրների լուծման նպատակով դեպարտամենտը իրականացնում է մի շարք հիմնական գործառնություններ, որոնցից են՝

- օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով Ջինված ուժերի համար սպառազինության ու ռազմական տեխնիկայի, պարենային, իրային և այլ ունեցվածքի գնման կազմակերպումը, ինչպես նաև, հնարավորության դեպքում՝ դրանց արտադրությունը,

- Ջինված ուժերի համար անհրաժեշտ քանակությամբ զենքի ու զինամթերքի, սպառազինության, ռազմական տեխնիկայի, պարենի, այլ նյութատեխնիկական միջոցների և ունեցվածքի անձեռնմխելի պաշարների ստեղծման կազմակերպումը,

- պաշտպանության նախարարի հանձնարարությամբ՝ ռազմատեխնիկական ոլորտում համագործակցությունը օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ, պաշտպանության ոլորտում օրենքով սահմանված կարգով ռազմատեխնիկական համագործակցության միջգերատեսչական պայմանագրերի կնքումը,

րարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշում» հավելված հմ. 5, 6 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 2 (668)):

<sup>3</sup> Նույն տեղում, հավելված հմ. 5:

• ռազմաարդյունաբերական համալիրի կազմակերպություններում գիտական, գյուտարարական և նորարարական աշխատանքների ղեկավարումը:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների ընդհանուր համակարգում գնման գործընթացի արդյունավետ կազմակերպումը հատկապես կարևոր է այն առումով, որ կարող է դառնալ հակառակորդի՝ նավթադոլարների վրա հիմնված հարաճուն ռազմական բյուջեին հակակշիռ ստեղծելու կարևոր գործիք: Մասնավորապես՝ գնումների գործընթացների արդյունավետ, օրենսդրությանը համապատասխան իրականացումը հնարավորություն կտա ՀՀ ՁՈՒ-ի կարիքների համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերելու շուկայականից ցածր գներով: Այս նպատակով ՀՀ ՊՆ ղեկավարության կողմից գնումների ոլորտի պատասխանատուների առջև խնդիր է դրվել գնումներն իրականացնելու մրցակցության, թափանցիկության, հրապարակայնության և ոչ խտրականության հիմունքներով՝ լայն շրջանով մասնակիցների ապահովմամբ և նրանց միջև մրցակցության խրախուսմամբ, ինչը հնարավորություն կտա խնայողաբար օգտագործելու հատկացված ֆինանսական միջոցները, ձեռք բերելու որակյալ ապրանքներ և ՀՀ պետական բյուջեից պաշտպանության նախարարությանը կատարված հատկացումների հաշվին ՀՀ Ձինված ուժերի համար գներու ավելի շատ ապրանքներ, աշխատանքներ և ծառայություններ:

ՀՀ ՁՈՒ-ի կարիքների համար իրականացվող գնումները մի շարք առումներով տարբերվում են ՀՀ տարածքում կատարվող այլ գնումներից, քանի որ գնվող ապրանքները, աշխատանքները, և ծառայությունները հիմնականում պարունակում են պետական կամ ծառայողական գաղտնիք, ինչի պատճառով օրենսդրությամբ նախատեսվում է, որ ՀՀ ՁՈՒ-ի կարիքների համար կատարվող գնումների հնարավոր մասնակիցները որոշվեն առանձին ընթացակարգով: Գնումներում առավել մեծ թվով մասնակիցների ներգրավելու նպատակով ոլորտի պատասխանատուները ՀՀ կառավարությանը ներկայացրել են այդ ընթացակարգի վերաբերյալ բազմաթիվ առաջարկություններ, որոնք ներառվել են համապատասխան նորմատիվ ակտերում:

ՀՀ-ում գնումների համակարգի զարգացածության վկայությունն է այն փաստը, որ 2010 թ. դեկտեմբերի 7-ին Ժնևում տեղի ունեցած Առևտրի համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) Պետական գնումների կոմիտեի պաշտոնական նիստում միաձայն որոշում ընդունվեց «Պետական գնումների մասին» համաձայնագրին Հայաստանի Հանրապետության անդամակցության մասին: Դա ապացուցում է Հայաստանի իշխանությունների կողմից պետական կառավարման, մասնավորապես՝ գնումների ոլորտում, իրականացվող քաղաքականության համապատասխանությունը ԱՀԿ հիմնարար սկզբունքներին:

Մի կարևոր հանգամանք ևս. Հայաստանի Հանրապետությունը՝ որպես միջազգային ընկերակցության լիիրավ անդամ, ներգրավված է տարաբնույթ կառույցներում, ունի միջազգային պայմանագրերով և այլ փաստաթղթերով ստանձնած պարտավորություններ, որոնք իրենց արտահայտությունն են ստացել գնում-

ների վերաբերյալ ՀՀ օրենսդրության մեջ՝ չնայած ՀՀ շուրջ ստեղծված առանձնահատուկ իրավիճակին, աշխարհաքաղաքական խնդիրներին, հարևան պետության հետ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրադրությանը, ինչպես նաև հաղորդակցային շրջափակմանը:

Օրենսդրորեն պահանջ է դրված հնարավորինս ապագադտնիացնելու ՀՀ ՁՈՒ-ի կարիքների համար կատարվող գնումների ցանկը. կիրառել բաց ընթացակարգեր՝ պետական կամ ծառայողական գաղտնիքի արտահոսքի բացառմամբ: Հարկ է նկատել, որ սահմանափակ ընթացակարգերով գնումների դեպքում ևս ապահովվում է մասնակիցների լայն շրջան՝ անկախ նրանց օտարերկրյա ֆիզիկական կամ իրավաբանական, կամ էլ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, առանց որևէ խտրականության: Նրանց ընտրության հարցում սահմանափակումներն էական չեն և գործում են միայն օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ կապված սպառազինության ձեռքբերման կամ ռազմաարդյունաբերական ոլորտում ռազմական տեխնիկայի, սարքավորումների նորոգման, արդիականացման և այլ գործունեության հետ:

Այս առումով արժանահիշատակ է 2010 թ. դեկտեմբերի 22-ին ընդունված և 2011 թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտնող «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը<sup>4</sup>, որը հնարավորություն է ընձեռում գնումներ կատարելու բանակցային ընթացակարգով՝ կոնկրետ մատակարարի կամ արտադրողի հետ պայմանագրերի կնքմամբ: Մինչույն ժամանակ, օրենքով հստակ կերպով սահմանվում է, որ այս ընթացակարգով կարելի է գնումներ կատարել միայն այն դեպքում, երբ գնման առարկա են ռազմական տեխնիկայի, սպառազինության, ռազմամթերքի և ռազմատեխնիկական միջոցների ապահովման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները:

Նոր օրենսդրությամբ սահմանվել են գնման հետևյալ ընթացակարգերը՝ բաց ընթացակարգ, մրցակցային երկխոսություն, սահմանափակ ընթացակարգ, բանակցային ընթացակարգ: Ընդ որում, նշված ընթացակարգերով գնում կատարելիս, բացառությամբ բանակցային ընթացակարգի մի մասի, պաշտոնական տեղեկագրում հրապարակվում են նախատրակավորման ընթացակարգ կազմակերպելու և բաց ընթացակարգի մասին հայտարարություններ: Նախկին ընթացակարգի համեմատությամբ հայտերի ներկայացման ժամկետը երկարաձգվել է և պետք է 25 օրացուցային օրից պակաս չլինի, ինչը հնարավորություն է տալիս գնումների գործընթացներում ներգրավելու ավելի մեծ թվով մասնակիցների:

Սուբյեկտիվությունը հնարավորինս սահմանափակելու նպատակով էապես փոխվել է մրցույթի՝ գնահատող կոչվող հանձնաժողովների դերը, սահմանվել են որակավորման հստակ չափանիշներ: Հայտ ներկայացրած մասնակցին հնարավորություն է ընձեռվում որոշակի ժամկետում շտկելու հայտում առկա անհամապատասխանությունները և մասնակցելու գնման ընթացակարգերին:

<sup>4</sup> Տես «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-206-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 69 (803)):



Պետք է նշել, որ ընդլայնվել է նաև օրենքի ընդգրկման շրջանակը, կատարելագործվել է գնումների բողոքարկման համակարգը. այդ նպատակով ստեղծվել է գնումների բողոքարկման խորհուրդ, առավելագույնս պարզեցվել են գնման ընթացակարգերը և զգալի չափով սահմանափակվել են վարչական միջամտության լծակները: Գնումների գործընթացի օբյեկտիվության և անաչառության ապահովման նպատակով նախատեսվում է էլեկտրոնային գնումների համակարգի ներդրում:

Հարկ է նշել, որ գնումների դաշտը բաց պահելու և դրա օգտակար գործողության գործակիցը մեծացնելու նպատակով ՀՀ ՊՆ-ն համագործակցում է պետական այլ մարմինների հետ, ուսումնասիրում է համապատասխան միջազգային փորձը, ի դեմս իր մասնագետների մասնակցում է գնումների ոլորտը համակարգող միջազգային կազմակերպությունների կողմից անցկացվող սեմինարներին: Դա, անշուշտ, տալիս է դրական արդյունքներ: Այսպես. ՀՀ ՊՆ գնումների մրցութային գործընթացներին միջին մասնակցության ցուցանիշը մեկ մրցութի հաշվարկով հասել է 6–6,2-ի: Համեմատության համար նշենք, որ եվրոպական մի շարք երկրներում այն կազմում է 5, ԱՊՀ երկրներում՝ 2–3,5, իսկ ՀՀ այլ ոլորտներում՝ 2,5–2,7:

Ինչպես հայտնի է, ՀՀ ՁՈՒ-ում ընթացող պաշտպանական բարեփոխումների հիմնական նպատակն է Ձինված ուժերի մարտունակության մակարդակի բարձրացումը: Բարեփոխումների կարևոր գործիքներից է ՀՀ ՁՈՒ-ի կարիքների համար գնումների ճիշտ կազմակերպումը, ինչը հնարավորություն կտա ապահովելու նյութատեխնիկական միջոցների նպատակային, արդյունավետ օգտագործումը, հասարակության համար այդ գործունեության թափանցիկությունը՝ նրան օժտելով գնումների գործընթացի նկատմամբ հսկողության գործառնություն: Գնումների մասին հասարակության իրազեկումը և այդ գործընթացում նրա ներգրավումը ունեն կարևոր համապետական նշանակություն, քանի որ Ձինված ուժերի կարիքների բավարարմանն ուղղվում է պետական բյուջեի մի զգալի մասը, որի ճիշտ և նպատակային օգտագործումը կարող է էական դեր խաղալ արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առողջապահության, սոցիալական ապահովության և պետության կենսագործունեության այլ ոլորտների զարգացման համար անհրաժեշտ ռեսուրսների ապահովման առումով:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ նոր օրենքը նախորդ օրենքներից տարբերվում է իր առաջադիմական և նորամուծական (ինովացիոն) մոտեցումներով և, մեր գնահատմամբ, իրատեսական հնարավորություններ է ստեղծում Ձինված ուժերի նյութատեխնիկական ապահովումը ավելի արդյունավետ կերպով իրականացնելու համար: Նոր օրենքի պահանջներին համապատասխան կատարվող գնումները ՀՀ պաշտպանական բարեփոխումների ընդհանուր համատեքստում կարող են և պետք է դառնան պետության պաշտպանունակության մակարդակի բարձրացման և անվտանգության ապահովման արդյունավետ գործիք:

ЗАКУПКИ КАК ВАЖНЫЙ ИНСТРУМЕНТАРИЙ  
МАТЕРИАЛЬНО-ТЕХНИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ  
ОБОРОННЫХ РЕФОРМ

*В. В. ТУНЯН, Государственный советник второго класса СГС,  
начальник Управления экономического анализа и оформления документов  
закупок Департамента материально-технического обеспечения МО РА*

РЕЗЮМЕ

В процессе осуществления оборонных реформ особое внимание уделяется вопросам материально-технического обеспечения ВС, важным инструментарием которого являются закупки. В течение последних десяти лет систематически проводится работа по усовершенствованию соответствующих правовых и организационных механизмов. Новый закон РА «О закупках» своими инновационными качествами в целом соответствует современным стандартам. В нем законодательно определено оптимальное соотношение требований как по исключению утечки государственной и служебной тайны, так и по транспарентности процедур закупок, а также предусмотрен необходимый набор таких инструментов, как открытость процедур, конкурентный диалог и т. д. В контексте развития организационной составляющей процесса закупок в оборонном ведомстве создан Департамент материально-технического обеспечения МО РА.

PURCHASES AS IMPORTANT TOOLS OF LOGISTICS SUPPORT  
TO THE DEFENSE REFORMS

*V. V. TUNYAN, Second-Class State Adviser of the Special Civil Service,  
Head of the Board of Economic Analysis and Procurement Documents Preparation  
of the Logistics Support Department of the MOD, RA*

SUMMARY

A special attention in the process of implementing defense reforms is given to the issues of logistics support to the Armed Forces, the important tools of which are purchases. Activities on upgrading the relevant legal and organization mechanisms are systematically carried out during the last decade. The RA new Law «On procurement» largely meets the current standards with its innovation properties. It legislatively defines optimum balance of demands between excluding the state and official secret leak and making procurement procedures transparent. It also envisages a required set of tools, such as procedure openness, competitive dialogue, etc. In the context of developing an organizational component of the purchases process in the defense agency the Logistics Support Department of the MOD, RA was established.

## ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

*Մ. Ա. ՓԱՐՎԱՆՅԱՆ, կապիտան, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի հայցորդ, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի  
ֆինանսական մասի պետ, ՀՊՏՀ կառավարման ամբիոնի դասախոս*

Ներկայումս ՀՀ-ում իրականացվող պաշտպանական բարեփոխումները ներառում են պաշտպանական համակարգն ամբողջությամբ: ՈՒՍտի և կարևոր է ընդհանրապես պաշտպանական համակարգի և, մասնավորապես, պաշտպանական բարեփոխումների տնտեսական ապահովումը, որը համակարգի կենսագործունեության հիմքերից մեկն է:

Հարկ է նշել, որ պետության մասնակցությունը տնտեսությանը ունի երկակի բնույթ. մի կողմից՝ պետությունը տնտեսության և տնտեսական գործընթացների սուբյեկտ է, մյուս կողմից՝ այդ գործընթացները պետության կառավարման օբյեկտներ են: Այս խնաստով պետությունը կատարում է կարգավորիչ դեր, որի ներգործության չափը և բովանդակությունը կապված են տվյալ պետության կառավարման ձևի հետ<sup>1</sup>:

Տնտեսության պետական կարգավորման կարևոր գործիքներից են համապատասխան իրավական տեխնոլոգիաները: Ընդամին վերջիններս պետք է բխեն քաղաքական նպատակադրումից, որի էական փոփոխությունը կհանգեցնի իրավական համակարգի վերանայման:

Պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը բնութագրելու համար նախ փորձենք ներկայացնել պաշտպանական համակարգի էությունը: Համաձայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ «պաշտպանությունը ռազմական անվտանգության համակարգը, Հայաստանի Հանրապետության տարածքը, հասարակությունն ու տնտեսությունը պաշտպանության նախապատրաստելու և Հայաստանի Հանրապետության անկախությունը, տարածքային ամբողջականությունը, պետական սահմանի անձեռնմխելիությունն ու անվտանգությունը պաշտպանելու՝ ռազմական, քաղաքական, տնտեսական, տեղեկատվական, սոցիալական, իրավական և այլ միջոցների ու միջոցառումների, ինչպես նաև ռազմական անվտանգության միջազգային երաշխիքների ապահովման մեխանիզմների կիրառման համալիր գործունեության համակարգ է»<sup>2</sup>: ՈՒՍտի պաշտպանական համակարգը ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով սահմանված՝ պաշտպանության



<sup>1</sup> Տես Մ. Ի. Մարչենկո. Теория государства и права. Учебник. М., 2005, сс. 394—395:

<sup>2</sup> «Պաշտպանության մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663)):

գործառույթ իրականացնող մարմինների և դրանց հարաբերությունների ամբողջությունն է: Հետևաբար, պաշտպանական համակարգի տնտեսական ապահովումը կարող ենք ձևակերպել որպես ՀՀ Սահմանադրությամբ և համապատասխան օրենքներով սահմանված՝ պաշտպանության գործառույթ իրականացնող մարմինների ապահովում՝ անհրաժեշտ ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով, իսկ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերը կարող ենք բնութագրել որպես նշված գործընթացի իրականացման համար իրավանորմատիվային բազա:

Հայտնի է, որ ժամանակակից ժողովրդավարական պետություններում օրենքի գերակայությունը և դրական (պոզիտիվ) օրենսդրության զարգացումը հասարակական կյանքի բոլոր ոլորտների, մասնավորապես՝ տնտեսական ոլորտի բնականոն կենսագործունեության ապահովման կարևոր տարրն են<sup>3</sup>, սակայն պետական տնտեսական գործունեության ոլորտում դրանց նշանակությունը ավելի է շեշտադրվում: Պետական տնտեսական գործունեության, այդ թվում՝ պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման, իրավական հիմքերի կարևորությունը պայմանավորված է մի քանի առանձնահատկություններով, որոնք են՝

- իրավական հիմքերը պետք է սահմանեն պետության՝ որպես տնտեսության «կառավարչի» և միաժամանակ որպես տնտեսվարող սուբյեկտի դերը, դրանից բխող գործառույթները և դրանց իրականացման գործիքարանը,

- եթե մասնավոր տնտեսվարող սուբյեկտների համար իրավական նորմերը սահմանում են, թե «ի՛նչ չի կարելի անել», ապա պետական մարմինների համար սահմանում են «ի՛նչ կարելի է անել»՝ դրանց վերապահվող լիազորությունների ձևով:

Բացի այդ, կարևոր առանձնահատկություն է նաև պաշտպանության ապահովման սկզբունքորեն տարբեր երկու փուլերի առկայությունը, քանի որ պաշտպանական համակարգը պետք է գործի երկու տարբեր իրավիճակներում՝ խաղաղ և պատերազմական պայմաններում<sup>4</sup>: Իսկ դա նշանակում է, որ տվյալ ռազմաքաղաքական իրավիճակներում պաշտպանական համակարգի տնտեսական ապահովումը ենթադրում է տարբերակված մոտեցումներ:

Եվ այսպես. հաշվի առնելով պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման իրավական հիմքերի առանձնահատկությունները՝ կարող ենք առանձնացնել այն հիմնական իրավական բաղադրադրիչները, որոնք անհրաժեշտ են տնտեսական ապահովման արդյունավետ իրականացման համար\*:

<sup>3</sup> Տես «Европейское право», учебник. Отв. ред. Л. М. Энтин. М., 2007, сс. 569—572:

<sup>4</sup> Տես Վ. Պ. Ալկիրիայան, Պետությունը պաշտպանությանը պատրաստելու իրավական հիմքերի կատարելագործումը պաշտպանական բարեփոխումների համատեքստում: «ՀԲ», 2009, հմ. 3:

\* Սույն հոդվածում կխոսվի միայն պաշտպանական գերատեսչության (պաշտպանության նախարարության) մասին, այն հիմնավորմամբ, որ պաշտպանական համակարգի տարբերից միայն պաշտպանության նախարարության տնտեսական գործունեությունն է բացառապես ուղղված պաշտպանական համակարգի տնտեսական ապահովմանը:

Դրանք են՝

- պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի իրավական ամրագրումը,

- ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով պաշտպանական գերատեսչության ապահովման գործիքարանի իրավական ամրագրումը,

- այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումը:

Պաշտպանական համակարգի արդյունավետ տնտեսական ապահովման համատեքստում հարկ է մանրամասնորեն վերլուծել նշված բաղադրիչները:

*Պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի իրավական ամրագրումը:*

Ինչպես հայտնի է, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունը հանրապետական գործադիր մարմին է, որը մշակում և իրականացնում է պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականությունը: Նախարարությունը կազմված է ՀՀ ՊՆ աշխատակազմից, աշխատակազմից դուրս առանձնացված ստորաբաժանումներից, աշխատակազմից դուրս կառուցվածքային ստորաբաժանումներից, ՀՀ ՊՆ կառավարման ոլորտում գործող պետական մարմին՝ ՀՀ ՋՌԻ-ի Գլխավոր շտաբից<sup>5</sup>: Տնտեսական ապահովման առումով պաշտպանության նախարարությունը և գործառնաբերը հանդես են գալիս որպես տնտեսական գործարքի կողմ, կնքում են պայմանագրեր, վճարում են հարկեր: ՌԻստի դրանք պետք է ունենան քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներ: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի երկրորդ բաժինը սահմանում է քաղաքացիական իրավունքի սուբյեկտներին, որոնք են՝ քաղաքացիները, իրավաբանական անձինք, վերջիններիս ստեղծած մասնաճյուղերն ու ներկայացուցչությունները, հիմնարկները, ինչպես նաև պետական մարմիններն ու համայնքները<sup>6</sup>: Այս առումով գործառնաբերն ունեն համապատասխան հատկանիշների սահմանման խնդիր:

Նշենք կարգավիճակի հետ կապված մի շարք պրոբլեմներ:

1. «Հարկերի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հարկ վճարող են համարվում

<sup>5</sup> Տես ՀՀ կառավարության 2008 թ. դեկտեմբերի 25-ի «ՀՀ Պաշտպանության նախարարության, ՀՀ Ջինված ուժերի Գլխավոր շտաբի, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայության կանոնադրություններն ու կառուցվածքները հաստատելու, ինչպես նաև «ՀՀ Պաշտպանության նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկ, ՀՀ Պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտ և ՀՀ Պաշտպանության նախարարության քննչական ծառայություն ստեղծելու մասին» հմ. 1554-Ն որոշումը, հոդ. 29 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 2 (668)):

<sup>6</sup> Տես «ՀՀ քաղաքացիական օրենսգրք» ՀՀ 1998 թ. մայիսի 5-ի հմ. ՀՕ-239 օրենսգրք («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 17 (50)):

Ֆիզիկական և իրավաբանական անձինք (այդ թվում՝ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձինք, օտարերկրյա իրավաբանական անձանց հիմնարկները, օտարերկրյա իրավաբանական անձանց մասնաճյուղերը, ներկայացուցչությունները), հիմնարկները, տեղական ինքնակառավարման մարմինները<sup>7</sup>, սակայն նշված ստորաբաժանումները, ըստ օրենքի չլինելով հարկ վճարողներ, վճարում են համապատասխան հարկեր և ունեն հարկ վճարողի հաշվառման համարներ, ինչը հակասում է գործող օրենսդրությանը<sup>8</sup>:

2. Ինչպես հայտնի է, գործասերը ՀՀ գանձապետարանում ունեն բացված հաշիվներ, որոնց միջոցով իրենց իրավասության շրջանակում իրականացնում են գործարքներ, սակայն «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ օրենքը որպես գանձապետական համակարգի մասնակիցներ նշում է միայն պետական հիմնարկները<sup>9</sup>: Մինչդեռ գործասերը չեն համապատասխանում ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված «հիմնարկ» կարգավիճակին, բացի այդ օրենսդիրը սահմանել է միայն «Պետական կառավարչական հիմնարկ» կարգավիճակը<sup>10</sup>:

3. Վարձու աշխատողներ աշխատանքի ընդունելիս «ՀՀ աշխատանքային օրենսգրքով» մի կողմը՝ գործատուն, սահմանվում է որպես աշխատանքային իրավունակություն և գործունակություն ունեցող իրավաբանական անձ՝ անկախ նրա կազմակերպական-իրավական և սեփականության ձևից, գործունեության բնույթից ու տեսակից<sup>11</sup>: Սակայն, ինչպես արդեն նշվեց, գործասերը չունեն իրավաբանական անձի հատկանիշներ: Հետևաբար վարձու աշխատողների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը նույնպես զուրկ է իրավական հիմքերից:

Նշված պրոբլեմների շարքը կարելի է շարունակել, քանի որ խնդիրը ոչ թե առանձին օրենքների կամ իրավական նորմերի թերի լինելն է, այլ այն հանգամանքը, որ գործասերը դուրս են մնացել իրավունքի նորմերով սահմանված տնտեսական համակարգից:

*Ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով պաշտպանական գերատեսչության ապահովման գործիքարանի իրավական ամրագրումը:*

<sup>7</sup> Տես «Հարկերի մասին» ՀՀ 1997 թ. ապրիլի 14-ի հմ. ՀՕ-107 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 11):

<sup>8</sup> Տես «Կազմակերպություններին և ֆիզիկական անձանց հարկային հաշվառման վերցնելու և հարկային հաշվառումից հանելու մասին» ՀՀ 2007 թ. հոկտեմբերի 11-ի հմ. ՀՕ-215-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2007, հմ. 54 (578)):

<sup>9</sup> Տես «Գանձապետական համակարգի մասին» ՀՀ 2001 թ. հուլիսի 27-ի ՀՕ-211-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 29 (161)):

<sup>10</sup> Տես «Պետական կառավարչական հիմնարկների մասին» ՀՀ 2001 թ. հոկտեմբերի 23-ի հմ. ՀՕ-247 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2001, հմ. 37 (169)):

<sup>11</sup> Տես «ՀՀ աշխատանքային օրենսգրք» ՀՀ 2004 թ. նոյեմբերի 9-ի հմ. ՀՕ-124-Ն օրենսգրքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2004, հմ. 69 (368)):

Պաշտպանական համակարգի տնտեսական ապահովման գործիքարանը փոխհարաբերությունների, տարաբնույթ գործողությունների և մեխանիզմների բարդ տնտեսական համակարգ է, որը ենթարկվում է տնտեսագիտական օրինաչափություններին և տնտեսական երևույթների ու գործընթացների ներքին տրամաբանությանը: Այս համակարգի իրավական կարգավորման հիմքում տնտեսական իրավունքի հանրահայտ՝ սեփականության, ձեռնարկատիրական գործունեության իրականացման հնարավորության, աշխատանքի և այլ, նորմերն են, որոնք սահմանված են ՀՀ Սահմանադրությամբ<sup>12</sup>: Հարկ է նշել, որ տնտեսական նորմերի իրականացումը, ի տարբերություն մյուս հիմնարար իրավունքներից, պարտադրում է դրական օրենսդրության լայնածավալ մշակում՝ կապված տնտեսագիտական օրինաչափություններից բխող կանոնների սահմանման հետ<sup>13</sup>: Ուստի տնտեսական ապահովման գործիքարանի իրավական հիմքերը կազմում են տնտեսագիտական օրինաչափություններին համապատասխանող փոխկապված և փոխլրացնող իրավական դրույթների, սկզբունքների ու լիազորությունների մի համակարգ: Այս համատեքստում կարևորվում է տնտեսական ապահովման ձևերի՝ ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման գործիքարանների իրավական հիմքերի առանձին ուսումնասիրությունը:

Ֆինանսական ռեսուրսներով պաշտպանական գերատեսչության ապահովումը այդ ռեսուրսների ձևավորումը, բաշխումն ու օգտագործումն է: Հետևաբար, նշված գործընթացների իրականացման գործիքարանի իրավական հիմքերը ներառում են այն նորմերը, որոնք կարգավորում են նշված գործընթացների մեխանիզմները և դրանցում ներգրավված կողմերի փոխհարաբերությունները<sup>14</sup>: ՀՀ-ում ֆինանսական ռեսուրսներով պետական մարմինների, այդ թվում՝ պաշտպանական գերատեսչության, ապահովումը սահմանվում է «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքով<sup>15</sup>: Այն սահմանում է բյուջետային հարաբերությունները և բյուջետային գործընթացը: Այս երկու կատեգորիաների իրավական սահմանումն ըստ էության վերը նշված գործիքարանի իրավական հիմքն է: Մասնավորապես՝ Օրենքը բյուջետային հարաբերությունների կարգավորումը բնութագրում է որպես բյուջետային համակարգի կազմակերպման, դրա կառուցվածքի սահմանման, բյուջեների միջև եկամուտների բաշխման, բյուջեների կատարման, հաշվետվությունների և հսկողության, բյուջետային դասակարգման և բյուջեներում փոփոխությունների ու (կամ) լրացումների կատարման ուղղությամբ իրավասու մարմինների գործունեություն, որն իրականացվում է օրենքով

<sup>12</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)» («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հատուկ թողարկում, 2005, հոդ. 1426):

<sup>13</sup> Տես «Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքներ», դասագիրք: Խմբ. Ա. Էյդե, Կ. Կրաուզ, Ա. Լոզա: Ե., 2009, էջ 88 – 94:

<sup>14</sup> Տես «Финансовое право», отв. ред. Н. И. Химичева. М., 2008, сс. 21–27:

<sup>15</sup> Տես «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ 1997 թ. հունիսի 24-ի հմ. ՀՕ-197 օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997, հմ. 18):

իրենց վերապահված լիազորությունների սահմաններում: Ընդ որում, բյուջետային հարաբերությունների հիմքում դրված են որոշակի սկզբունքներ, որոնք են՝ բյուջետային համակարգի միասնականությունը, բյուջետային համակարգի մեջ մտնող տարբեր մակարդակների բյուջեների համար բյուջետային մուտքերի և ելքերի տարանջատումը, բյուջեների ինքնուրույնությունը, բյուջեների մուտքերի և ելքերի արտացոլման լրիվությունը, բյուջեների հաշվեկշռվածությունը, բյուջետային ելքերի ամբողջական (համախառն) ծածկվածությունը, բյուջետային միջոցների օգտագործման արդյունավետությունը, բյուջեների հրապարակայնությունը, բյուջետային միջոցների հասցեագրվածությունը և նպատակայնությունը, բյուջեների իրատեսականությունը: Այս ամենը կազմում է միջբյուջետային հարաբերությունների հիմքը, ընդամին դրանք կարևորվում են որպես բյուջետային համակարգի տարրերը կապակցող գործընթացներ<sup>16</sup>: Այս հարաբերությունների իրավական կարգավորման խնդիրը ՀՀ-ում լուծված է: Մասնավորապես՝ օրենքով սահմանված են սուբսիդիաները, սուբվենցիաները, տրանսֆերտները և այլն, ինչպես նաև դրանց իրականացման կարգը և իրականացնողների լիազորությունները:

Նշված օրենքով բյուջետային գործընթացը ներկայացվում է որպես յուրաքանչյուր բյուջետային տարվա բյուջեները կազմելու, քննարկելու, հաստատելու և կատարելու, դրանց տարեկան հաշվետվությունը հաստատելու ուղղությամբ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների՝ օրենքով կանոնակարգված գործունեություն: Իրավական նորմերով հստակ սահմանված են նշված գործընթացների կատարման մեխանիզմները և կարգը, ներգրավված մարմինները և դրանց լիազորությունները: Ըստ էության, կարող ենք փաստել, որ օրենսդիրը ֆինանսական ռեսուրսներով ապահովման մեխանիզմների իրավական հիմքերը սահմանել է ամբողջությամբ: Սակայն հարկ ենք համարում նշել, որ ՀՀ-ում ծրագրային բյուջետավորմանն անցնելու հետ կապված՝ ոլորտի կարգավորման իրավական հիմքերը վերանայման կարիք կունենան<sup>17</sup>:

Նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման գործիքարանի իրավական հիմքերը սահմանված են «Գնումների մասին» ՀՀ օրենքով<sup>18</sup>, որը հստակեցնում է գնումների իրականացման կարգը, ձևերը, մասնակիցներին ներկայացվող պահանջները, պատվիրատուի լիազորությունները: Ընդհանուր առմամբ, պետք է նշել, որ օրենքը մանրամասնում է ապահովման գործիքարանը: Սակայն, կարծում ենք, որ այդ գործիքարանի իրավական հիմքերի խնդիրը պետք է դիտարկվի նաև երկու ուղղությամբ՝ պետական գնումների

<sup>16</sup> Տես «Бюджетное право», под. ред. Г. Б. Поляка, П. И. Кононова. М., 2008, сс. 145—147:

<sup>17</sup> Տես Վ. Ն. Ավետիսյան, ՀՀ պաշտպանության նախարարությունում ծրագրային բյուջետավորման համակարգի ներդրման և զարգացման որոշ հարցեր: «ՀԲ», 2010, հմ. 4:

<sup>18</sup> Տես «Գնումների մասին» ՀՀ 2010 թ. դեկտեմբերի 22-ի հմ. ՀՕ-206-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2010, հմ. 69 (803)):



միջոցով տնտեսության աշխուժացման հնարավորություն և պետական գնումների արդյունավետության մեծացման նախադրյալներ:

Այս առումով կարևորվում է պետության դերը տնտեսության զարգացման գործում: ՀՀ-ի համար ներկայումս գերակա խնդիր է տնտեսության մեջ ազատ մրցակցության ձևավորումը, մենաշնորհների վերացումը, դրանց իրականացման համար անհրաժեշտ իրավական հիմքերի զարգացումը<sup>19</sup>: Ընդ որում, ազատ մրցակցության ձևավորումը և շուկայում մրցակցության սրումը, մի կողմից, նպաստում են տնտեսության ընդհանուր զարգացմանը, նոր տեխնոլոգիաների ներդրմանը և այլ դրական տեղաշարժերի, մյուս կողմից՝ առողջ մրցակցության շնորհիվ պետական, այդ թվում՝ պաշտպանական, կարիքների բավարարմանը ավելի որակյալ ու մատչելի ապրանքներով, ծառայություններով և աշխատանքներով: Այդ նկատառումով միջազգային պրակտիկայում պետությունները որոշ մատակարար տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառում են տարբեր արտոնություններ՝ նպատակաուղղված ինքնարժեքը նվազեցնելուն կամ տվյալ սուբյեկտի ռեսուրսների սղությունը մեղմելուն<sup>20</sup>: Այս համատեքստում պետք է փաստել, որ ՀՀ-ում գնումների մասին օրենսդրությունը ոչ միայն չի սահմանում պետական գնումների տեսակետից նման արտոնությունների հնարավորություն, այլև հենց ինքն է հնարավոր գործընկերների միջև սահմանում որոշակի աստիճանակարգություն: Բանն այն է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքը, բացի ոչ բարեխիղճ տնտեսվարող սուբյեկտների թվի կրճատմանն ուղղված սահմանափակումներից, նախատեսում է նաև այլ սահմանափակումներ: Մասնավորապես՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական ու ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ: Փաստորեն, այս պահանջները տնտեսվարող սուբյեկտներին դասակարգում են ըստ ռեսուրսներով ապահովվածության, փորձառության և այլ չափանիշների: Մեր կարծիքով՝ նման մոտեցումը խոչընդոտում է ոլորտներում նոր կայացող կազմակերպությունների զարգացմանը՝ խաթարելով ազատ մրցակցության ճանապարհով պաշտպանական կարիքների բավարարման համար որակյալ ու մատչելի նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվների ձեռքբերումը:

*Այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ պաշտպանական գերարեսուրսային փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումը:*

<sup>19</sup> Տես Ա. Մարկոսյան, Մ. Միրզոյան, Բնական մենաշնորհների պետական կարգավորումը: Ե., 2002, էջ 90–91:

<sup>20</sup> Տես «Прогнозирование и планирование в условиях рынка», под ред. А. В. Пикюлькина. М., 2001, сс. 223—224:

Պաշտպանական գերատեսչությունն իր տնտեսական գործունեության ընթացքում փոխհարաբերվում է տարաբնույթ մարմինների հետ, որոնք կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- պետական կառավարման այլ մարմիններ,
- պաշտպանական գերատեսչությանը ենթակա առանձին մարմիններ, օրինակ՝ ՊՈԱԿ-ներ,
- մասնավոր կազմակերպություններ:

Տնտեսական ապահովման համատեքստում այլ մարմինների հետ պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունները ձևավորվում են ֆինանսական, նյութատեխնիկական և ոչ նյութական ակտիվներով ապահովման ընթացքում, իսկ դրանց բնույթը և բովանդակությունը կապված են պաշտպանական գերատեսչության ու նրա ստորաբաժանումների կարգավիճակի հետ (ինչի մասին մենք արդեն խոսել ենք):

Ինչպես նշվել է, պաշտպանական համակարգի առանձնահատկություններից մեկը նրա գործելն է տարբեր՝ խաղաղ և պատերազմական պայմաններում: Այս հանգամանքն իր արտացոլումն է ստանում տնտեսական գործունեության ընթացքում այլ մարմինների հետ փոխհարաբերություններում: Եթե խաղաղ պայմաններում պաշտպանական գերատեսչության տնտեսական գործունեության բովանդակությունը գրեթե չի տարբերվում այլ մարմինների գործունեությունից, ապա ռազմական դրության ժամանակ այն թե՛ բովանդակային, թե՛ ձևական առումով ենթարկվում է սկզբունքային կերպափոխման: Մասնավորապես՝ «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ օրենքը նախատեսում է հանրապետության տարածքում գործող իրավաբանական ու ֆիզիկական անձանց համար (այդ թվում՝ տնտեսվարող սուբյեկտների) որոշակի սահմանափակումներ և լրացուցիչ պարտականություններ, որոնք պետք է համապատասխանեն հայտարարված ռազմական դրության համար հիմք ծառայած հանգամանքներին<sup>21</sup>: Նշենք, որ իրավական նորմերով կարգավորված չեն ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման գործիքարանը, պաշտպանական գերատեսչության և այլ մարմինների փոխհարաբերությունները, ինչպես նաև տնտեսական ապահովման գործընթացում այլ կազմակերպությունների ներգրավվածության չափը և ձևը: Այս փաստը, մեր կարծիքով, լուրջ պրոբլեմ է, առանց որի լուծման ռազմական դրության դեպքում կարող է ուղղակիորեն խաթարվել տնտեսական ապահովման գործընթացը:

Ամփոփելով սույն հոդվածում կատարված վերլուծությունը՝ կարող ենք առանձնացնել հետևյալ հիմնական դրույթները.

- պետության, այդ թվում՝ նրա պաշտպանական համակարգի, տնտեսական գործունեության տնտեսական ապահովման իրավական հիմքերի կարևորությունը պայմանավորված է տնտեսական գործունեության ոլորտում պետության

<sup>21</sup> Տես «Ռազմական դրության իրավական ռեժիմի մասին» ՀՀ 2008 թ. նոյեմբերի 27-ի հմ. ՀՕ-198-Ն օրենքը («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2008, հմ. 73 (663)):

դերի, դրանից բխող գործառույթների, լիազորությունների, իսկ պաշտպանական համակարգի համար նաև երկու տարբեր իրավիճակներում՝ խաղաղ և պատերազմական պայմաններում, տնտեսական ապահովման մանրամասն իրավական ամրագրման անհրաժեշտությամբ,

- արդյունավետ տնտեսական ապահովման հիմնական իրավական բաղադրիչներն են պաշտպանական գերատեսչության կարգավիճակի և կառուցվածքի, նրա տնտեսական ապահովման գործիքարանի, ինչպես նաև այլ պետական մարմինների և այլ կազմակերպությունների հետ նրա փոխհարաբերությունների համակարգի իրավական ամրագրումները,

- կարգավիճակի առումով գորամասերը դուրս են մնում իրավական նորմերով սահմանված տնտեսական համակարգից, նրանք չունեն քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներ,

- ընդհանուր առմամբ, օրենսդիրը տնտեսական ապահովման գործիքարանի առումով ստեղծել է բավարար իրավական հիմքեր, սակայն խնդիրը պետք է դիտարկել նաև պետական գնումների միջոցով տնտեսության աշխուժացման հնարավորության և պետական գնումների արդյունավետության մեծացման նախադրյալների համատեքստում: Մասնավորապես՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսվող որոշ սահմանափակումներ խոչընդոտում են ազատ մրցակցության ճանապարհով պաշտպանական կարիքների արդյունավետ բավարարմանը,

- չկա ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման գործիքարանի, պաշտպանական գերատեսչության փոխհարաբերությունների, ինչպես նաև տնտեսական ապահովման գործընթացում այլ կազմակերպությունների ներգրավվածության չափի ու ձևի իրավական սահմանումը, ինչը կարող է հանգեցնել այդ պայմաններում տնտեսական ապահովման խաթարմանը:

Նկատի ունենալով վերը շարադրվածը՝ *առաջարկում ենք*.

1. ռազմական դրության ժամանակ տնտեսական ապահովման իրավական հիմքերի մշակման նպատակով ձևավորել միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ կազմված ուժային, տնտեսական և արդարադատության կառույցների համապատասխան պաշտոնյաներից ու մասնագետներից,

2. ստեղծել պետական գնումներին ավելի լայն շրջանով մասնակիցների ներգրավման իրավական հիմքեր՝ որպես թիրախ ունենալով կազմակերպություններին ներկայացվող պահանջների մեղմումը, ինչպես նաև ցածր շահութաբերությամբ գնման առարկայի համար արտոնությունների տրամադրումը,

3. ՀՀ պաշտպանության նախարարությունում ստեղծել տնտեսագետներից և իրավաբաններից կազմված ժամանակավոր աշխատանքային խումբ, որն զբաղվի գորամասերը քաղաքացիաիրավական հարաբերությունների սուբյեկտներին բնորոշ հատկանիշներով օժտելու խնդրով՝ մշակելով համապատասխան օրենքի նախագիծ:

ПРАВОВЫЕ ОСНОВЫ ЭКОНОМИЧЕСКОГО ОБЕСПЕЧЕНИЯ  
ОБОРОННОЙ СИСТЕМЫ РА

*М. А. ПАРВАНЯН, капитан, соискатель ИНСИ МО РА,  
начальник финансовой части ИНСИ МО РА, лектор кафедры управления ГЭУА*

РЕЗЮМЕ

Важное значение правовых основ экономического обеспечения оборонной системы обусловлено необходимостью детального правового закрепления роли государства и вытекающих из нее функций и полномочий в сфере экономической деятельности, а также процесса обеспечения в мирное и военное время.

В статье анализируются основные правовые составляющие эффективного осуществления экономического обеспечения—статус и структура оборонного ведомства, инструментарий экономического обеспечения, а также взаимоотношения с другими государственными органами и иными организациями, выявляются существующие проблемы и даются конкретные предложения по их решению.

THE LEGAL BASES OF ECONOMIC SUPPORT  
OF THE RA DEFENSE SYSTEM

*M. A. PARVANYAN, Captain, Graduate Student, INSS, MOD, RA,  
Head of the Financial Department, INSS, MOD, RA,  
Lecturer of the Chair of Management, SEUA*

SUMMARY

A vital importance of the legal bases of economic support of the defense system is stipulated by the necessity of the detailed legal consolidation of the state's role and the functions and powers resulting from it in the sphere of economic activity, as well as the support process both in peacetime and wartime.

The basic legal components of the efficient implementation of economic support, such as the status and structure of the defense agency, economic support tools, as well as mutual relations with other state bodies and diverse organizations are analyzed in the article. The existing problems are revealed and concrete proposals on their solution are given as well.

**ՌԱԶՄԱՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ  
ՀՀ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Մ. Ռ. ԻՍԱԽԱՆՅԱՆ, գեղասպետ, ՀՀ ՊՆ Ռազմաարդյունաբերական վարչության պետ, Ա. Ռ. ԹՈՎՄԱՍՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ՊՆ Կենտրոնական զինվորական ներկայացուցչության սպա*



ՀՀ-ում շուկայական տնտեսավարմանն անցնելու շրջանում իրականացվող բանակաշինության արդի փուլը բնութագրվում է ինտենսիվ բարեփոխումներով: ՌԻստի, տնտեսական ու ֆինանսական ռեսուրսների սղության հաշվառմամբ, առաջնային նշանակություն է ստանում ռազմական նպատակների համար նախատեսվող տնտեսական միջոցների արդյունավետ օգտագործումը, ինչը ենթադրում է բանակաշինության ոլորտում գիտականորեն հիմնավորված որոշումների ընդունում՝ դրանց համապատասխանեցմամբ բյուջեի հնարավորություններին:



Հաշվի առնելով ռազմական ոլորտի տնտեսական ապահովման էական առանձնահատկությունները՝ մենք առաջարկում ենք մտցնել «ռազմատնտեսագիտություն» հասկացությունը: Ռազմատնտեսագիտությունը բանակաշինության, պետության պաշտպանունակության ամրապնդման և պատերազմի վարման տնտեսական հիմքերի մասին գիտելիքների համակարգ է: Դա տնտեսագիտության ճյուղ է, որն ուսումնասիրում է ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, բաշխման, փոխանակման (շրջանառության) և սպառման հետ կապված հասարակական-տնտեսական հարաբերությունները\*:

Կարծում ենք, որ այդ գիտաճյուղի զարգացման շնորհիվ կստեղծվեն նպաստավոր պայմաններ «Ռազմական դոկտրինի» պահանջներին համապատասխանությամբ բանակաշինության, զինված ուժերի գործունեության և պետության պաշտպանունակության ապահովման տնտեսական հիմքերի ստեղծման ու զարգացման համար:

Այսպիսով՝ ռազմատնտեսագիտության հետազոտության օբյեկտ են զինված ուժերի և ռազմական նախանշանակման ապրանքների արտադրության, պաշտպանական համակարգի համար այլ անհրաժեշտ նյութական ռեսուրսների ձեռքբերման ոլորտները և դրանք կարգավորող հարաբերությունները:

Ռազմատնտեսագիտության ուսումնասիրության հիմնական ոլորտներից է ռազմաարդյունաբերությունը: Վերջինս բավարարում է ՋՈՒ-ի ռազմական կարիքները ոչ միայն ուղղակիորեն, այլև անուղակի կերպով՝ միջանկյալ ռազ-

\* Տվյալ սահմանումը ձևակերպված է ընդունված տնտեսագիտական սահմանումների հաշվառմամբ:

մական ապրանքների (ռազմական արտադրության միջոցների ու ռազմական արտադրության աշխատողների համար սպառման ապրանքների) ձևով:

Աշխարհում տեղի է ունենում սպառազինության որակական պարամետրների անընդհատ բարելավում: Այն կատարվում է տարբեր եղանակներով, այդ թվում՝ սպառազինության միավորների մի քանի գործառնությունների համատեղմամբ, ինչը հանգեցնում է սպառազինության արտադրատեսակների քանակի կրճատմանը (օրինակ՝ հրետանային կողմնացույց-անկյունաչափի (բուսու) և հեռաչափի փոխարեն կարելի է արտադրել սպառազինության մեկ միասնական արտադրատեսակ, որում միավորված լինեն այդ երկու գործիքի գործառնությունները): Այս հանգամանքը ռազմատնտեսագիտության առջև դնում է միանգամայն նոր ու խիստ պահանջներ, այն է՝ խորքային ուսումնասիրություններ, նոր մոտեցումների և տեխնոլոգիական առաջարկությունների մշակումներ՝ գիտատեխնիկական նորամուծությունների հաշվառմամբ:

Կան մի շարք պրոբլեմներ, որոնց անտեսումը կարող է բացասաբար ազդել գիտաճյուղի հեռանկարային զարգացման վրա: Գիտաճյուղի հեռանկարային զարգացման համար կարող են պրոբլեմներ ծագել, եթե՝

- հատկացվող բյուջետային միջոցները չհամապատասխանեն զինված ուժերի պահանջումներին (ոչ բավարար լինեն),
- թերի լինեն զինված ուժերի կառավարման, սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով ապահովման, ռազմական կրթության համակարգերը,
- բանակաշինության տեսակետից տնտեսության գիտական վերլուծությունը լինի ոչ բավարար համակարգված և ընդհատ բնույթի,
- կան ռազմատնտեսագիտության մեթոդաբանական թերություններ, այդ թվում՝ մշակված չեն ռազմատնտեսագիտական ներկայիս պայմաններին համարժեք մոդելներ, որոնք պետք է ունենան ոչ միայն տեսական, այլև գործնական նշանակություն,
- կայացած չէ ռազմատնտեսագիտական բնույթի հետազոտությունների կատարման համար կադրերի պատրաստման համապատասխան համակարգը:

**Ռազմատնտեսագիտության գերակա խնդիրն է** մշակել արդյունավետ մոդել, որում հաշվառված լինեն ռազմական, տնտեսական, բարոյահոգեբանական, կադրային, ինչպես նաև այլ պետությունների հետ ունեցած քաղաքական, ռազմական, տնտեսական կապերն ու մի շարք այլ գործոններ: Մոդելը պետք է լինի տնտեսական ծախսումների առումով օպտիմալ և իր մասով ապահովի համապետական մի շարք խնդիրների լուծում: Այդ խնդիրներից են՝

- ռազմական սպառնալիքների չեզոքացումը կամ հավանական պատերազմի արդյունավետ ընթացքի ու ելքի ապահովումը,
- պետության պաշտպանունակության ապահովումը,
- անձնակազմի հայրենասիրության ու բարոյական ոգու և մարտունակության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- Զինված ուժերի մարտական պատրաստության ապահովումը, և այլն:

ՀՀ պաշտպանական բարեփոխումների շրջանակներում ռազմատնտեսագիտության խնդիրների լուծման համար անհրաժեշտ են հետևյալ միջոցառումները.

- ռազմատնտեսական հարաբերությունների ուսումնասիրում և ռազմատնտեսական քաղաքականության գիտական հիմքերի մշակում,

- բոլոր ուժային կառույցների համար ռազմասոցիալական քաղաքականության միասնական հայեցակարգի ստեղծում, մի հայեցակարգի, որում պետք է որպես մեկ ընդհանուր համակարգ դիտվի և ուսումնասիրվի զինծառայողների «կյանքի փուլաշրջանը»,

- ուժային կառույցներում հաշվապահական հաշվառման տեսական և գործնական հանձնարարականների մշակում ու ներդրում,

- ռեսուրսաապահովվածության խնդիրների և խնայողության ռեժիմի կիրառական մշակում:

Բոլոր ուժային մարմինների համար ֆինանսատնտեսական գործունեության միասնական համակարգ ներդրելու անհրաժեշտությունից ելնելով՝ նպատակահարմար ենք համարում դրանց համար մշակել ընդունելի բյուջետային հայտերի կազմման նոր մեթոդիկա, որում հաշվի առնված լինեն ռազմատնտեսական ցուցանիշների հաշվառման և վերլուծության տեսական ու գործնական արդյունքները, և որով իրականացվի ֆինանսական գործունեության վերահսկողության ապահովումը, իր մասով բանակի կազմակերպական կառուցվածքի բարելավումը և անձնակազմի թվաքանակի օպտիմալացումը, ինչպես նաև կառավարման համակարգերի, անձնակազմի վերապատրաստման, դաստիարակման, մարտական և օպերատիվ պատրաստության մակարդակի բարձրացման և տեղեկույթի հավաքման ու դասակարգման մեթոդների բարելավման տնտեսական հիմքերի մշակումը, և այլն:

Վերը նշված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ է մշակել գիտականորեն հիմնավորված միասնական ռազմաֆինանսական քաղաքականություն և, առաջին հերթին, այնպիսի ռազմաբյուջետային քաղաքականություն, որում ֆինանսական ռեսուրսների սահմանափակության պայմաններում օբյեկտիվորեն արտացոլված լինեն Ձինված ուժերի գերակա պահանջները:

Ռազմատնտեսագիտական արդյունավետ մոդելների մշակման ու դրանց կիրառման պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել պետության ռազմական կառույցի համար անհրաժեշտ բոլոր ծախսերը: Այդ ծախսերից նշենք մի քանիսը.

- Ձինված ուժերի և այլ զորքերի, զորամիավորումների պահպանման ծախսերը,

- սպառազինության և ռազմական տեխնիկայի ձեռքբերման, գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքներին ուղղված ծախսերը,

- կապիտալ շինարարության ոլորտում նախատեսվող ծախսերը,

- զորահավաքային հզորությունների, զորահավաքային պահուստների պահպանման և զորահավաքային պատրաստման հետ կապված ծախսերը,

– ռազմաարդյունաբերական ոլորտի ընկերություններին աջակցության, դրանց անխափան աշխատանքի ապահովման ծախսերը,

– գինձառայողների դրամական բավարարման և թռչակով ապահովման ծախսերը:

Ռազմական համակարգի տարեկան ծախսերը որոշելիս պետք է հաշվի առնել՝ սպառնալիքների ու վտանգների աստիճանը, Ջինված ուժերի և այլ զորքերի վիճակն ու զարգացման կանխատեսումը, պետության ընթացիկ տարվա սոցիալ-տնտեսական զարգացման և ռազմաարդյունաբերական համակարգի վերաբերյալ տվյալների վերլուծության արդյունքները:

Գումարների չափի մեծությունը պետք է որոշվի հետազոտությունների միջոցով: Նման դեպքում անհրաժեշտ է հիմք ընդունել բյուջեի ծախսային հոդվածների դասակարգումը և այդ դժվարին խնդրի լուծման փուլայնության պահպանումը, ինչն ունի ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական նշանակություն:

Չբացառելով հիմնականում տնտեսագիտության ու ռազմական գիտության փոխգործությամբ ռազմատնտեսագիտության խնդիրների հետագա մշակման անհրաժեշտությունը՝ կարող ենք պնդել, որ ակտիվ ռազմատնտեսագիտական ուսումնասիրությունը պետք է լինի մասնագիտական մարմինների ուշադրության կենտրոնում՝ որպես ազգի ու պետության անվտանգ զարգացման երաշխիք և տնտեսագիտության զարգացման հեռանկարային ուղղություն: Նման մոտեցումը հատկապես կարևոր է այնպիսի գործընթացների ուսումնասիրության և օպտիմալացման ժամանակ, ինչպիսիք են պաշտպանական բարեփոխումները:

Այս համատեքստում անհրաժեշտ է նաև մշակել **միասնական ռազմատնտեսական քաղաքականություն**: Խոսքը վերաբերում է միջգերատեսչական կապերին, ռազմական կառույցի զարգացմանը՝ որպես մեկ միասնական օրգանիզմի: Դա իր հերթին ենթադրում է ռազմաֆինանսական, ռազմասոցիալական, ռազմաարդյունաբերական ու ռազմատեխնիկական միասնական քաղաքականության մշակում և իրականացում, կադրերի պատրաստման միասնական համակարգի ստեղծում, նյութատեխնիկական ու տեխնիկական աջակցություն և այլն:

Ռազմատնտեսագիտության զարգացման հիմնական ուղղություններից մեկը պաշտպանական բարեփոխումների ծրագիրն է, որի շրջանակներում անհրաժեշտ է մշակել ուժային նախարարությունների և գերատեսչությունների զարգացման ծրագրերը, այդ թվում նաև ռազմական և հատուկ նախանշանակման տեխնիկայի զարգացման, սպասարկման ծառայությունների զարգացման, գինձառայողների սոցիալական ապահովության ծրագրերը: Որպեսզի պաշտպանական ոլորտի պատվերները լինեն իրատեսական և գիտականորեն հիմնավորված, անհրաժեշտ է դրա բոլոր տարրերի օպտիմալացում:

Այնհայտ է, որ ռազմական կառույցի ծրագրերի կազմման համար անհրաժեշտ է ստեղծել գիտամեթոդաբանական ստորաբաժանում, որն զբաղվի ռազմատնտեսագիտության հետևյալ հիմնական ուղղություններով՝



1) շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմական ոլորտում գործող տնտեսական օրենքների ուսումնասիրություն և դրա կատարելագործմանն ուղղված առաջարկությունների մշակում,

2) ռազմատնտեսական ռեսուրսների օգտագործման արդյունավետության ուսումնասիրություն մակրո- և միկրոմակարդակներում (այսինքն՝ ամբողջ Ձինված ուժերի և առանձին զորամասերի մակարդակներով),

3) շուկայական հարաբերությունների պայմաններում ռազմատնտեսական պահանջմունքների և դրանց բավարարման ուղիների վերլուծություն, ռազմատնտեսական կառավարման հիմնական ուղղությունների կատարելագործում,

4) գիտատեխնիկական ներուժի ներդրման ուղիների մշակում,

5) Ձինված ուժերի և շրջակա միջավայրի փոխգործության ուսումնասիրում (բնապահպանական ուղղություն), և այլն:

Այսպիսով՝ մեր պետության համար, որը գտնվում է ո՛չ պատերազմի և ո՛չ էլ խաղաղության պայմաններում, ինչպես նաև կիսաշրջափակման մեջ, անհրաժեշտ է պաշտպանությանը հատկացված ֆինանսական միջոցները ծախսել ռացիոնալ՝ ապավինելով ռազմատնտեսագիտական տեսությանը, որը ռազմական դոկտրինին համահունչ իր խնդիրներով, գործառնություններով, վերլուծություններով և ընդհանրացումներով, անընդհատ փոփոխվող աշխարհաքաղաքական իրավիճակի հաշվառմամբ, իր մասով կնպաստի ՀՀ ՁՈՒ-ի զարգացման նոր ուղղությունների և հեռանկարների մշակմանը, ինչն էլ իր հերթին ավելի կբարձրացնի պետության պաշտպանունակության մակարդակը:

#### ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Հայաստանի Հանրապետության ռազմական դոկտրին»: «Աշխատանքային տեսերեր», 2007, հմ. 4:

2. *Ս. Ս. Ավերիյան, Ռ. Ս. Թովմասյան*, Տնտեսագիտության տեսություն. ուսումնական ձեռնարկ: Ե., 2010:

3. *В. В. Баскаков, Д. В. Гордиенко, А. С. Мошкин*. Военно-экономическая составляющая безопасности страны. Монография. М., 2008.

4. *Д. В. Гордиенко, А. С. Хохлов*. Военно-экономическая безопасность государства.

## ПОНЯТИЕ И ЗАДАЧИ ВОЕННО-ЭКОНОМИЧЕСКОЙ НАУКИ В КОНТЕКСТЕ ОБОРОННЫХ РЕФОРМ РА

*М. Р. ИСАХАНИЯН, полковник, начальник Военно-промышленного управления  
МО РА, А. Р. ТОВМАСЯН, старший лейтенант,  
офицер Центрального военного представительства МО РА*

### РЕЗЮМЕ

Строительство ВС РА на нынешнем этапе характеризуется интенсивностью процессов реформирования, осуществляемых в условиях перехода к рыночной экономике. В данных обстоятельствах, с учетом ограниченности финансово-экономических ресурсов государства, первоочередной становится задача рационального использования экономических средств,

выделяемых на военные нужды. Для решения этой задачи оптимизации необходим строго обоснованный научный подход, который может быть обеспечен в рамках военно-экономической науки, представляющей собой систему знаний об экономической базе подготовки государства и его ВС к обороне и ведению войны. Военно-экономическая наука является разделом экономической науки, изучающим общественно-экономические отношения в процессе производства, распределения, обмена (товарооборота) и сбыта товаров военного назначения.

Основными задачами военно-экономической науки являются разработка экономической политики государства в оборонной сфере и создание модели перспективного развития военной экономики, в частности, решение проблем несоответствия выделенных бюджетных средств потребностям ВС, несовершенства систем управления ВС, обеспечения ВВТ и военного образования, обеспечения системного подхода к анализу экономики с точки зрения строительства ВС с учетом военных, экономических, морально-психологических, кадровых и других факторов.

## THE NOTION AND TASKS OF THE WAR ECONOMY SCIENCE IN THE CONTEXT OF THE RA DEFENSE REFORMS

*M. R. ISAKHANYAN, Colonel, Head of the Military-Industrial Directorate, MOD, RA,  
A. R. TOVMASYAN, Senior Lieutenant, Officer of the Central Military Mission,  
MOD, RA*

### SUMMARY

The formation of the RA Armed Forces at the current stage is characterized by the intensity of reforming processes being implemented in conditions of the switch to the market economy. In these circumstances, taking into account the state's limited financial and economic resources, the problem of rational use of economic means allocated to the military needs becomes urgent. For solving this optimization problem a rigorously substantiated academic approach is needed. This approach can be provided within the framework of war economy science which is a system of knowledge about the economic base to prepare the state and its Armed Forces for defense and to wage war. War economy science is a branch of economics studying the socio-economic relations in the process of production, distribution, exchange (commodity turnover) and sales of military goods.

The main tasks of war economy science is to elaborate the state's economic policy in the defense sector and create a model of perspective development of war economy science, particularly: solution of the problems of incompatibility of the allocated budget means with the Armed Forces needs; imperfections of the Armed Forces systems of control, of supply with armament and military equipment and of military education; ensuring a systemic approach to the analysis of economy in terms of the Armed Forces formation taking into account military, economic, moral and psychological, staffing and other factors.

## ՄԱՐՏԱՎԱՐԱԿԱՆ ՔՈՂԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԻՋՈՑՆԵՐ



«U-300» հրթիռային համալիրի փչովի կաղապարվածք (մուլյաժ)  
([http://www.inosmi.ru/photo/20100830/162553264\\_3.html](http://www.inosmi.ru/photo/20100830/162553264_3.html))



«F-16» կործանիչի գունաքողարկում  
(<http://defense-update.com/products/f/f-16-camo.htm>)



Տանկի մանրակերտ

(<http://bad-ladyin.livejournal.com/12054.html>)



Քողարկում քողարկիչ խալաթների օգտագործմամբ

(<http://zabort.ru/blog/poznavatelno/10751.html>)

**ՔՈՂԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՏԱՐԱՇԱՐԺԸ՝  
ՈՐՊԵՍ ՀՕՊ-Ի ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄԱՐՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ  
ՊԱՀՊԱՆՄԱՆ ԿԱՐԵՎՈՐ ՄԻՋՈՑ**

*Խ. Թ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, գնդապետ, ռազմական գիտությունների թեկնածու,  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի պետի  
ուսումնական գծով տեղակալ, Վ. Բ. ԲԱՂԴԱՍՏՐՅԱՆ, մայոր,  
ՀՀ ՊՆ Վ. Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտի համագորային  
ֆակուլտետի գորադեսակների և ծառայությունների ամբիոնի  
ՀՕՊ-ի խմբի դասախոս*



Ինչպես հայտնի է, ժամանակակից մարտը բնութագրվում է արագընթացությամբ, իրադրության կտրուկ փոփոխություններով և մեծ լարվածությամբ: Ներկայիս զինված հակամարտությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ ցամաքային զորքերի հարվածա-



յին խմբավորումների հարձակմանը նախորդում է ռազմաօդային ուժերով իրականացվող կենտրոնացված ներգործությունը: Ընդամին, կարճ ժամկետում հակառակորդի առավել կարևոր օբյեկտները շարքից հանելու, պետական և ռազմական կառավարման համակարգերը կազմալուծելու, պաշտպանվող զորքերի մարտունակությունը նվազեցնելու համար հարձակվող կողմի ռազմաօդային ուժերը օդային հարվածների համար առանձնացնում են թռիչքային պաշարի մինչև 80 %-ը: Օդում գերակշռություն ձեռք բերելու նպատակով նրանք հիմնական թիրախ են դարձնում պաշտպանվող կողմի ՀՕՊ-ի միջոցները: Ուստի վերջինիս համար առաջնահերթ խնդիր է ՀՕՊ-ի զորքերի մարտունակության պահպանումը, որի կարևոր միջոցառումներից է մարտավարական քողարկման և տարաշարժի ժամանակակից եղանակների կիրառումը:

ՀՕՊ-ի համակարգի զենիթահրթիռային, ռադիոտեխնիկական զորքերի և ՀՕՊ-ի օդուժի հիմնական խնդիրն է օդային հակառակորդի պատեհաժամ հայտնաբերումը և խոցման գոտիների սահմաններում ոչնչացումը, ինչի համար անհրաժեշտ է՝

– ՀՕՊ-ի ուժերի և միջոցների գործողությունների հստակ պլանավորում և հմուտ ղեկավարում,



– ՀՕՊ-ի գորքերի բարձր մակարդակի մարտական պատրաստության ապահովում,

– ՀՕՊ-ի առկա միջոցների ճիշտ և նպատակային օգտագործում,

– ռազմաօդային ուժերի, ՌԷՊ-ի և տեխնիկական այլ միջոցների հետ փոխ-գործության կազմակերպում:

Այս պահանջների կատարումից է կախված ՀՕՊ-ի համակարգի գործողությունների արդյունավետությունը: Այսպես. իրաքյան հակամարտության ժամանակ օգտվելով հակառակորդի ՀՕՊ-ի համակարգի կառավարման թերությունից՝ դաշնադրային ուժերը կարողացան ոչ միայն զգալի առավելության հասնել օդում, այլև պաշտպանության ամբողջ խորությամբ ոչնչացնել հակառակորդի զորամիավորումները, պետական և ռազմական նշանակության օբյեկտները: Վրաց-օսեթական հակամարտության առաջին օրերին վրացական կողմը՝ այլ երկրների աջակցությամբ\*, հնարավորություն ստեղծեց իր ՀՕՊ-ի ուժերի գործողությունները արդյունավետ կերպով ղեկավարելու և դրանով իսկ ռուսական ավիացիային վնասներ հասցնելու համար:

Արդի զինված հակամարտությունների փորձը ցույց է տալիս, որ ՀՕՊ-ի ուժերի և միջոցների մարտունակության պահպանման կարևորագույն տարրերից են արդյունավետ քողարկման խնդիրների լուծումը և մարտական տարբեր իրավիճակներում տարաշարժի կազմակերպումը:

ՀՕՊ-ի համակարգում քողարկումը կազմակերպվում և իրականացվում է հակառակորդի հետախուզության բոլոր միջոցներից յուրային ՀՕՊ-ի գորքերի իրական դիրքերը թաքցնելու նպատակով, հիմնականում՝

– ՀՕՊ-ի ստորաբաժանումների և սպառազինության ծածուկ տեղաշարժմամբ և տեղակայմամբ, կեղծ կրակային դիրքերի ու կրակակետերի սարքավորմամբ,

– ռադիո- և ռադիոտեղորոշումային կայանների աշխատանքում սահմանափակումների կիրառմամբ,

– ռադիոտեխնիկական, օպտիկական, ռադիոտեղորոշումային, ձայնային և այլ տեսակի հետախուզությունից քողարկման միջոցների կիրառմամբ,

– ապաքողարկիչ հատկանիշների հայտնաբերմամբ և վերացմամբ:

Ռադիոքողարկման, կեղծ կրակային դիրքերում նույն հաճախականություններով աշխատող հաղորդիչների օգտագործումը, աշխատանքային հաճախականությունների փոփոխումը և ՌԷՊ-ի հետ համագործակցությունը հնարավորություն են տալիս բարձրացնելու ՀՕՊ-ի զենիթահրթիռային և ռադիոտեխնիկական միջոցների մարտունակության մակարդակն ու ապահովելու դրանց գոյունակությունը: Այսպես. արաբա-իսրայելական զինված հակամարտության ժամանակ արդյունավետ կերպով կազմակերպելով ՀՕՊ-ի և ՌԷՊ-ի ուժերի ու միջոցների համագործակցությունը՝ պաշտպանվող (արաբական) կողմը ՌԷՊ-ի

\* Ռուսական կողմի պնդմամբ՝ վրացական զինուժին այդ ժամանակ աջակցում էին ուկրաինական ՀՕՊ-ի ուժերը:

միջոցներով պարբերաբար առաջացնում էր ռադիոխանագարումներ: Որպես արդյունք՝ իսրայելական ինքնաթիռները, գրկվելով վրագետնյա կառավարման կետերի հետ անընդհատ կապից, ստիպված էին վերադառնալ իրենց տեղակայման կայաններ՝ առանց մարտական խնդիրները կատարելու:

ՀՕՊ-ի միջոցները նմանարկող մանրակերտների ու կեղծ կառույցների հմուտ կիրառմամբ կարելի է ապակողմնորոշել հակառակորդին՝ անարդյունավետ դարձնելով նրա կրակային միջոցների օգտագործումը: Օրինակ՝ հարավ-սլավական պատերազմի ժամանակ դաշնադրային ուժերի հրամանատարությանը ներկայացված օդուժի առաջադրանքի կատարմանը վերաբերող հետախուզական տվյալները ոչ լիովին էին համապատասխանում իրականությանը, ուստի և օդային հարվածների մի մասը հասցվում էր կեղծ նշանակետերի:

Արագ փոփոխվող մարտական իրադրությունում ՀՕՊ-ի ուժերի գործողությունների արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ են շարժունակ սպառազինության առկայություն, նախնական մանրագնին պլանավորում և անընդհատ օպերատիվ կառավարում: Կարևոր հանգամանք է հիմնական և պահեստային դիրքերի ճիշտ ընտրությունը, որն զգալի չափով պայմանավորված է հակառակորդի օդային հարձակման միջոցների տեղաբաշխման վայրերի և հարձակման հավանական ուղղությունների ճիշտ որոշմամբ:

Մարտական գործողություններն սկսելուց առաջ հարկ է՝ ճիշտ ընտրել կրակային դիրքերը, հետախուզել այնտեղ տանող բոլոր ճանապարհները, նախապես կատարել ամրաշինական և կապակցման աշխատանքները, ինչպես նաև ՀՕՊ-ի միջոցների տարաշարժի համար անհրաժեշտ ժամանակի հաշվարկումը: Եթե տարածաշրջանն ունի բարդ լեռնային ռելիեֆ, ուստի և ճանապարհային ցանցը զարգացած չէ, ապա ՀՕՊ-ի միջոցների տարաշարժի և կրակային դիրքերի ընտրության գործում առաջ են գալիս լրացուցիչ դժվարություններ: Օրինակ՝ փոքր հեռահարությամբ Ս-125 ՁՀՀ-ի միայն մեկ կրակային դիրքի համար անհրաժեշտ է մինչև 7–10 կմ<sup>2</sup> տարածություն, որով ապահովվում է տեխնիկական միջոցների տեսանելիության հնարավորությունը: ՀՕՊ-ի միջոցների տարաշարժի ժամանակի հաշվարկումները պետք է կատարվեն ըստ հակառակորդի օդային հարվածների պարբերականության, որպեսզի տարաշարժ կատարող ստորաբաժանումները հնարավորություն ունենան պահեստային դիրքում վերականգնելու մասնակիորեն կորցրած մարտունակությունը:

Հակառակորդի օդային հարվածների պարբերականությունը նվազեցնելու տարբերակ է նաև հարձակմանը դիմագրաված և մարտունակությունը չկորցրած ՀՕՊ-ի միջոցների կրակի տարաշարժը, ինչպես նաև եղած պահեստային ուժերի և միջոցների ներգրավումը: Օրինակ՝ հարավսլավական բանակի ՀՕՊ-ի ղեկավարությունը, վերը հիշատակված զինված հակամարտության ընթացքում օպերատիվ օղակում չունենալով ՀՕՊ-ի արդիական միջոցներ ու ռազմաօդային ուժեր, որոշում էր կայացրել իր հիմնական ուժերը կենտրոնացնելու մարտավարական օղակում: Դա հակաօդային պաշտպանության միջոցներին հնարա-

վորություն էր ընձեռել տարաշարժի միջոցով օդային հարվածներից պաշտպանելու մարտական գործողություններում ընդգրկված զորամասերը և կարևորագույն օբյեկտները: Այսպես, հարավլավական պատերազմում Ս-125 շարժական զենիթահրթիռային համալիրը 79 օրում անցել էր 12000 կմ՝ փոխելով մինչև 14 կրակային դիրք, իսկ ռադիոտեխնիկական ստորաբաժանումները տարաշարժի ընթացքում զբաղեցրել էին 30-ից ավելի նոր դիրքեր:

Այսպիսով՝ ՀՕՊ-ի համակարգի մարտունակության պահպանման և գործողությունների արդյունավետության ապահովման գրավականն է նրա մարտական հնարավորությունների առավելագույնս օգտագործումը՝ մարտավարական քողարկման և տարաշարժի ժամանակակից միջոցների կիրառմամբ: Մինևույն ժամանակ, օդային հարձակման միջոցների բուռն զարգացումը հանգեցնում է ՀՕՊ-ի համակարգի կատարելագործման անհրաժեշտությանը:

ՀՕՊ-ի համակարգի զարգացման համար, մեր կարծիքով, անհրաժեշտ են՝  
 – վերջին տեղային պատերազմներում ՀՕՊ-ի փորձի ուսումնասիրության հիման վրա նոր մարտավարական եղանակների գիտական մշակում,

– ՀՕՊ-ի համակարգի կենտրոնացված ղեկավարման և օպերատիվ կառավարման համակարգերի կատարելագործում՝ բարձր տեխնոլոգիաների, ժամանակակից համակարգչային տեխնիկայի ու կապի միջոցների օգտագործմամբ,

– ռադիոտեխնիկական հետախուզության ավտոմատ համակարգերի կիրառում,

– ռադիոտեղորոշումային միջոցների տեսանելիության գոտիների վերլուծական հաշվարկումների բարձր ճշգրտության ապահովում՝ մաթեմատիկական մոդելավորման մեթոդների կիրառմամբ,

– ճանապարհային ենթակառուցվածքների զարգացում և շարժունակ սպառազինության ձեռքբերում,

– մարտահաշվարկի գործողությունների վերահսկման ու գնահատման համակարգի զարգացում,

– ՀՕՊ-ի գորքերում սպառազինության նմուշների արդիականացման, մասնագետների պատրաստման և վերապատրաստման գործընթացների շարունակականության ապահովում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. X. *Хачатрян*. Подготовка первой оборонительной операции общевойскового ОТО в условиях горной местности. М., 2009.
2. A. *Михайлов*. Пятидневная война: итоги в воздухе. М., 2003.
3. M. *Попович*. Обоснование рекомендаций командиру соединения ПВО по планированию боевых действий в современных условиях. Тверь, 2003.
4. Խ. Թ. *Խաչատրյան*, Ա. Հ. *Բայրամյան*, Հակառակորդի հետախուզությունից յուրային ստորաբաժանումների քողարկման հարցի շուրջ: «ՀԲ», 2010, հմ. 3:
5. Ա. Խ. *Համբարյան*, ՀՀ ՊՆ հակաօդային պաշտնամտության գորքերը՝ 12 տարեկան: «ՀԲ», 2004, հմ. 3–4:
6. Ա. Ա. *Պողոսյան*, ՀՕՊ-ի գորքերում մարտական պատրաստման որոշ հարցեր: «ՀԲ», 2006, հմ. 3:



**ОПЕРАТИВНОЕ ИСКУССТВО**

**МАСКИРОВКА И МАНЕВРИРОВАНИЕ КАК ВАЖНОЕ СРЕДСТВО  
СОХРАНЕНИЯ БОЕСПОСОБНОСТИ СИСТЕМЫ ПВО**

*Х. Т. ХАЧАТРЯН, полковник, кандидат военных наук, заместитель начальника  
Военного института им. В. Саргсяна МО РА по учебной части,  
В. Б. БАГДАСАРЯН, майор, лектор группы ПВО кафедры видов войск и служб  
общевоинского факультета Военного института им. В. Саргсяна МО РА*

**РЕЗЮМЕ**

Важным способом сохранения боеспособности системы ПВО являются маскировка и маневрирование, осуществляемые в целях сокрытия от противника дислокации своих войск, отвлечения направления ударов средств воздушного нападения (СВН) противника на ложные объекты и обеспечения внезапности их поражения. Маскировка включает имитацию, цветомаскировку, ухудшение условий видимости и т. д. Маневрирование осуществляется с учетом рельефа данной местности и ТТХ средств ПВО.

В статье данная проблема рассматривается на примерах организации маскировки и маневрирования в современных вооруженных конфликтах, отмечается необходимость усовершенствования системы ПВО для обеспечения ее адекватности быстро развивающимся СВН и приводится ряд предложений по ее развитию.

**OPERATIVE ART**

**CAMOUFLAGING AND MANEUVERING AS AN IMPORTANT MEANS  
OF KEEPING FIGHTING EFFICIENCY OF THE AIR DEFENSE SYSTEM**

*Kh. T. KHACHATRYAN, Colonel, PhD in Military Sciences, Deputy Head  
of the Curriculum Department of V. Sargsyan Military Institute,  
V. B. BAGHDASARYAN, Major, Lecturer at the Air Defense Group of the  
Chair of Arms and Services of the General Faculty of V. Sargsyan Military Institute*

**SUMMARY**

The basic methods of keeping fighting efficiency of the Air Defense System are the camouflaging and maneuvering implemented for concealing the distribution of their troops from an enemy, distracting the enemy's air strikes direction to false objectives and ensuring their surprise defeat. Camouflaging includes the simulation, color camouflage, deterioration of visibility conditions, etc. Maneuvering is implemented with regard to the given relief and the performance characteristics of the Air Defense.

The article reviews this problem by examples of organizing the camouflage and maneuvering in contemporary armed conflicts. The necessity of improving the Air Defense system to ensure its adequacy to rapidly developing means of air assault is mentioned. A number of proposals on developing this system is given as well.

**ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԵՆՔԸ  
ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ  
ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

*Ա. Պ. ՆԱԶԱՐԵԹՅԱՆ, մայոր, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի  
«Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի բաժնի պետ*



Վերջին հարյուրամյակում տեղի ունեցած կտրուկ գիտատեխնիկական առաջընթացը հանգեցրեց զինված պայքարի որակապես նոր միջոցների ստեղծմանը և ըստ այդմ՝ պատերազմների վարման հայեցակարգերի վերանայմանը: Գործնականում բոլոր նախորդ սերունդների պատերազմներում կիրառվել է այնպիսի զենք, որը ներգործել է գերազանցապես կինետիկ, քիմիական կամ ջերմային էներգիայով: Մինչդեռ ապագա զինված պայքարում ավելի հաճախ կկիրառվեն սկզբունքորեն այլ տեսակի զենքեր, որոնց գործողությունը հիմնված կլինի հիմնարար ու կիրառական գիտության նորագույն նվաճումների և հայտնագործությունների վրա<sup>1</sup>:

Ընդհանուր առմամբ մարտական զենքը սահմանվում է որպես զինված պայքարում հակառակորդի ռչնչացման միջոց, որն օգտագործվում է թե՛ հարձակման, թե՛ պաշտպանության նպատակով: Այն բաժանվում է հետևյալ տեսակների՝ տվորական, զանգվածային ռչնչացման և նոր ֆիզիկական սկզբունքների վրա հիմնված<sup>2</sup>:

Վերջին խումբը կազմում են ոչ ավանդական զենքերը (մասնավորապես՝ հնարավոր տեսակները), որոնց խոցիչ ազդեցությունը հիմնված է նախկինում կիրառություն չստացած ֆիզիկական երևույթների վրա: Դրանց թվին են պատկանում երկրաֆիզիկական, ինֆրաձայնային, զենետիկական, լազերային, գերբարձրհաճախականային, էլեկտրամագնիսական, ռադիոլոգիական, փնջային, էթնիկական, հոգեխոցիչ, անհիլլացիոն (հակամատերիա) և այլ զենքեր<sup>3</sup>:

Բոլոր զենքերն էլ այս կամ այն չափով բացասաբար են ազդում բնական համակարգերի վրա. ընդսին դրանց ներգործության աստիճանը պայմանավորված է հիմնականում ավերիչ ուժով: Սակայն այժմ կան կամ մշակման փուլում են գտնվում այնպիսի զինատեսակներ, որոնց թիրախը հենց բնությունն է, շրջակա

<sup>1</sup> Տես *В. Круглов, Ю. Иванов, А. Асеев. Какое оружие будет применяться в войнах XXI века? «Обозреватель-Observer», 2004, № 8 ([http://www.rau.su/observer/N8\\_2004/8\\_08.HTM](http://www.rau.su/observer/N8_2004/8_08.HTM)):*

<sup>2</sup> Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 932:

<sup>3</sup> Տես նույն տեղում, *Аулс` Վ. Կրուգով, Յու. Բվանով, Ա. Ասին, Նշ. աշխ:*

բնական միջավայրը: Դրանցից է երկրաֆիզիկական զենքը, որը ներգործում է երկրաբանության՝ քարաբանության, ջրաբանության, մթնոլորտի, մերձերկրային տիեզերական տարածության վրա: Այդպիսի զենքերի կիրառմամբ պատերազմները կոչվում են երկրաֆիզիկական պատերազմներ<sup>4</sup>:

Ի՞նչ է երկրաֆիզիկական զենքը: Դա միջոցների մի համախումբ է, որը հնարավորություն է տալիս ռազմական նպատակներով օգտագործելու անհավասարակշիռ վիճակներում գտնվող միջավայրի վրա համեմատաբար թույլ արտաքին զարկերի միջոցով արհեստականորեն հարուցվող բնական պրոցեսների ու երևույթների կործանարար ազդեցությունը (*տրիգերային էֆեկտ*<sup>\*</sup>): Կախված այն միջավայրից (պինդ, հեղուկ, գազային), որում տեղի են ունենում այդ պրոցեսները, տվյալ զինատեսակը պայմանականորեն բաժանում են քարաբանային, ջրաբանային, մթնոլորտային, կենսոլորտային, երկրատիեզերական զենքերի<sup>\*\*</sup>: Սինույն ժամանակ հարկ է նշել, որ երկրաֆիզիկական զենքերի փորձարկումներին էական խոչընդոտում է այն հանգամանքը, որ դրանց կիրառման հետևանքները (նաև դրանց առաջացման հնարավոր երկարատևության պատճառով) դժվար հաշվարկելի են և հաճախ՝ պարզապես անկանխատեսելի:

Խոցիչ երկրաֆիզիկական գործոններ խթանող միջոցները կարող են լինել զանազան (օրինակ՝ որոշակի ֆիզիկաքիմիական նյութեր, էլեկտրամագնիսական ու ջերմային ճառագայթումների հզոր գեներատորներ, միջուկային զենքի զանգվածեղ կիրառում և այլն), սակայն դրանց օգտագործած էներգիան հիմնականում անհամեմատ փոքր է լինում հարուցվող երկրաֆիզիկական պրոցեսների ժամանակ անջատվող բնական էներգիայից:

Տվյալ զինատեսակի կիրառման հետևանքներ կարող են լինել՝ արհեստական երկրաշարժները, հրաբխային ժայթքումների արգասիքները, բևեռային սառցածածկույթի տարածումը միջին լայնությունների վրա, փոթորիկների առաջացումը կամ ուղղության փոփոխումը, ծովային հոսանքների փոփոխումը՝ կործանարար կլիմայական հետևանքներով, օվկիանոսի ֆիզիկական և քիմիական բնութագրերի փոփոխումը, «ցունամի» տիպի ավերիչ մակերևթաց ալիքների առաջացումը, ջրհեղեղները, եղանակի և կլիմայի փոփոխությունները, պտտահողմերը, մրրկասյունները, հորդառատ անձրևները, երաշտը, խոտհարքի վերացումը, առատ ձյունատեղումները, «օզոնային խոռոչների» ընդարձակումը, բնահամա-

<sup>4</sup> Տես «Глоссарий.ru» կայքը ([http://www.glossary.ru/cgi-bin/gl\\_sch2.cgi?RCultt!!k1pxyio9](http://www.glossary.ru/cgi-bin/gl_sch2.cgi?RCultt!!k1pxyio9)):

<sup>\*</sup> Տրիգեր (անգլ. *to trigger* – գործարկել, հարուցել) – սարք, որը կարող է երկար ժամանակ գտնվել կայուն հավասարակշիռ երկու վիճակներից մեկում և արտաքին ազդանշանով թռչիչաձև անցնել մի վիճակից մյուսին (տես *Л. П. Крысин. Толковый словарь иноязычных слов. М., 2000, с. 713*):

<sup>\*\*</sup> Սույն զինատեսակի դասակարգումը տարբեր մասնագետների կողմից կատարվում է տարբեր սկզբունքներով՝ ըստ ազդեցության ոլորտների, ըստ հետևանքների ոլորտների, ըստ ազդեցության միջոցների, ինչը հիմնականում պայմանավորված է այն հանգամանքով, որ տվյալ զինատեսակը առայժմ կրում է գերազանցապես ենթադրական (հիպոթետիկ) բնույթ: Սույն հոդվածում կիրառվել է դասակարգումն ըստ ազդեցության ոլորտների:

կարգերի քայքայումը, բնակչության ֆիզիկական և հոգեբանական առողջության խաթարումը, և այլն:

**Քարոլորտային** (երկրակեղևային) **զենքի** գործողությունը հիմնված է քարոլորտի (երկրակեղևի և մանթիայի վերին շերտի) էներգիայի օգտագործման վրա: Կոչվում է նաև տեկտոնական զենք: Խոցիչ գործոններն են՝ երկրաշարժները, հրաբուխների ակտիվացումը, երկրաբանական գոյացությունների տեղաշարժը, մեծամասշտաբ սողանքները, փլուզումները և այլն: Այս պրոցեսների ընթացքում անջատվող էներգիայի աղբյուր է վտանգավոր տեկտոնական գոտիներում առաջացող լարվածությունը: Նման կետերում հավասարակշռության խախտումն էլ հենց հանգեցնում է երկրակեղևի շերտերի տեղաշարժման:

Որպես քարոլորտային զենք կարող է օգտագործվել ցանկացած միջոց, որը երկրակեղևում առաջացնում է թրթռում, օրինակ՝ ստորգետնյա միջուկային պայթյունները, հեղուկի ներմղումը շերտի մեջ, հզոր էլեկտրական իմպուլսները, սեյսմաթրոֆիչները, մերթափանցիչները (պենետրատորներ)<sup>5</sup>: Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ ստորգետնյա միջուկային պայթյունները երբեմն կարող են թուլացնել սեյսմիկ ակտիվությունը: Երկրաշարժի հարուցման աղբյուր կարող են լինել նաև աստղաբոլորների և ասուպների անկումը, մեծ ջրամբարների և նավթի ու գազի արդյունահանման հետևանքով առաջացած ստորերկրյա խռոչների առկայությունը<sup>6</sup>: Որոշ տվյալներով՝ խորհրդային գիտնականները, կենտրոնական լույսնամանիների «ընտելացման» գաղափարի վրա, 1967 թ. Հեռավոր Արևելքում առաջացրին առաջին տեխնածիմ երկրաշարժը<sup>7</sup>: Հարկ է նշել, որ հեղինակավոր գիտնականների կարծիքով ներկայումս հնարավոր չէ ստեղծել երկրաշարժներ, այլ միայն կարելի է տրիգերային էֆեկտի միջոցով արագացնել (հարուցել) դրանց գործարկումը՝ լարվածությունների հետևանքով առաջացած ներքին էներգիայի պարպմանը<sup>8</sup>:

**Չրոլորտային զենքի** գործողությունը հիմնված է ջրոլորտի (Երկրի ընդհատ ջրային թաղանթը, որը գտնվում է երկրակեղևի և մթնոլորտի միջև) էներգիայի օգտագործման վրա: Դա հնարավոր է իրագործել ջրային ռեսուրսների (օվկիանոսներ, ծովեր, լճեր, գետեր) և հիդրոկառույցների վրա ոչ միայն միջուկային պայթյունների, այլև սովորական պայթուցիկ նյութերի մեծ լիցքերի ազդեցության հետևանքով առաջացած էներգիայի շնորհիվ<sup>9</sup>: Խոցիչ գործոններն են՝ «ցունամի»

<sup>5</sup> Տես *Ю. О. Кобринович*. Тектоническое оружие ([http://zhurnal.lib.ru/k/kobrinovich\\_j\\_i/statja2.shtm12](http://zhurnal.lib.ru/k/kobrinovich_j_i/statja2.shtm12)):

<sup>6</sup> Տես *Ռ. Գևորգյան, Լ. Բաղդասյան*, Բնական և տեխնածիմ բնույթի հարուցված սեյսմիկություն: «ՀԲ», 2006, հմ. 1:

<sup>7</sup> Տես *Ա. Մովսիսյան*, Կլիմայական զենք. հեքիա՞թ, թե՞ իրականություն (<http://www.louys-world.com/2010/08/19/>):

<sup>8</sup> Տես, օրինակ, *Г. А. Яшина*. Искусственные землетрясения: миф или ужасное оружие? «Капитал страны: аналитика, наука и технологии» (<http://www.kapital-ru/articles/article/176789/>):

<sup>9</sup> Տես «Геофизическое оружие». Информационный сайт о радиационной, химической, биологической защите (<http://www.rhbz.info/rhbz3.4.5.html>):

## ԵՐԿՐԱՖԻԶԻԿԱԿԱՆ ՁԵՆՔ

Երկրաֆիզիկական զենքը նպատակաուղղված է բնական աղետների հարուցմանը: Ըստ ազդեցության ոլորտների բաժանվում է քարոլորտային, կամ երկրակեղևային, ջրոլորտային, մթնոլորտային (կլիմայական, օդերևութաբանական, իոնոլորտային) երկրատիեզերական, կամ աստղարդային, կենսոլորտային զինատեսակների: Կարող է հարուցել երկրաշարժներ, հրաբուխների ժայթքումներ, «ցունամի» տիպի ալիքներ, պտտահողմեր, ջրհեղեղներ, օվկիանոսային հոսանքների ուղղությունների փոփոխում, տեղատարափ անձրևներ, զանգվածային սաղարթածածկույթի և անտառների վերացում, ջերմաստիճանի կտրուկ փոփոխում, ասուպների թիրախային անկումներ և այլն:



Օդերևութաբանական զենք.

ԱՄՆ-ի օդուժի կողմից Վիետնամում 1967–1972 թթ. իրականացված «Շպինատ» օպերացիայի (*Project Popeye*) շրջանակներում յոդացված արծաթի ցրման միջոցով հարուցվեցին հորդառատ անձրևներ (<http://www.worldhistory.com/event/43481/Operation-Hastings.html>)



Կենսոլորտային զենք.

ԱՄՆ-ի կողմից Վիետնամում 1962–1971 թթ. իրականացված «Ֆերմերի ձեռք» (*Ranch Hand*) օպերացիայի շրջանակներում «Ազենտ օրանժ» (*Agent Orange*) դեֆոլիանտի օգտագործմամբ Կենտրոնական Վիետնամում վերացվեցին ջունգլիները ([http://www.ffrd.org/AO/agent\\_orange\\_news.htm](http://www.ffrd.org/AO/agent_orange_news.htm))





**Քարոլորտային զենք.**

վտանգավոր տեկտոնական գոտիներում գոյություն ունեցող լարվածության կետերում հավասարակշռության խախտումը կարող է հանգեցնել երկրակեղևի շերտերի տեղաշարժման (երկրաշարժներ, հրաբուխների ժայթքում և այլն)

Չախից՝ Սիչուանի երկրաշարժը (Չինաստան, 2008 թ. մայիսի 12)

(<http://www.telegraph.co.uk/news/worldnews/asia/china/4030640/>),

աչից՝ Մայոն հրաբխի ժայթքումը (Ֆիլիպիններ, 2004 թ.)

([http://www.vulkaner.no/v/volcan/mayon/mayon\\_e.html](http://www.vulkaner.no/v/volcan/mayon/mayon_e.html))



**Ջրոլորտային զենք.**

ջրային ռեսուրսների և հիդրոկառույցների վրա մեծ լիցքերի ազդեցության հետևանքով առաջացած էներգիայի շնորհիվ կարող են առաջանալ «ցունամի» տիպի հզոր ալիքներ և ջրածածկումներ

Թայլանդի հանգստյան գոտիներից մեկը ցունամիից առաջ և հետո (2004 թ. դեկտեմբերի 27)

([http://winterson.com/archives/2004\\_12\\_01\\_archive.html](http://winterson.com/archives/2004_12_01_archive.html))

տիպի հզոր ալիքները և ջրածածկումները, օվկիանոսային ջրի քիմիական բաղադրության փոփոխումը, օվկիանոսային հոսանքների ուղղության փոփոխումը, ծովի մակերևույթի բարձրության փոփոխումը, օվկիանոս—մթնոլորտ փոխազդեցության փոփոխումը, այդ թվում՝ «Էլ-Նինյո» պրոցեսի\* զարգացումը, ծովային փոթորիկների առաջացումը և այլն:

**Մթնոլորտային զենքը** երկրաֆիզիկական զենքի առավել ուսումնասիրված և գործնականում փորձարկված տեսակն է, որի հիմքում Երկրի գազային թաղանթում տեղի ունեցող պրոցեսների վրա ներգործության միջոցների օգտագործումն է: Այն իր հերթին լինում է՝ կլիմայական, օդերևութաբանական, օզոնային, իոնոլորտային (մագնիսոլորտային):

*Կլիմայական զենքը* նախանշանակվում է եղանակի կամ կլիմայի արհեստական փոփոխման համար՝ հակառակորդին վնաս հասցնելու նպատակով: Խոցիչ գործոններից են մթնոլորտային պրոցեսները և դրանց հետ կապված եղանակային ու կլիմայական երևույթները, ինչպիսիք են՝ ջերմաստիճանային ռեժիմի փոփոխումը, բևեռային սառցածածկույթի տարածումը աշխարհագրական միջին լայնությունների վրա, երաշտը, տեղումների քանակության փոփոխումը, ջրածածկումները և այլն: Կարող է հիմնված լինել ամպեր կազմող և մթնոլորտում ազատ վիճակում գտնվող մասնիկների միկրոսկոպիկ անկայունության օգտագործման վրա: Կլիմայի համընդհանուր փոփոխման կարող են հանգեցնել հողմաբաժան լեռնաշղթաների քայքայումը, որոշ նեղուցների վերածածկումը, միջուկային պայթյունները և այլն:


Այս տեսակի զենքը կարող է կիրառվել հակառակորդի գյուղատնտեսական արտադրանքի ծավալը նվազեցնելու, բնակչության պարենային մատակարարումը վատթարացնելու, տնտեսական ծրագրերը խափանելու և, ի վերջո, առանց ավանդական պատերազմների՝ քաղաքական և տնտեսական փոփոխությունների հարուցման նպատակով: Այն կարող է նաև առաջատարը դառնալ բերքատու տարածքների համար մղվող լայնամասշտաբ պատերազմներում:

Կլիմայի վրա ներգործության տարբեր միջոցների մշակումը արդյունավետ կերպով իրականացվել է «սառը պատերազմի» տարիներին: Անցյալ դարի 70-ական թվականներին համապատասխան ուսումնասիրություններ կատարվել են ԽՍՀՄ-ում և ԱՄՆ-ում: Ընդ որում, պետք է նշել, որ այլ հավասար պայման-

\* Դա Խաղաղ օվկիանոսի արևելքում (նրա արևադարձային և կենտրոնական հատվածներում) 10<sup>7</sup> կմ<sup>2</sup> կարգի մակերեսով ջրի մակերևութային շերտի ջերմաստիճանի կտրուկ բարձրացումն է (5—9 °C): Միևնույն ժամանակ, այդ արևադարձային ջերմային ավազանի (ԱՋԱ) վրա գտնվող մթնոլորտում առաջանում է ջերմության և օվկիանոս—մթնոլորտ համակարգի ստացիոնար անկայուն հավասարակշռության (երբ բոլոր ուժերը հավասարակշռված են և ԱՋԱ-ն անշարժ է) ամենամեծ շրջանը: Դա հանգեցնում է համընդհանուր բնական աղետների՝ երաշտների, հրդեհների, հսկայական տարածքների ջրածածկմանը հանգեցնող տեղատարափ անձրևների, օվկիանոսի ջրի մակարդակի բարձրացում (Բնդրեգիայի ափերի մոտակայքում 0,5 մ-ով ավելի, քան Հարավային Ամերիկայի ափամերձ շրջանում) և այլն (տես *Գ. Գ. Хунгжуа. Феномен Эль-Ниньо* (<http://nature.web.ru/db/msg.html?mid=1158162&uri=index.html>)):

ներում փոքր հողակլիմայական ներուժ ունեցող երկրի պարտվելու հավանականությունը մեծ է:

Ռազմական տեսակետից այն ավելի գրավիչ է. կարելի է վարել գաղտնի և առանց մեծ ծախսերի: Եղանակը և կլիման այնպիսի գործոններ են, որոնք ազդում են գորքերի մարտական գործողությունների վրա ինչպես ռազմական, այնպես էլ օպերատիվ-մարտավարական մասշտաբներով:



Երկրի մթնոլորտային շերտերը՝ ծովի մակերևույթից մոտավոր հեռավորությամբ (բերվում է ըստ՝ <http://legimatecitezen.wordpress.com>)

Կլիմայական զենքի ազդեցության տեխնոլոգիաները տարբեր են. դրանցից հիմնականներն են՝ քիմիաձայնային ալիքների ստեղծումը, մթնոլորտի իոնային կազմի փոփոխումը, հատուկ քիմիական նյութերի ներմուծումը մթնոլորտ և ջրոլորտ:

*Օդերևութաբանական զենքի* կիրառումը, ի տարբերություն կլիմայականից, ավելի տեղային է և կարճատև: Դրա կիրառման տիպիկ օրինակներ կարող են լինել տեղատարափ անձրևների առաջբերումը, տարածքների ջրածածկումը, ջրհեղեղների առաջացումը, մթնոլորտի թափանցիկության փոփոխումը, ռմբակոծության շրջանում ամպերի ցրումը:

20-րդ դարի 60–70-ական թվականներին ԱՄՆ-ը, ապա ԽՍՀՄ-ը մեծ ջանքեր էին գործադրում օդերևութաբանական զենք մշակելու ուղղությամբ՝ միջուկային փորձարկումներ կատարելով իոնոլորտում (մթնոլորտի վերին շերտը): Մասնավորապես՝ ԱՄՆ-ը օդերևութաբանական պատերազմի ոլորտում իր գիտնականների նորագույն մշակումները փորձարկել է Վիետնամում:

Այժմ արդեն հաստատված է, որ մի շարք ակտիվ ռեագենտներ (օրինակ՝ յոդային արծաթը, պինդ ածխաթթուն և այլն), նախապես ցրված լինելով ամպերում, կարող են մեծ տարածքներում առաջ բերել հորդառատ անձրևներ: Ամպերը ցրելու համար բավական է տարածել մոտ 100 կգ յոդային արծաթ և յոդային կապար՝ հարուցելով առատ տեղումներ և հեղեղումներ մի քանի հազար քառակուսի կիլոմետրի վրա: Մյուս կողմից՝ պրոպանի, ածխաթթվի, յոդային կապարի միջոցով կարելի է ցրել մառախուղը: Այս նյութերի փոշիացումը կարող է իրականացվել վերգետնյա զենեքատորների, ինքնաթիռների ու հրթիռների միջոցով: Այն շրջաններում, որտեղ օդի խոնավությունը մեծ է, տվյալ եղանակով կարելի է առաջացնել հորդառատ անձրևներ՝ դրանով իսկ փոխելով լճերի, գետերի, ճահիճների ջրային ռեժիմը և զգալիորեն վատթարացնելով ճանապարհների ու տարածքի անցանելիությունը, իսկ ցածրադիր գոտիներում առաջ բերելով



հեղեղումներ: Դրա հետ մեկտեղ՝ արհեստական տեղումների ուժեղացումը այլ շրջաններում կատեղծի խոնավության մեծ քանակության հեռացում մթնոլորտից և երաշտ:

Մարտական գործողությունների գոտում այս զենքի կիրառմամբ մթնոլորտի թափանցիկության փոփոխումը կարելի է օգտագործել ինչպես յուրային ուժերի գաղտնի կենտրոնացման ու հակառակորդին հանկարծակի հարված հասցնելու (վատ եղանակային պայմաններ), այնպես էլ՝ գերճգրիտ զենքի կիրառման համար ամպերը, ծուխը, մառախուղը ցրելու նպատակով: «Փոթորիկ անապատում» օպերացիայի ժամանակ (Պարսից ծոց, 1990–1991 թթ.) ամպամածության թերագնահատումը բերեց այն բանին, որ լազերային ուղղորդմամբ ավիառումբերի արդյունավետությունը 90 %-ի փոխարեն կազմեց 40–60 %, քանի որ մեկ նշանակետ խոցելու համար կիրառվեց 3-4 զինամթերք<sup>10</sup>: Ուստի մառախուղ առաջացնող նյութերի փոշիացումը կարող է դառնալ պաշտպանական միջոցառումներից մեկը:

Օդերևութաբանական զենքի տեխնոլոգիաների քաղաքացիական օգտագործման օրինակներ են հակակարկտային ծառայությունը, օլիմպիական խաղերի ժամանակ ամպերի ցրումը և այլն:

Եղանակի վրա ներգործելու տեխնոլոգիաները, որպես կանոն, հենվում են նախընտրած ժամանակ և նախընտրած տեղում օդերևութաբանական պրոցեսների մեջ լրացուցիչ էներգիայի կամ հատուկ քիմիական նյութերի ներմուծման վրա:

Հայտնի է ռուսական «ՌԻրանիա» էլեկտրամագնիսական կայանքը, որը հնարավորություն է տալիս նախապես որոշված վայրում կատարելու օդերևութաբանական փոփոխումներ<sup>11</sup>:

*Օզոնային զենքը* նախատեսվում է որոշակի աշխարհագրական տարածքներում կենսաբացներն ու օրգանական կյանքը էապես փոփոխելու համար: Դա կատարվում է Երկրի մթնոլորտով կենդանի օրգանիզմների համար հույժ վտանգավոր արեգակնային ուլտրամանուշակագույն և տիեզերական ծագման այլ ճառագայթների անցման համար բարենպաստ պայմանների ստեղծմամբ: Նման պայմաններ կարող են ստեղծվել մթնոլորտում օզոնային շերտի ձևավորման (քայքայման) բնական պրոցեսների կանխամտածված դանդաղեցմամբ կամ արագացմամբ: Օզոնային «խոռչների» միջով անցնում են Արեգակի մոտ 3 մկմ երկարությամբ կոշտ ուլտրամանուշակագույն ճառագայթները: Դրանց հիմնական մասը, թափանցելով մթնոլորտ, կլանվում է օզոնի կողմից, ցրվում է օդի մոլեկուլների և փոշու մասնիկների վրա: Օզոնի քայքայումը արագանում է բրոմի, քլորի, ֆտորի և հալոգենային միացությունների մի շարք գազային խառնուկների

<sup>10</sup> Stu «Проект ХААРП» (<http://neutrino.mk.ua/roboyi/proekt-chaarp-2>):

<sup>11</sup> Stu B. *Баранец*. В России изобретены пушка для вызова дождя и бомба для тушения пожаров. «Комсомольская правда», 3 августа 2010 г. (<http://www.kp.ru/daily/24533/677914/>):

առկայության դեպքում: Այս գեները կարող է ներառել քիմիական ռեագենտներ (ջրածնի միացություններ, ազոտի օքսիդ և այլն), դրանց դուրսբերման (հրթիռներ, ինքնաթիռներ, օդապարիկներ և այլն) ու փոշիացման (պայթուցիկներ, հատուկ գեներատորներ) միջոցներ: Դիշտ է, օգոնային գեների ստեղծման գործում տեխնիկական բարդություններ չկան, սակայն շատ դժվար է կիրառման հետևանքների ճշգրիտ որոշումը ոչ միայն հակամարտող կողմերի, այլև ամբողջ մոլորակի համար: Որպես դրա առաջնային հետևանք կարող է տեղի ունենալ գյուղատնտեսական բույսերի և կենդանիների արտադրողականության նվազում, ավելի ուշ՝ միջին ջերմաստիճանի նվազում, խոնավության մեծացում, ինչը ծայրաստիճան վտանգավոր է հողագործությամբ զբաղվող շրջանների համար:

Ներկայումս գիտնականների ուշադրության կենտրոնում է *խոնոլորտային գեները*<sup>\*</sup>: Ռատումասիրվում են իոնոլորտի հատկությունները և դրանում զարգացող դինամիկ պրոցեսները: Իոնոլորտը գտնվում է մթնոլորտի վերին շերտերում (50–80 կմ և ավելի բարձրությունների վրա), պարունակում է հսկայական թվով ազատ էլեկտրոններ և իոններ, մեծ ազդեցություն ունի ռադիոալիքների տարածման վրա:


Իոնոլորտի վիճակի և հատկությունների որոշման համար կիրառվում են բարձր հաճախականությամբ ռադիոալիքների աղբյուրներ, այսպես կոչված վրագետնյա ռադիոտաքացման ստենդներ, որոնց միջոցով իոնոլորտում տեղի է ունենում ներքին ձգողական ալիքների գրգռում: Դրանք փոխանցվում են մթնոլորտի ստորին շերտեր և առաջացնում բնական աղետներ (փոթորկային քամիներից մինչև օդի ջերմաստիճանի կտրուկ տեղային բարձրացումներ): ԱՄՆ-ում Բևեռափայլերի բարձրհաճախականային ակտիվ հետազոտությունների ծրագրի (ԲԲԱՀԾ՝ *HAARP – High-frequency Active Auroral Research Program*) շրջանակներում ստեղծվել և հետևողականորեն կատարելագործվում է իոնոլորտի վրա բարձր հաճախականությամբ ներգործության համակարգը<sup>12</sup>: Ամերիկացիների պնդմամբ՝ կայանը նախատեսված է բևեռափայլերի ուսումնասիրության, ինչպես նաև ընդերքի շերտագրման (տոմոգրաֆիա) համար, թեև պատկանում է

\* Նշենք, որ 20-րդ դարի 20–30-ական թվականներին մասն փորձեր (ընդ որում, որոշ տվյալներով՝ հաջողված) կատարել է հայտնի ֆիզիկոս Նիկոլայ Տեսլան (1856–1943):

<sup>12</sup> Համակարգը տեղակայված է Ալյասկայում՝ Անքորիջից մոտ 250 կմ դեպի հյուսիս-արևելք, կառուցվել է 20 տարում, ինչի համար պահանջվել է 250 մլն դոլար: Դա շուրջ 15 հա տարածք զբաղեցնող մի հսկայական դաշտ է, որտեղ տեղադրված են 22 մետրանոց 180 ալեցիրներ և 360 ռադիոհաղորդիչներ: Համակարգի մեջ են մտնում նաև 20 մ տրամագիծ ունեցող ալեցրով ոչ կոհերենտ ճառագայթման ռադար, լազերային տեղորոշիչներ, մագնիսաչափներ, ինպուլսների մշակման և ալեցրային դաշտի կառավարման համակարգիչներ: Այն կարող է առաքել մինչև 3,6 մլն Վտ հզորությամբ ինպուլսներ: Օգտագործված են «ֆազավորված ալեցրային ցանց» տիպի ալեցիրներ, որոնք ունակ են ամբողջ ճառագայթման էներգիան կիզակետելու տարածության ոչ մեծ հատվածում: Լրիվ հզորությամբ երբևէ չի աշխատել. եղել են միայն մասնակի փորձարկումներ (տես «Basic Information on HAARP» (<http://www.alaska.net/~logjam/HAARP.html>); նաև՝ «HAARP» (<http://www.policestateplanning.com/id106.htm>); *А. Ефимов, С. Козлов. Геофизическое оружие – угроза планетарной катастрофы. «Интересная газета. Невероятное», 2010, № 9* ([http://x-files.org.ua/articles.php?article\\_id=2085](http://x-files.org.ua/articles.php?article_id=2085)):

ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությանը: ԲԲԱՀԾ-ն դարձել է իոնոլորտի վրա ազդելու աշխարհի ամենահզոր միջոցը:

Իոնոլորտի վրա ներգործության շնորհիվ հնարավոր կլինի հայտնաբերել հակառակորդի թևավոր հրթիռներն ու ինքնաթիռները, շարքից հանել բալիստիկ հրթիռների ուղղորդման էլեկտրոնային համակարգերը, խախտել կապի միջոցների և ռադիոտեղորոշումային համակարգերի աշխատանքը, ուսումնասիրել Երկրի մակերևույթը մի քանի կիլոմետր խորությամբ՝ ստորգետնյա ռազմական



«Բևեռափայլերի բարձրահաճախականային ակտիվ հետազոտությունների ծրագրի» իոնոլորտի վրա բարձր հաճախականությամբ ներգործության կայան (ԱՄՆ, Ալյասկա)

օբյեկտներն ի հայտ բերելու նպատակով, և այլն: Նույն նպատակով կարող են օգտագործվել նաև գերբարձրահաճախականային և գերցածրահաճախականային տիրույթի հզոր ռադիոալիքները: Ակտիվ ազդեցության մասն միջոցները պայմանականորեն կոչվում են նաև ռադիոտեխնիկական զենք:

Ռազմական գործողությունների վարման բնակլիմայական պայմանների բարդացումը կարող է օգտագործվել նաև մարդկանց հոգեվիճակի վրա ազդելու, զինվորների բարոյական ու մարտական ոգին թուլացնելու, նրանց բոլոր առումներով ավելի խոցելի դարձնելու նպատակով:

Այդ է պատճառը, որ մի շարք գիտնականներ և զինվորականներ ԲԲԱՀԾ-ն և իոնոլորտի ուսումնասիրման մասն համակարգերը համարում են իոնոլորտային զենք, և որպես ապացույց նշում են, որ բոլոր տարօրինակ բնական արհավիրքները տեղի են ունենում 1997 թ. Ալյասկայում ԱՄՆ-ի առեղծվածային նախագծով կառույցների ստեղծման ժամանակից ի վեր: Նրանք համոզված են, որ կայանքն ստեղծվել է քիմիական նյութերի ազդեցությամբ կամ բարձրահաճախականային ալիքների գրգռման միջոցով իոնոլորտի բնութագրերն արհեստականորեն փոխելու համար: Ըստ նրանց՝ չի բացառվում, որ այն կարող է դառնալ

ամերիկյան հակահրթիռային պաշտպանության նոր համակարգ, որի մոտակա (գուցե և արդեն իրականացված) նպատակն է համաշխարհային հաղորդակցությունների և ռազմական օբյեկտների գործունեության խաթարումը՝ ընդհուպ մինչև կասեցում<sup>13</sup>:

Ինոնոլորտի ուսումնասիրության նման կայաններ կան ինչպես ԱՄՆ-ում (ևս երկուսը), այնպես էլ՝ Նորվեգիայում «Ոչ կոհերենտ ցրման ռադարի եվրոպական կայանը» (*EISCAT*) և «Տիեզերական պլազմայի ուսումնասիրման ակտիվ ռադարը» (*SPEAR*), Ռուսաստանում՝ «Սուրա», ՌԻկրաինայում՝ «ՌԻրան-1», Տաջիկստանում՝ «Գորիզոնտ» ռադիոտեխնիկական համակարգերը, և այլն:

«Սուրա» համակարգն ստեղծվել է դեռ Խորհրդային Միությունում որպես գիտահետազոտական լաբորատորիա, որը պետք է ապահովեր ամբողջ խորհրդային տարածքի ռադիոկապի բարելավումը և հավանական հակառակորդին մշտապես հետևելու հնարավորություն ստեղծեր: Խորհրդային գիտնականներն առաջին իսկ փորձարկումների ժամանակ նկատել էին երևույթներ, որոնք դարձան հետագա ուսումնասիրությունների հիմնական առարկան: Մաքրը միացնելու դեպքում երկնքում նկատվում էին պայծառ լուսարձակում, ոչ մեծ կարմիր բռնկումներ, իսկ ինստիտուտի տարածքի վրա կախվում էին մեծ քանակությամբ մուգ արծաթագույն գնդեր, այսինքն՝ մթնոլորտում տեղի էին ունենում բուռն պրոցեսներ: Ներկայումս այդ լաբորատորիայում փորձարկումները տեղի են ունենում տարեկան 100 ժամից ոչ ավելի<sup>14</sup>:

**Երկրատիեզերական զենք** կարելի է համարել աստղարդների և ասուլաների հետազոծերի փոփոխումը մերձերկրային տիեզերական տարածությունում: Ընդհանուր առմամբ, մտահոգացման առիթ է եղել Երկրի հետ տիեզերական մարմինների բախումը կանխելու խնդիրը (Տունգուսյան ասուլի հայտնի օրինակը): Որպես տվյալ խնդրի լուծում դիտվել են ուղղորդված միջուկային պայթյունների օգնությամբ դրանց քայքայումը կամ շեղումը և այդ օբյեկտների վրա հրթիռային շարժիչների վայրէջքի միջոցով դրանց թռիչքի հետազոծի հետագա փոփոխումը:

Երկրատիեզերական զենքի նախանշանակումն է Երկրագնդի տվյալ տարածաշրջանի ռմբակոծումը ասուլաներով և աստղարդներով: Սակայն պետք է նշել, որ տվյալ զենքի գործնական կիրառումը, մասնագետների կարծիքով, թվում է անհավանական անգամ հեռավոր ապագայում, քանի որ այն վերին աստիճանի «անկառավարելի» զենք է: Բանն այն է, որ Երկրի հետ աստղարդի բախման պահին հպման կետում Երկրի մակերևույթին կիրարկված ուժի վեկտորը, կախված Երկրագնդի և աստղարդի զանգվածների հարաբերակցությունից, կարող է այն-

<sup>13</sup> Stu, օրինակ, *Ю. А. Бобылов*. «Психотронная Голгофа»: национальная безопасность в мире «безумных идей». «Национальная безопасность и геополитика России», 2005, № 1–2:

<sup>14</sup> Stu *В. В. Агушкин, С. И. Козлов*. Это миф или реальность? Критический взгляд на геофизическое оружие ([http://nvo.ng.ru/armament/2006-04-21/6\\_weapontheyfear.html](http://nvo.ng.ru/armament/2006-04-21/6_weapontheyfear.html)):

պես ազդել մեր մոլորակի պատման վրա, որ ի հաշիվ կենտրոնախույս ուժերի կվերանա կյանքը, կփոփոխվի երկրապատկերը և շարժման մեջ կդրվեն համաշխարհային օվկիանոսի ու ներքին մայրցամաքային ջրավազանների հսկայական ջրազանավածները<sup>15</sup>:

**Կենսոլորտային** (բնապահպանական) **զենքը** նախատեսվում է կենսոլորտի նպատակային աղետալի փոփոխման համար: Կենսոլորտը ներառում է մթնոլորտի գետնամերձ շերտերը, ջրոլորտը, երկրակեղևի վերին շերտը, որոնք միմյանց հետ կապված են նյութերի և էներգիայի փոխանակման բարդ կենսաքիմիական փուլաշրջաններով: Կենսոլորտային զենքի միջոցով հնարավոր է հակառակորդին վնաս հասցնել նրա բնակության միջավայրի վրա նպատակային ներգործությամբ (օդի, ջրի, հողի աղտոտում և վարակում, կենդանական ու բուսական աշխարհների ոչնչացում և այլն)<sup>16</sup>:

Հնարավոր կենսոլորտային պատերազմի վարման առավել լայն տարածում ստացած միջոցներից են հերքիցիդները (կրկնակի կիրառման միջոցներ): Դրանց հիմնական զանգվածը կազմում են դեֆոլիանտները, որոնցով կարելի է ոչնչացնել անտառների սաղարթածածկույթը և, որպես հետևանք, վերացնել անտառները, աղքատացնել բուսական ու կենդանական աշխարհները, փոփոխել ջրակարգը և սաստկացնել ողողամաշումը:

Ժամանակակից տարածաշրջանային և տեղային զինված հակամարտություններում հաճախ օգտագործվում են կենսոլորտային պատերազմի տարրեր, որոնք ուղղված են հակառակորդի զբաղեցրած տարածքներում անբարենպաստ բնական պայմանների ստեղծմանը, ինչով կբացառվի տվյալ տեղանքում բնական կենսագործունեությունը:

Բնապահպանական ոլորտում պայքարն ունի այն յուրահատկությունը, որ մղվում է ինչպես ռազմական, այնպես էլ ոչ ռազմական միջոցներով: Այդ պատերազմը ներառում է նաև ատոմակայանների, հատուկ վտանգավորության քիմիական նյութերի արդյունաբերական կենտրոնների ավերումը, ինչն սպառնում է ընդարձակ տարածքների, մթնոլորտի, ջրամբարների երկարաժամկետ վարակմամբ և այլ բացասական երևույթներով:

Բնական միջավայրի վրա ներգործության միջոցների կիրառման տեխնոլոգիան հնարավորություն է տալիս.

– *կարարելու Երկրի ջերմաստիճանի արհեստական փոփոխում՝ մթնոլորտի վերին շերտեր արձակելով այնպիսի նյութեր, որոնք կա՛մ կկլանեն լույսը (դրանով իսկ համապատասխան տեղանքում սառեցնելով Երկրի մակերևույթը), կա՛մ կկլանեն Երկրի կողմից արձակվող ջերմությունը (դրանով իսկ առաջ բերելով Երկրի մակերևույթի տաքացում),*

– *փոփոխելու մթնոլորտի ֆիզիկական կառուցվածքը՝ Արեգակի ուլտրամանուշակագույն ճառագայթների մի զգալի մասը կլանող օզոնի շերտում*

<sup>15</sup> Տես Վ. Կրուգով, Յու. Իվանով, Ա. Ասեև, Նշ. աշխ.:

<sup>16</sup> Տես «Военный энциклопедический словарь», с. 1393:

հրթիռի կամ նմանատիպ այլ միջոցի կիրառմամբ առաջացնելով «խոռոչ», որին համապատասխանող չպաշտպանված տարածքում ճառագայթումը կհասնի թե՛ մարդու, թե՛ բուսական ու կենդանական աշխարհի համար մահացու մակարդակի:

**Երկրաֆիզիկական զենքերի մշակման ու կիրառման վրա դրվող սահմանափակումները:** Հաշվի առնելով երկրաֆիզիկական զենքի հնարավոր անկանխատեսելի և համընդհանուր բնապահպանական հետևանքները՝ միջազգային հանրությունը փորձել է սահմանափակել դրանց ստեղծման ու կիրառման հնարավորությունը: Այդ նպատակով ընդունվել են մի շարք միջազգային պայմանագրեր և համաձայնագրեր, որոնք սահմանափակում են երկրաֆիզիկական միջավայրների վրա կանխատեսված ազդեցությունը\*։ ՌԽտի այս զենքի կիրառումը պետք է կրի գերազանցապես «գաղտնի բնույթ»։ Մինևույն ժամանակ նշենք, որ շրջակա միջավայրի վրա ակտիվ ներգործության գաղտնիության պահպանումը շատ դժվար է, քանի որ այժմ ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ֆրանսիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան ունեն շրջակա բնական միջավայրի մշտազննման տարբեր համակարգերի զարգացած ցանց:

Կա ևս մեկ նկատառում: Մյուս բոլոր զինատեսակների կիրառման դեպքում անմիջապես ի հայտ է գալիս ազդեցության հետևանքը: Մինչդեռ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ երկրաֆիզիկական զենքի կիրառման դեպքում երկրաֆիզիկական միջավայրի շերտերում բնական պարամետրների փոփոխումը կարող է երկարաձգվել անգամ մինչև տասնյակ տարիներ: Բացի այդ, նման զենքը չի կարող դառնալ զինված ուժերի սպառազինություն:

Մեր կարծիքով՝ բնապահպանական ճգնաժամներն ընդունել են այնպիսի համընդհանուր բնույթ ու խորություն, որ անգամ մարդկության խաղաղ կենսագործունեության հետևանքները դարձել են կենդանի աշխարհի գոյության համար լուրջ սպառնալիք: ՌԽտի անհրաժեշտ է թվում բոլոր գիտնականների ջանքերի համադրումը՝ վիճակը շտկելու, այլ ոչ թե վատթարացնելու նպատակով: Անշուշտ, այս ուղղությամբ որոշակի աշխատանքներ են կատարվում նաև ռազմական բնագավառում: Մասնավորապես՝ մի շարք պետությունների պաշտպանական գերատեսչության համակարգում (այդ թվում և ՀՀ-ում) ստեղծվել են բնապահպանական բաժիններ կամ վարչություններ:

Շատ երկրներում (և առաջին հերթին ԱՄՆ-ում) ռազմական տեխնիկայի նոր մշակումներին ներկայացվող պահանջներում կան բնապահպանական անվտանգությանը վերաբերող դրույթներ: Օրինակ՝ ԱՄՆ-ի պաշտպանության նախարարությունն առաջին կառավարական կազմակերպությունն է, որն սկսեց պահպանել «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանա-

\* Դրանց թվում են՝ «Շրջակա միջավայրի փոխակերպման տեխնիկական միջոցների ռազմական կամ այլ կարգի բշնամական օգտագործումն արգելելու մասին» Ժնևի համաձայնագիրը (1977 թ.), «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի համաձայնագիրը (1985 թ.), «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունը (1987 թ.) և այլն:

գրության նորմերը: Այսպես. այդ նորմերի պահպանման համատեքստում ամերիկյան Ֆ-22 կործանիչում, ի տարբերություն մախորդ փոփոխակներից, օգտագործվում է օգոնի շերտը վնասող միայն մեկ նյութ<sup>17</sup>: ԱՄՆ-ի ռազմածովային ուժերում ներդրվել են նավերի իրանները ոչ թունավոր ներկանյութերով մշակելու նոր մեթոդներ, ընդունվել են նոր կանոններ, որոնք արգելում են թափոնները ծովը լցնելը<sup>18</sup> և այլն:

Նման օրինակները հուսադրող են, քանի որ համընդհանուր բնապահպանական անվտանգության նկատմամբ մտավոր բարձր զարգացածությանը պետությունների մտահոգության վկայությունն են: Ուստի կարելի է ակնկալել, որ երկրաֆիզիկական զենքը լայն մասշտաբով երբեք չի կիրառվի:

Հաշվի առնելով, որ երկրաֆիզիկական զենքի շատ տեսակների (ջրոլորտային, մթնոլորտային, կենսոլորտային) հնարավոր կիրառման հետևանքները հիմնականում կրում են համամոլորակային բնույթ, իսկ մյուսների (երկրոլորտային) հետևանքները թեև տեղային բնույթի են, սակայն Հայաստանի սեյսմիկ վտանգավորության պատճառով կարող են առաջ բերել հարուցված երկրաշարժներ, կարծում ենք, որ երկրաֆիզիկական զենքի ու դրա կիրառման հետևանքների ընդհանուր իմացությունը, թեև մեր հավանական հակառակորդը ներկայումս նման զենք չունի, օգտակար կլինի ինչպես համապատասխան հայ մասնագետների, այնպես էլ հասարակության լայն շրջաններին:

<sup>17</sup> Stu C. M. *Катлин, А. Х. Сентер, Г. М. Брум.* Паблик рилейшнз. Теория и практика. М., СПб., Киев, 2008, с. 250:

<sup>18</sup> Stu *Christopher Coker.* Globalization and the New Security Agenda. «Globalization and Insecurity in the Twenty-first Century: NATO and the Management of Risk». Oxford, 2002, PP. 33 – 56:

**ВООРУЖЕНИЕ И ВОЕННАЯ ТЕХНИКА**

**ГЕОФИЗИЧЕСКОЕ ОРУЖИЕ**

**В КОНТЕКСТЕ ЭКОЛОГИЧЕСКОЙ БЕЗОПАСНОСТИ РА**

*А. П. НАЗАРЕТЯН, майор, Начальник отдела военно-научного журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

**РЕЗЮМЕ**

В аспекте глобальной экологической безопасности, включая и экологическую безопасность РА, рассмотрены основные механизмы действия и возможные последствия применения различных видов геофизического оружия, систематизированного по сферам воздействия: *литосферное*, или *тектоническое*, *гидросферное*, *атмосферное* (климатическое, метеорологическое, ионосферное, озонное), *биосферное* (экологическое), *гео-космическое* (астероидное).

Общий принцип действия геофизического оружия основан на «триггерном эффекте» – приложении в неравновесных точках геофизических сред малых энергий, инициирующих в твердой, жидкой и газообразной оболочках Земли естественные процессы огромной разрушительной силы, как то: землетрясения, активизация вулканов, гигантские волны типа «цунами», тайфуны, ливневые дожди, наводнения, засухи и т. д. Причем подобные катаклизмы могут иметь не только региональный, но и общепланетарный характер.

Разработка и применение многих видов геофизического оружия подпадают под запрет международных конвенций по глобальной экологической безопасности.

## ARMAMENT AND MILITARY EQUIPMENT

### GEOPHYSICAL WEAPON IN THE CONTEXT OF ECOLOGICAL SECURITY OF THE REPUBLIC OF ARMENIA

A. P. NAZARETYAN, Major, Head of the Department  
of «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA

#### SUMMARY

In the aspect of global ecological security, including the RA ecological security, the article examines the principal action mechanisms and possible aftereffects of using various types of geophysical weapons systematized by spheres of effect: *lithospheric*, or tectonic, *hydrospheric*, *atmospheric* (climatic, meteorological, ionospheric, ozone), *biospheric* (ecological), *geospatial* (asteroid).

The general operating principle of geophysical weapons is based upon the «trigger effect» – the application of low-energy geophysical media in the non-equilibrium points. These media initiate natural processes of enormous destructive power in solid, liquid and gaseous mantles of the Earth, such as: earthquakes, volcanic activity, the giant waves of «tsunami» type, typhoons, torrential rains, floods, droughts, etc. Moreover, such cataclysms can be not only of regional but global nature.

The development and use of many kinds of geophysical weapons fall under the ban of international conventions on global ecological security.



**ՋՈՐԱՄԱՍՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԹՈՂՆԵԼՈՒ ԵՎ ԴԱՍԱԼՔՈՒԹՅԱՆ  
ՀԱՍԱՐ ԶՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ**

*Կ. Ա. ԲԲՈՒՏՅԱՆ, ավագ լեյտենանտ, ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության,  
սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի ասպիրանտ,  
ՀՀ ՊՆ Իրավաբանական վարչության սպա*



Պետության ռազմական անվտանգության ապահովման գործում Ջինված ուժերի առանցքային դերն ու նշանակությունը, զինվորական ծառայության յուրօրինակ բնույթը և առանձնահատկությունները պայմանավորում են զինծառայողների վարքագծի առավել մանրակրկիտ կանոնակարգումը: Վարքի նկատմամբ խիստ պահանջների ու դրանց խախտման համար կարգապահական և քրեական պատասխանատվության միջոցների նախատեսման հնարավորությունը բխում է ՀՀ Սահմանադրության 43-րդ հոդվածի բովանդակությունից: Դրա համաձայն՝ Սահմանադրությամբ և միջազգային իրավունքի սկզբունքներով ու նորմերով երաշխավորված մի շարք իրավունքներ և ազատություններ որոշ դեպքերում, այդ թվում՝ պետության անվտանգության ապահովման նպատակով, կարող են օրենքով սահմանված կարգով սահմանափակվել<sup>1</sup>:

Ջինված ուժերի կիրառմամբ պետության պաշտպանության անհրաժեշտություն կարող է ծագել ցանկացած պահի: Մինչդեռ ՁՈՒ-ի գործառններն ու ստորաբաժանումներն իրենց հիմնական գործառույթը կարող են կատարել միայն բավարար չափով մարտունակ լինելու դեպքում, ինչն ապահովելու համար անձնակազմը պետք է գտնվի հնարավորինս հավաք և կառավարելի վիճակում:

Այս հիմքով զինծառայողների ազատ տեղաշարժի իրավունքի սահմանափակումը և այդ սահմանափակման պահանջները խախտելու համար կարգապահական ու նույնիսկ քրեական պատասխանատվության սահմանումը դառնում է արդարացված և գործուն միջոց:

Չորամասի տեղաբաշխման վայրից զինծառայողների արձակման կարգը նախատեսված է ՀՀ ՁՈՒ-ի ներքին ծառայության կանոնագրքով<sup>2</sup>: Տվյալ կարգի խախտմամբ գորամասից կամ ծառայության վայրից բացակայելը կարող

<sup>1</sup> Տես «ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով)»: «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», հատուկ թողարկում, 2005:

<sup>2</sup> Տես «ՀՀ Ջինված ուժերի ներքին ծառայության կանոնագիրքը հաստատելու մասին» ՀՀ 1996 թ. դեկտեմբերի 3-ի հմ. ՀՕ-99 օրենքը, հոդ. 245–251 (տես «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1997 թ., հունվար, հմ. 1):

է հանգեցնել զինժառայողի կարգապահական կամ քրեական պատասխանատվության: Վերջինս սահմանված է ՀՀ քրեական օրենսգրքի (Քր. օր.) 361-րդ («Չորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելը») և 362-րդ («Դասալքություն») հոդվածներով:

Չորամասը կամ ծառայության վայրն ինքնական թողնելու արարքում հանցակազմն առկա է այն դեպքում, երբ զինժառայողն առանց համապատասխան թույլտվության լքում է գորամասի կամ ծառայության վայրի տարածքը: Այդ պատճառով գորամասի տարածքից կամ ծառայության վայրի սահմաններից դուրս գալու կամ ժամանակին չներկայանալու թույլտվությունը, որը զինժառայողին տվել է նույնիսկ այդպիսի թույլտվություն տալու իրավունք չունեցող հրամանատարը, բացառում է ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածով զինժառայողի քրեական պատասխանատվությունը: Նման դեպքում կարգապահական պատասխանատվության է ենթարկվում տվյալ հրամանատարը: Ընդ որում, նշանակություն չունի՝ այդ թույլտվությունը սահմանված կարգով գրավոր կերպով գրանցվել է, թե տրվել է բանավոր: Հրամանատարի արարքում հանցակազմի առկայության դեպքում նա պետք է քրեական պատասխանատվության ենթարկվի պաշտոնեական լիազորությունների չարաշահման համար:

Ծառայությանը ժամանակին չներկայանալու արարքի բովանդակությունը որպես դիտարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմի ձև ընդհանուր առմամբ դրսևորվում է հետևյալ կերպ. «Չորակոչով զինվորական ծառայություն անցնող զինժառայողների՝ առանց հարգելի պատճառների ժամանակին ծառայության չներկայանալ ասելով պետք է հասկանալ գորամասից արձակման, նշանակման, տեղափոխման, գործուղումից, արձակուրդից կամ բժշկական հաստատությունից վերադարձի դեպքում այդ անձանց ծառայության վայր չժամանելը այն ժամկետներում, որոնք նշված են համապատասխան փաստաթղթերում (օրինակ՝ արձակման թերթիկում, արձակուրդային տոմսում)»<sup>3</sup>: ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածի 1-ին մասով որպես ծառայությանը ժամանակին չներկայանալու օբյեկտիվ կողմի նման ձևի անհրաժեշտ հատկանիշ է համարվում նաև հարգելի պատճառներ չլինելը:

Օրենսդիրը հստակ կերպով չի նախատեսում հանցակազմի բացակայությունը վկայող հարգելի պատճառները: Մինչդեռ դրա անհրաժեշտությունը պայմանավորվում է յուրաքանչյուր դեպքում իրավասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից փաստերը ճիշտ գնահատելու և կամայական մոտեցումը բացառելու կարևորությամբ: Մեր կարծիքով՝ այս պրոբլեմի արդյունավետ լուծում կարող է լինել օրենսդրության մեջ հետևյալ հարգելի պատճառների ամրագրումը.

1. զինժառայողի հիվանդությունը կամ հաշմանդամությունը՝ կապված աշխատունակության կորստի հետ,

2. մերձավոր ազգականների (հայր, մայր (այդ թվում՝ որդեգրողներ), երեխա,

<sup>3</sup> «Постановление Пленума Верховного Суда РФ № 3 от 3 апреля 2008 г. «О практике рассмотрения судами уголовных дел об уклонении от призыва на военную службу и от прохождения военной или альтернативной гражданской службы»». «КАДИС ПРАВО-ВОЙ ПОРТАЛ» (<http://www.kadis.ru/texts/index.phtml?id=26753>).

քույր, եղբայր, տատ, պապ) առողջական ծանր վիճակը կամ մասնակցությունը նրանց թաղման արարողությանը,

3. արգելք, որն առաջացել է անհաղթահարելի ուժի հետևանքով կամ զին-ծառայողի կամքից անկախ այլ հանգամանքի բերումով,

4. այլ պատճառներ, որոնք հարգելի են համարվել համապատասխան իրա-վասու պետական մարմնի կամ պաշտոնատար անձի կողմից:

Մասնավորապես՝ հանցակազմի բացակայությունը հավաստող պատճառ-ներ կարող են համարվել երթևեկության համար անհրաժեշտ պայմաններ չլինելը (օրինակ՝ տրանսպորտի երթուղու կարգացուցակի փոփոխությունները, զինծա-ռայողին երթևեկության համար անհրաժեշտ գումարով չապահովելը և այլն)<sup>4</sup>:

Նշված հանգամանքները կարելի է տարածել նաև գորակոչի ընթացքում ծանուցագրով գորակոչման համար զինկոմիսարիատ, ինչպես նաև վարժական հավաքների կանչված պահեստագործի քաղաքացիների ժամանակին չներկայա-նալու դեպքերի վրա: Ուստի անհրաժեշտ ենք համարում վերը նշված հարգելի պատճառները ներառել ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածի 1-ին մասում, ինչպես նաև տեքստն սկսել հետևյալ շարադրանքով. «Զինծառայողի կողմից **առանց հարգելի պատճառների** գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը, ինչպես նաև ծառայությանը ժամանակին չներկայանալը...»:

Զորամասի միևնույն տարածքի սահմաններում առանց թույլտվության մեկ ստորաբաժանումից մեկ այլ ստորաբաժանում գնալը չի առաջացնում 361-րդ հոդվածով նախատեսված հանցակազմը: Սակայն եթե գորամասի ստորաբաժա-նումները գտնվում են տարբեր վայրերում, ապա ստորաբաժանման տարածքն ինքնակամ թողնելը պետք է համարել գորամասն ինքնակամ թողնել:

Ինչ վերաբերում է «ծառայության վայր» հասկացությանը, ապա որպես այդպիսին պետք է համարվի ցանկացած վայր, որը չի համընկնում գորամասի տեղաբաշխման տարածքի հետ և նախատեսված է սահմանված ժամանակի ընթացքում զինծառայողի կողմից զինվորական ծառայության պարտականու-թյունների կատարման համար, կամ որտեղ նա պետք է գտնվի հրամանով կամ գործուղման ժամանակ, մասնավորապես՝ տնտեսական աշխատանքների, գործուղման, ուսումնական, մշակութային, դաստիարակչական միջոցառումների անցկացման վայրերը, խմբով կամ առանձին տեղափոխման փոխադրամիջոցը (ծառայողական մեքենա, գնացք, էշելոն և այլն): Ծառայության վայր պետք է համարել նաև բուժման վայրը՝ անկախ այն բանից, արդյոք դա զինվորական հոսպիտալ է, թե քաղաքացիական հիվանդանոց, քանի որ բուժման մեջ գտնվելը համարվում է զինվորական ծառայության պարտականությունների կատարում:

«Զորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելը» տևող հանցա-գործություն է: Ուստի կարևոր նշանակություն ունի տվյալ զինվորական հանցա-

<sup>4</sup> Տե՛ս «Курс уголовного права. Особенная часть». Учебник, под. ред. Г. Н. Борзенко-ва и В. В. Комиссарова. М., 2002, т. 5. с. 307; «Комментарий к Уголовному кодексу РФ», под. ред. В. М. Лебедева. М., 2004, с. 831:

գործության կատարման սկզբի և ավարտի որոշումը: Պետք է նկատի ունենալ, որ գորակոչի հիման վրա զինվորական ծառայություն անցնող զինծառայողների համար գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու արարքում հանցակազմն առկա է առանց համապատասխան թույլտվության երեք օրից ավելի բացակայելու դեպքում: Ընդամին որակման համար նշանակություն չունի՝ այն կատարվել է որոշակի պաշտոնեական պարտականությունների իրականացման ժամանակ, թե օրվա կարգացուցակով սահմանված հանգստյան ժամին: Համաձայն ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածի՝ գորամասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու ժամկետը հաշվվում է օրերով: Ընդհանուր կանոնի համաձայն՝ ժամկետի ընթացքն սկսվում է իրավաբանորեն կարևոր իրադարձությանը հաջորդող օրվա գրո ժամից, մինչդեռ իրավակիրառ պրակտիկայում ժամկետը հաշվարկվում է անմիջապես այն պահից (ժամից), երբ զինծառայողը ինքնակամ թողել է գորամասը կամ ծառայության վայրը:

Չորամասն ինքնակամ թողնելու, ինչպես նաև ծառայությանը ժամանակին չներկայանալու ավարտ կարելի է համարել այն պահը, երբ զինծառայողը այս կամ այն ձևով դադարեցրել է հանցագործությունը: Ընդ որում, չի պահանջվում, որ զինծառայողը վերադառնա ծառայողական պարտականությունների իրական կատարմանը: Բացի զինծառայողի՝ կանոնի գորամաս կամ ծառայության վայր վերադառնալուց, այս հանցագործության ավարտ պետք է համարել նաև հրամանատարության կամ ոստիկանության մարմինների կողմից նրա ձերբակալումը, ինչպես նաև գորամասն ինքնակամ թողնելու մասին հայտարարությամբ զինծառայողի ներկայանալը զինկոմիսարիատ կամ զինվորական դատախազություն: Այն դեպքում, երբ զինծառայողը գորամասից կամ ծառայության վայրից դուրս ինքնակամ գտնվելու ընթացքում ձերբակալվում (կալանավորվում) է այլ արարքի համար և թաքցնում է զինծառայության մեջ իր գտնվելու փաստը, քննարկվող հանցագործությունը շարունակում է կատարվել:

Գործնականում երբեմն հարց է առաջանում, թե արդյոք զինծառայողի կողմից իր գտնվելու վայրի մասին հրամանատարությանը տեղեկացնելը կարելի է համարել գորամասն ինքնակամ թողնելու կամ ծառայությանը ժամանակին չներկայանալու հանցագործության ավարտ:

Այս հարցի կապակցությամբ մասնագիտական գրականության մեջ կան տարբեր տեսակետներ: Մասնավորապես՝ Ն. Ա. Պետտոխովան և Ա. Կ. Ուկոլովը համարում են, որ նման տեղեկացումը կարող է դիտվել որպես քննարկվող հանցագործության ավարտի պահ այն դեպքում, երբ հրամանատարության կողմից զինծառայողին հրամայվում է որոշակի հստակ ժամկետում ներկայանալ ծառայության վայր: Տեղեկացումը կարող է դիտվել որպես հանցագործության ավարտի պահ նաև այն դեպքում, երբ կհաստատվի գորամաս ներկայանալու ժամանակի ձգձգման որևէ հարգելի պատճառ<sup>5</sup>: Տվյալ դեպքում տեղեկացնելու պահից գորա-

<sup>5</sup> Տես «Преступления против военной службы: научно-практические комментарии к Уголовному кодексу РФ», под. ред. А. А. Тер-Акопова. М., 1999, с. 104:

մասից բացակայելը կորցնում է ինքնակամության հատկանիշը, քանի որ զինծառայողը գործում է ըստ հրամանատարության կողմից իրեն տրված հրահանգների: Եթե նա արհամարհում է դրանք, ապա տեղեկացումը չի կարելի համարել տվյալ հանցագործության ավարտի պահ, քանի որ ինքնակամության հատկանիշը պահպանվում է: Անհրաժեշտ է նաև նշել, որ տվյալ հանցագործության ավարտի պահ կարելի է համարել այն պետական մարմիններին զինծառայողի դիմելու պահը, որոնք իրավունք ունեն դադարեցնելու զինվորական ծառայությունից խուսափելու գործողությունները և ձեռնարկելու զինծառայողին գործնաս հասցնելու միջոցներ: Ջորամասից ինքնակամ բացակայության կամ ծառայությանը ժամանակին չներկայանալու մասին հասարակական կազմակերպություններին հասցեագրված հայտարարության ներկայացման պահը չի կարող համարվել հանցագործության ավարտի պահ:

Ինքնակամ բացակայության ժամկետը չի ընդհատվում այն դեպքերում, երբ զինծառայողի՝ գործնասից (ծառայության վայրից) անօրինական կերպով դուրս գտնվելու ընթացքում իրավասու հրամանատարը (պետը) հրաման է արձակում նրան գործնասի անձնակազմի ցուցակներից հանելու մասին: Այդպիսի հրամանն ակնհայտորեն անօրինական է: Պետք է նշել, որ սույն պարզաբանման սահմաններից դուրս է մնում նման անօրինական հրաման արձակողի պատասխանատվության հարցը: Ենթադրում ենք, որ բոլոր հանցանշանների առկայության դեպքում նման արարքը պետք է որակել ՀՀ Քր. օր.-ի 308-րդ հոդվածով՝ որպես պաշտոնական լիազորությունների չարաշահում:

Ավարտելով տվյալ հարցի քննարկումը՝ նշենք, որ այս հանցակազմի համար ՌԴ քրեական օրենսգրքում տարբերակված մոտեցում է դրսևորվում պայմանագրով և գորակոչի հիման վրա ծառայություն անցնող զինծառայողների նկատմամբ<sup>6</sup>: Որոշ քրեագետներ դրա տրամաբանությունն ու հիմնավորումը տեսնում են այն բանում, որ պայմանագիր կնքողի համար զինվորական ծառայությունը յուրահատուկ աշխատանք է, որը նա ընտրում է կամովին՝ ի տարբերություն ժամկետային պարտադիր զինծառայողից, որի համար զինվորական ծառայությունը Հայրենիքի առջև բարոյական պարտքն է և սահմանադրական պարտականությունը: Մեր կարծիքով՝ տվյալ մոտեցումը չի կարելի համարել հիմնավոր, քանի որ անկախ զինվորական ծառայությանն անցնելու իրավական հիմքերից երկու դեպքում էլ զինծառայողներին ներկայացվող պահանջները պետք է լինեն միատեսակ: Հակառակ դեպքում բանակում կառաջանա խտրականություն, ինչը բացասաբար կազդի ՁՈՒ-ի ընդհանուր մարտունակության վրա:

«Դասալքությունը» զինվորական ծառայության պարտականություններից վերջնականապես խուսափելու նպատակով գործնասը կամ ծառայության վայրը թողնելն է, ինչպես նաև նույն նպատակով ծառայության չներկայանալը: Դասալքություն գործելով՝ զինծառայողն անօրինական կերպով հեռանում է իր ծա-

<sup>6</sup> Տես «Уголовный кодекс РФ» (принят Государственной Думой РФ 24 мая 1996 г.), с. 337 (<http://www.consultant.ru/popular/ukrf/>):

ռայոդական հարաբերությունների ոլորտից՝ առանց երբևէ զինվորական ծառայության պարտականությունների կատարմանը վերադառնալու մտադրության:

Դասալքությունը զինվորական ծառայություն անցնելու կարգի դեմ ուղղված առավել վտանգավորություն ներկայացնող զինվորական հանցագործություն է, քանի որ զինծառայողը լիովին խուսափում է զինվորական ծառայության պարտականությունների կատարումից:

Դասալքությունը տևող հանցագործություն է, որը կատարվում է ծառայությունից անօրինական կերպով դուրս գտնվելու ամբողջ ընթացքում: Սկզբնական պահ պետք է համարել ծառայությունից խուսափելու նպատակով գորամասից կամ ծառայության վայրից ինքնական հեռանալու կամ ծառայության ներկայանալու ժամկետի ավարտի պահը: Եթե դասալքություն գործած զինծառայողը որոշակի ժամանակ անց փոխում է իր մտադրությունը և որոշում է վերադառնալ ծառայության, ապա արարքը դիտվում է որպես զոչումով ներկայանալ, այլ ոչ թե դասալքություն գործելուց կամովին հրաժարվել:

Դասալքության ավարտի պահ պետք է համարել այն ժամանակը, երբ զինծառայողը իր կամքով կղադարեցնի ծառայությունից դուրս անօրինական գտնվելը (կվերադառնա գորամաս, մեղայականով կներկայանա իրավապահ մարմիններ, իր մասին հայտարարություն կտա զինկոմիսարիատին, պետական իշխանության մարմիններին և այլն) կամ էլ այդ հանցանքը կկատարվի զինվորական հրամանատարության կամ իշխանության մարմինների կողմից: Դասալքության ավարտի պահ է համարվում նաև գորակոչային տարիքը<sup>7</sup> լրանալու օրը:

ՀՀ գործող Քր. օր. -ի 362-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով նախատեսված են այս հանցագործությունը ծանրացնող հանգամանքներ: Ի տարբերություն նախկինից, ՀՀ գործող Քր. օր. -ի 362-րդ հոդվածի 2-րդ մասում քրեական պատասխանատվություն է նախատեսված զենքով դասալքության համար: Անկասկած, մեծ ծանրացնող հանգամանքի դեպքում դասալքությունը առանձնանում է մեծ հասարակական վտանգավորությամբ, ուստի և դրա համար նախատեսված է ավելի խիստ պատիժ: Խոսքն այն զենքի մասին է, որը պատկանում է զինծառայողին ծառայողական օրինական պարտականությունների ուժով: Այդպիսի զենքերի թվին դասվում են ատրճանակները, ավտոմատները, գնդացիները, տարբեր տեսակի սառը զենքեր (սվին-դանակներ և այլն), այլ զենքեր, որոնք ընդգրկված են ՀՀ ՁՈՒ-ի սպառազինությունում: Մինևույն ժամանակ, նորագույն մասնագիտական գրականության մեջ հանդիպում են տեսակետներ, որ պայթուցիկ նյութերը, որպես կանոն, օգտագործվում են պայթուցիկ սարքերում, ուստի չկա անհրաժեշտություն դրանք ներառելու քննարկվող հանցագործության առարկաների մեջ<sup>8</sup>: Սակայն մենք հակված չենք մեծ մոտեցմանը: Պայթուցիկ նյութերը՝ որպես հան-

<sup>7</sup> Տես «Ձինապարտության մասին» ՀՀ 1998 թվականի սեպտեմբերի 16-ի հմ. ՀՕ-250 օրենքը, հոդ. 11, մաս 1 («ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 1998, հմ. 16):

<sup>8</sup> Տես *С. П. Шаранов. Дезертирство с оружием: основания криминализации, вопросы квалификации и проблемы законодательной конструкции. «Законы России: опыт, анализ, практика», 2006, № 11:*

ցագործության առարկա, պահպանում են իրենց յուրահատկությունը, քանի որ կարող են գոյություն ունենալ պայթուցիկ սարքերից անջատ (օրինակ՝ տեղափոխման կամ պահպանման ժամանակ): Ուստի զինամթերքով, պայթուցիկ նյութերով, պայթուցիկ սարքերով, ռազմական տեխնիկայով դասալքությունը պակաս վտանգավորություն չի ներկայացնում, քան զենքով դասալքությունը: Կարծում ենք, որ այս առումով նպատակահարմար և ավելի ընդգրկուն կլինի ՀՀ Քր. օր.-ի 362-րդ հոդվածի 2-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ՝ «Դասալքությունը, որը կատարվել է ծառայության համար վստահված զենքով, զինամթերքով, պայթուցիկ նյութերով ու սարքերով...»:

Դասալքությունը համարվում է մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ կատարված, եթե դրա կատարմանը մասնակցել են երկու և ավելի անձինք, որոնք նախապես համաձայնության են եկել տվյալ հանցագործությունը համատեղ կատարելու մասին: Այն դեպքում, երբ քննությամբ չի հավաստվում, որ միաժամանակ դասալքություն կատարած անձինք գործել են նախնական համաձայնությամբ, ապա չեն կարող լինել ՀՀ Քր. օր.-ի 362-րդ հոդվածի 2-րդ մասով որակման հիմքեր:

Մի խումբ անձանց կողմից գործմասը կամ ծառայության վայրն ինքնակամ թողնելու արարքը պրակտիկայում շատ հազվադեպ է պատահում: Որպես կանոն, նման դեպքերը հիմնականում ոչ կանոնադրական հարաբերությունների հետևանք են: Ուստի ծանրացնող հանգամանքներով դասալքության հանցակազմի հետազոտման ժամանակ հարցեր են առաջանում, թե հնարավոր է արդյոք գործմասը կամ ծառայության վայրը զենքով, կամ մի խումբ անձանց կողմից, կամ կազմակերպված խմբով ինքնակամ թողնելը, և անհրաժեշտ է արդյոք ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածում նման ծանրացնող հանգամանքներ նախատեսելը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործմասը կամ ծառայության վայրը զենքով ինքնակամ թողնելը մեծ հասարակական վտանգ է ներկայացնում, նպատակահարմար ենք համարում ՀՀ Քր. օր.-ի 361-րդ հոդվածը լրացնել ծանրացնող հանգամանքներ նախատեսող նոր մասով և այն շարադրել հետևյալ կերպ. «Չին-ծառայողի կողմից գործմասը կամ ծառայության վայրը զենքով, զինամթերքով, պայթուցիկ նյութերով և սարքավորումներով ինքնակամ թողնելը, ինչպես նաև ժամանակին ծառայության չներկայանալը...»:

Միևնույն ժամանակ, կարծում ենք, որ դասալքության և գործմասի տարածքն ինքնակամ թողնելու հանցագործությունների իրավաբանական տարբերակումը պահանջում է ավելի հստակ որոշված, այդ թվում՝ քանակական (ժամկետների առումով) չափանիշների ամրագրում, ինչը ենթադրում է համապատասխան լուրջ ուսումնասիրություն:

Հուսով ենք, որ մեր կողմից առաջարկված մոտեցումները կարող են որոշակիորեն նպաստել խնդրո առարկա հանցագործությունների կանխմանն ու դրանց դեմ պայքարի արդյունավետության մեծացմանը:

**ВОЕННОЕ ПРАВО**

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОЙ ОТВЕТСТВЕННОСТИ  
ЗА САМОВОЛЬНОЕ ОСТАВЛЕНИЕ ЧАСТИ И ДЕЗЕРТИРСТВО**

*К. А. БРУТЯН, старший лейтенант, аспирант Института философии,  
социологии и права НАН РА, офицер юридического управления МО РА*

**РЕЗЮМЕ**

В статье рассмотрены особенности составов преступлений самовольного оставления части или места службы и дезертирства. Актуальность исследования обуславливается недостаточной юридической разработанностью данной темы в РА, а также высокой общественной опасностью указанных военных преступлений.

В статье выявлены законодательные и правоприменительные пробелы в обсуждаемых составах преступлений и представлены конкретные предложения о внесении изменений и дополнений в соответствующие статьи действующего Уголовного кодекса РА, что, по мнению автора, будет способствовать повышению эффективности уголовно-правового законодательства в борьбе с вышеуказанными преступлениями, а также в целях их профилактики.

**MILITARY LAW**

**SOME ISSUES ON CRIMINAL RESPONSIBILITY  
FOR THE UNAUTHORIZED ABANDONMENT  
OF THE MILITARY UNIT AND DESERTION**

*K. A. BRUTYAN, Senior Lieutenant, Graduate Student at the Institute of Philosophy,  
Sociology and Law, NAS, RA, Officer at the Directorate of Law, MOD, RA*

**SUMMARY**

This article examines the peculiarities of the corpus delicti of the absence without leave from the military unit or the place of service and the desertion. The urgency of the study is conditioned by inadequate legal development of the given subject in the Republic of Armenia, as well as by high social danger of the mentioned war crimes.

The article revealed legislative and enforcement gaps in the discussed corpus delicti and makes concrete proposals on making alterations and amendments to the relevant articles of the current Criminal Code of the Republic of Armenia. This, in the author's opinion, will contribute to the rise of the efficiency of penal legislation in the struggle against the crimes, as well as to their prevention.



**ՌԱԶՄԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ  
ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԶՈՐՔԵՐԻ  
ՏԵՂԱԳՐԱԵՐԿՐԱԲԱՇԽԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

*Ս. Ա. ՍՈՒՉՅԱՆ, փոխգնդապետ, ԵՊՀ աշխարհագրության  
և երկրաբանության ֆակուլտետի հայցորդ,  
ՀՀ ՁՈՒ-ի ԳՇ ռազմարեղագրական բաժնի ավագ սպա*



Ռազմական գործողությունների օպերատիվ (մարտական) ապահովման հիմնական ձևերից մեկն է տեղագրաերկրաբաշխական ապահովումը (ՏԵԱ): Այն կազմակերպվում և իրականացվում է տեղագրաերկրաբաշխական տվյալները պատրաստելու և շտաբներին ու զորքերին ժամանակին հասցնելու նպատակով, ինչն անհրաժեշտ է որոշումների կայացման, պլանավորման ու մարտական գործողությունների վարման, փոխգործության կազմակերպման ու դեկավարման, ինչպես նաև զենքի և մարտական տեխնիկայի արդյունավետ կիրառման ժամանակ տեղանքի ուսումնասիրման ու գնահատման համար<sup>1</sup>:

- Չորքերի ՏԵԱ-ն բաղկացած է երկու փուլից.
- պլանավորման,
- կազմակերպման:

Պլանավորման փուլում որոշվում են՝ միջոցառումների ծավալը և օպտիմալ կազմը, դրանց անցկացման հաջողականությունը, յուրաքանչյուր միջոցառման նախապատրաստման և անցկացման վերջնական ժամկետները, համապատասխան հրամանատարներին հասցվող անհրաժեշտ տեղեկույթի ծավալը:

ՏԵԱ-ի կազմակերպման փուլում կատարվում են՝ պլանավորված միջոցառման ժամանակին և որակով անցկացման ապահովում, զորամասերի լրիվ և համակողմանի ապահովում տեղագրաերկրաբաշխական տվյալներով:

Մարտական գործողությունների ընթացքում զորքերի ՏԵԱ-ի պլանավորումը և կազմակերպումը ստեղծագործական գործընթացներ են: Կատարողները պետք է լինեն օպերատիվ-մարտավարական, մարտավարամասնագիտական և մասնագիտական առումներով լավ պատրաստված, ճիշտ ըմբռնեն զորքերի մարտական խնդիրները, ՏԵԱ-ի մասով դրանցից բխող առաջադրանքները, ինչպես նաև

<sup>1</sup> Տես «Наставление по топогеодезическому обеспечению Вооруженных сил СССР». М., 1986, с. 3:

դրանք տրված ժամկետներում կատարելու համար ճիշտ որոշեն առավել արդյունավետ միջոցներն ու եղանակները<sup>2</sup>:

ՏԵԱ-ի պլանավորման և կազմակերպման ժամանակ հաշվի են առնվում ՋՈՒ-ի և զորատեսակների տեղագրաերկրաբաշխական տվյալների պատրաստմանն ու ճշգրտությանը ներկայացվող պահանջները, մարտական գործողությունների բնույթը, տվյալ գոտու տեղագրական քարտեզներով ու երկրաբաշխական կետերի կոորդինատների քարտացուցակներով գործերի նախնական ապահովվածությունը, գործերի գործողությունների գոտու ֆիզիկաաշխարհագրական պայմանները:

Ֆիզիկաաշխարհագրական և աշխարհաքաղաքական տեղեկությունների ստացման հիմքերից պետք է լինի նաև ռազմական աշխարհագրությունը:

**Ռազմական աշխարհագրությունն** օգնում է զինված ուժերի տեղագրական ծառայությանը՝ գործերի տեղագրաերկրաբաշխական ապահովման գործում: Տվյալ տարածքի մասին ճշգրիտ և հավաստի տեղեկությունները տեղագրական ծառայությանը հնարավորություն են տալիս գործերը ժամանակին ապահովելու տեղագրաերկրաբաշխական տվյալներով ու տեղագրական քարտեզներով, օգնում են հասկանալու, թե ինչպես է միջավայրը (ֆիզիկական և հասարակական) ազդում ռազմաքաղաքական ռազմավարության, ծրագրերի, պլանների, ինչպես նաև մարտական գործողությունների և թիկունքային ապահովման վրա՝ ինչպես տարածաշրջանային, այնպես էլ տեղական մասշտաբով: Առանցքային գործոններն են՝ աշխարհատարածական կապը, տեղագրությունը և ջրային համակարգը, երկրաբանությունը և հողերը, բուսականությունը, եղանակն ու կլիման, գիշերն ու ցերեկը, ձգողականության ուժը, բնակչության ռասայական և էթնիկական կազմը, սոցիալական համակարգը, լեզուն և կրոնը, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը, տրանսպորտն ու կապը, հաղորդակցության ուղիները, ռազմական օբյեկտները: Այս ամենն անմիջական ազդեցություն է գործում ռազմավարության, մարտավարության, գործերի վերահսկման և կազմակերպական կառուցվածքի, ցամաքային, ծովային, օդային ու տիեզերական ուժերի օպտիմալ համադրության, տվյալների հավաքման, նպատակների որոշման, զենքի, հանդերձանքի և սարքավորանքի ձեռքբերման ու բաշխման, սննդամթերքով ապահովման, նյութատեխնիկական սպասարկման, ինժեներական և բժշկական ապահովման, կրթության և մարտական պատրաստման վրա<sup>3</sup>:

Ռազմական աշխարհագրությունը ուսումնասիրում է պետությունների քաղաքական ուժերի տեղաբաշխումը, տնտեսական ու ռազմական հնարավորությունները, բնական պայմանները և դրանց ազդեցությունը պատերազմի վարմանը

<sup>2</sup> Տես *Г. Ю. Армаш. Топогеодезическое обеспечение боя. Одесса, 2003* (<http://www.bestreferat.ru/referat—35940.html>):

<sup>3</sup> Տես *Дж. М. Коллинз. Военная география для профессионалов и непрофессионалов. М., 2005, с. 18:*

պատրաստվելու վրա<sup>4</sup>: Ընդ որում, հաշվառման համար առանձնապես կարևոր են՝ պետության ազգային հարստությունը, արդյունաբերության (հատկապես՝ բազային և ռազմական) զարգացածության աստիճանն ու արտադրական հզորությունը, գյուղատնտեսության, տրանսպորտի ու կապի հնարավորությունները, պետության ապահովվածությունը բնական և աշխատանքային ռեսուրսներով, բնակչության և արտադրության աշխարհագրական տեղաբաշխման առանձնահատկությունները, գիտության ու կրթության զարգացածության մակարդակը և ազդեցությունը պետության նյութական արտադրության ու ժողովրդի հոգևոր-մշակութային կյանքի վրա, նյութական միջոցների ռեզերվը, պետության ֆինանսական ռեսուրսները:

Ռազմական գործողությունները տեղի են ունենում որոշակի տարածքում, և ցանկացած օպերացիայի հաջողությունը մեծապես կախված է կոնկրետ ռազմավարական ու մարտավարական իրավիճակում բնական և հասարակական պայմանների ճիշտ օգտագործումից: Ռազմական օպերացիան, ընդհանուր առմամբ, հնարավոր չէ լիովին գատել տվյալ տարածքի աշխարհագրական պայմաններից<sup>5</sup>: Չորքերի մարտական գործողությունների պլանավորման համար անհրաժեշտ է կատարել ռազմական աշխարհագրության հետազոտության տվյալների վերլուծություն: Ֆիզիկաաշխարհագրական պայմաններն ազդում են ինչպես կոնկրետ մարտական գործողությունների ու զորքերի տեղաշարժերի վրա, այնպես էլ տեղագրաբերկրաբաշխական տվյալներով այդ զորքերի ապահովման գործընթացի վրա: Դրանցով են պայմանավորվում զորքերի ՏԵԱ-ի բովանդակությունը, մեթոդիկան և առանձին աշխատանքների կազմակերպումը<sup>6</sup>: Այսպես, տեղագրաբերկրաբաշխական ապահովումն ունի իր առանձնահատկությունները բնակավայրում, լեռներում, անտառում, անապատում և կիսաանապատում, բարձրադիր ցուրտ գոտիներում, մասն` ձմեռային պայմաններում ռազմական գործողություններ վարելու դեպքում:

**Բնակավայրում**, հատկապես՝ քաղաքում, մարտական գործողություններին մասնակցող ստորաբաժանումների ՏԵԱ-ի վրա էապես ազդում են բնակավայրի տարածքի ուրվանկարը և մակերեսը, շինությունների խտությունը, ստորգետնյա կառույցների առկայությունը, տեղանքի առանձնահատկությունները: Բնակավայրում մարտ վարելու ժամանակ ՏԵԱ-ի նպատակը հրամանատարների կամ շտաբների ապահովումն է խոշորամասշտաբ տեղագրական քարտեզներով, ադյուսակներով, քաղաքի պլանով, հատակագծերով կամ լուսանկարներով, որոնցում պետք է պատկերված լինեն գլխավոր և կարևոր փողոցները, հիմնական անցումները, արտացոլվեն պլանավորման բնույթը և շինությունները, կարևոր կողմնորոշիչները (արդյունաբերական ձեռնարկություններ, աշտարակատիպ

<sup>4</sup> Տես «Военный энциклопедический словарь». М., 2002, с. 352, նաև՝ «Политическая и военная география». Учебное пособие. М., 1974 с. 6:

<sup>5</sup> Տես *Д. Рассел*. Американская география. М., 1957, с. 463:

<sup>6</sup> Տես *В. И. Казаков*. Топогеодезическое обеспечение операций. М., 1982:

կառույցներ, եկեղեցիներ, մզկիթներ, հուշարձաններ), թաղամասերի արտաքին կառուցվածքը և այլն:

**Լեռնային շրջաններում** մարտական գործողություններ վարելու դեպքում ՏԵԱ-ն կատարվում է ոչ թե ամբողջ ճակատային գոտու երկայնքով, այլ ըստ ուղղությունների՝ խորությամբ: Տեղագրական քարտեզների ավելի մեծ պաշարներ հատկացվում են խորքում գործող ստորաբաժանումներին, իսկ քիչ հասանելի տարածքների համար ստեղծվում է քարտեզների համեմատաբար փոքր պաշար: Շատ դեպքերում անհրաժեշտ է լինում պատրաստել մարտական գործողությունների թատերաբեմի առավել կարևոր տեղամասերի ռելիեֆային քարտեզ՝ 1:50 000 կամ 1:25 000 մասշտաբով: Անհրաժեշտ է լինում նաև հաշվի առնել գետերի բնույթը, դրանց հնարավոր ազդեցությունը մարտի ընթացքի վրա:

Տեղանքի այն հատկանիշները, որոնք ազդում են մարտի կազմակերպման և վարման, զենքի ու մարտական տեխնիկայի կիրառման վրա, ընդունված է անվանել տեղանքի մարտավարական հատկանիշներ<sup>7</sup>: Տեղանքի հիմնական մարտավարական հատկանիշներն են՝ անցանելիությունը, պաշտպանիչ, քողարկիչ, կողմնորոշիչ, կրակի վարման, դիտման, ինժեներական պայմանները: Տեղանքն ըստ անցանելիության կարող է լինել հեշտ անցանելի, անցանելի, դժվար անցանելի և անանցանելի: ՏԵԱ-ի նախատեսվող միջոցառումը ճիշտ և ժամանակին իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել վերը նշված հատկանիշները: Տեղանքի անցանելիությունը բնորոշող կարևոր պայմանն է ճանապարհային ցանցը: Որքան այն զարգացած ու որակյալ է, այնքան տեղանքն ավելի մատչելի է: Հաշվի են առնվում նաև տվյալ լեռնային շրջանի կլիմայական պայմանները, խմելու ջրի առկայությունը, երկրաբանական կառուցվածքը (տեղանքներ, անկայուն տեղամասեր, սելավներ, հեղեղատներ, նաև՝ մագնիսական շեղման (անոմալիայի) առկայություն, մթնոլորտային ճնշում, լանջերի թեքություններ, գետերի ջրային ռեժիմ և այլն):

**Անտառային տեղանքում** մարտական գործողություններ վարելու ժամանակ հրամանատարներին և շտաբներին տեղագրական քարտեզներով ապահովելիս անհրաժեշտ է գնահատել անտառի խտությունը, ծառերի տեսակները և հաստությունը, ճանապարհների և արահետների առկայությունն ու անցանելիությունը, հողի տեսակը, ինչպես նաև ջրագրական ցանցն իր հատկանիշներով (գետերի մեծություն, ջրառատություն, վարարման շրջաններ, լճակների և ճահիճների առկայություն, դրանց անցանելիություն), կլիմայական պայմանները (օդի ջերմաստիճան, բացարձակ և հարաբերական խոնավություն, տեղումների քանակ):

**Անապատային և կիսաանապատային գոտում** մարտ վարելու դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել, որ մարտը հիմնականում վարվում է ճանապարհների երկայնքով, ուստի հրետանու ստորաբաժանումների երկրաբաշխական ապահովումը կատարվում է, որպես կանոն, դրանց տեղաբաշխման ընթացքում:

<sup>7</sup> Ств «Военная топография». Учебник для высших военно-учебных заведений. М., 2008:

Կարևոր են հողաբուսական կազմի վերլուծությունը, ստորգետնյա ջրերի և աղբյուրների տեղաբաշխման իմացությունը, քողարկիչ տարրերի առկայությունը: Ջրի սակավությունը դժվարացնում է գորքերի մատակարարումը, իսկ տեղանքում ցայտունորեն արտահայտված առարկաներ չլինելը դժվարացնում է կողմնորոշումը և նշանացուցումը<sup>8</sup>:

**Ձմռանը** ՏԵԱ-ի համար կարևոր է իմանալ ձյան ծածկույթի հաստությունը, ջերմաստիճանը, քամիների գերակշռող ուղղությունները, մառախուղների հավանականությունը և տևողությունը, օրվա տևողությունը, ճմառաքերի ու ձնհալների հավանականությունը և հետևանքները: Պետք է նկատի ունենալ, որ ամռանը լավ երևացող մի շարք կողմնորոշիչներ, ինչպիսիք են՝ գրունտային ճանապարհները, ոչ մեծ գետակներն ու առվակները, հեղեղատները, ճահճային տեղամասերը, ցածրահասակ բույսերը, ձմռանը ծածկվում են ձյան շերտով, ինչի հետևանքով ռելիեֆը կարծես համահարթվում է՝ դժվարացնելով կողմնորոշումը: ՌԻստի պետք է որպես կողմնորոշիչ ընտրել այլ առարկաներ:

Տեղանքը ճիշտ գնահատելու և լավ կողմնորոշվելու համար անհրաժեշտ է կիրառել զինված պայքարի ժամանակակից տեղեկությանի տեխնոլոգիաները, որոնցով այսօր պայմանավորված են ինչպես տեղանքի ու իրավիճակի վերլուծության հավաստիության աստիճանը, այնպես էլ գորքերի շարժունակությունը:

Այդ շրջանակներում 2009 թ. ապրիլին «Քարտեզագրության և գեոդեզիայի կենտրոն» ՊՈԱԿ-ում գործարկվել է տիեզերական ընդունիչ կայանը, որի նպատակն է Հայաստանի և տարածաշրջանի վերաբերյալ ճշգրիտ տվյալների ստացումը տիեզերական տեխնոլոգիաների կիրառմամբ: ՀՀ Ձինված ուժերի ռազմատեղագրական ծառայության տվյալների, ստացված տիեզերալուսանկարների ու դրանց միջոցով թարմացված քարտեզներով հնարավորություն կընձեռվի ավելի արդյունավետ կերպով կազմակերպելու ՀՀ ՁՌԻ-ի ՏԵԱ-ն:

Այսպիսով՝ հնարավորություն է ստեղծվում տեղանքի վերաբերյալ ռազմական աշխարհագրության, ինչպես նաև տեղագրական հետախուզության արդյունքների հիման վրա էապես մեծացնելու մարտական գործողությունների շրջանում գորքերի ՏԵԱ-ի արդյունավետությունն ու նրանց անվտանգությունը, ինչն էլ իր հերթին կնպաստի Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անվտանգության ապահովմանն ու սահմանների պաշտպանության ամրապնդմանը, նաև այն բանին, որ «ՀՀ Ձինված ուժերն իրենց մարտունակությամբ մշտապես գերազանցեն հավանական հակառակորդի զինված ուժերը»<sup>9</sup>:

<sup>8</sup> Տես «Ռազմական տեղագրություն», դասագիրք: Ե., 2007:

<sup>9</sup> *U. Ohanjyan*, Հայաստանի Հանրապետության բարեփոխումները, երկրորդ փուլ: «ՀԲ», 2008, հմ. 2–3:

## ВОЕННАЯ ТОПОГРАФИЯ

### РОЛЬ И ЗНАЧЕНИЕ ВОЕННОЙ ГЕОГРАФИИ В ТОПОГЕОДЕЗИЧЕСКОМ ОБЕСПЕЧЕНИИ ВОЙСК

*С. А. СУДЖЯН, подполковник, соискатель факультета географии и геологии  
ЕГУ, старший офицер военно-топографического отдела ГШ ВС РА*

#### РЕЗЮМЕ

Топогеодезическое обеспечение (ТГО), являясь одним из видов оперативного (тактического) обеспечения военных действий, представляет собой комплекс мероприятий по подготовке и доведению до войск топогеодезических данных, необходимых для изучения и оценки местности при принятии решения на бой. В данном отношении определяющую роль играет военная география, которая занимается изучением характеристик земной поверхности, естественных рубежей и преград, гидрографии, дорожной сети и других важнейших объектов местности.

В статье рассматриваются основные характеристики местности, учет которых необходим при планировании, подготовке и ведении боевых действий в населенных пунктах (городах), горной и горно-лесистой, пустынной и полупустынной местностях.

## MILITARY TOPOGRAPHY

### THE ROLE AND SIGNIFICANCE OF MILITARY GEOGRAPHY IN THE TROOPS' TOPOGEODESIC SUPPORT

*S. A. SUJYAN, Lieutenant-Colonel, Applicant at the Faculty of Geography  
and Geology, YSU, Senior Officer at the Military-Topographic Department  
of the Main Staff of the RA Armed Forces*

#### SUMMARY

Topogeodesic support (TGS), being one of the kinds of operational (tactical) support of military operations, is a set of measures of preparing topogeodesic data and bringing it to the troops' notice. These data are necessary for exploring and assessing the area while making decisions for a battle. Military geography plays a crucial role in these terms. It studies the characteristics of the Earth surface, natural barriers and borders, hydrography, road network and other key objects of an area.

This article examines the basic characteristics of the area, which should be taken into account while planning, preparing and fighting in localities (towns), mountain terrains and woodlands, desert and semidesertic areas.

**ՀՀ ՁՈՒ-ՈՒՄ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ՊԱՐՏԱԳԻՐ  
ԶԻՆՃԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ  
ՀԻԳԻԵՆԻԿ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ**

*Լ. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ք/ծ կապիտան, Երևանի Մ. Հերացու անվան  
պետական բժշկական համալսարանի Ռ-ազմաբժշկական ֆակուլտետի  
ռազմական թունաբանության, ճառագայթաբանության և բժշկական  
պաշտպանության ցիկլի ասպիրանտ, ավագ դասախոս*



Օրգանիզմի աճման և զարգացման պրոցեսները (կենսընթացներ) ժառանգականորեն որոշարկված են, սակայն օնտոգենեզի ընթացքում տարբեր գործոնների ազդեցությամբ նրանք կարող են շեղվել «ծրագրից»<sup>1</sup>: Աճման և զարգացման դանդաղումը, մարմնաչափական ցուցանիշների նորմաների նվազումը կարող են դիտվել որպես հակազդում կյանքի պայմանների, ինչպես նաև էկոլոգիական (բնապահպանական) իրավիճակի վատացմանը: Այս իմաստով ֆիզիկական զարգացման ցուցանիշները կարող են օգտագործվել նաև սոցիալ-հիգիենիկ մշտագնման ժամանակ և ծառայել որպես կարևոր ցուցանիշ ինչպես տարածաշրջանային էկոլոգիական-հիգիենիկ իրավիճակի գնահատման<sup>2</sup>, այնպես էլ հիվանդությունների վաղ հայտնաբերման համար: Տարբեր բացասական գործոնների առկայության դեպքում պետք է կարևորել նաև անհատական ֆիզիկական զարգացման գնահատման նշանակությունը «ռիսկի» խմբի հայտնաբերման և նրա համար կանխարգելիչ միջոցառումների մշակման գործում<sup>3</sup>: Մեծ թվով գիտական հետազոտությունների

<sup>1</sup> Տես Լ. Գ. Կամադանովա, Ե. Բ. Սարգսյան. Соотносительная роль наследственных и средовых факторов в развитии детей и подростков. «Гигиена и санитария», 1981, № 10:

<sup>2</sup> Տես Բ. Ս. Կուչմա. Проблемы мониторинга состояния здоровья детского населения в связи с факторами окружающей среды. «Гигиена и санитария», 1993, № 11; Ա. Գ. Սուխարև. Научное обоснование системы социально-гигиенического мониторинга детского и подросткового населения. «Профилактика заболеваний и укрепление здоровья». 1999, № 1; Յու. Ա. Կոնյակ. Популяционный мониторинг физического развития детского населения. «Гигиена и санитария», 1996, № 1:

<sup>3</sup> Տես Վ. Բ. Կոլոմյա, Նշ. աշխ., Ս. Ի. Մեդվեդև. Формирование здорового образа жизни населения на основе разработки программ профилактики важнейших инфекционных заболеваний по «факторам риска» (Материалы I научно-практич. конф. «Здоровье населения Российской Федерации и пути его улучшения»). М., 1994, сс. 152—153; Ի. Ի. Սուխарова. Физическое развитие детей и подростков к концу XX века; связь с биологически-

տվյալների համաձայն՝ հիվանդացությունը հավաստի բարձր է այն երիտասարդների շրջանում, որոնք ունեն աններդաշնակ ֆիզիկական զարգացում (ինչպես մարմնի զանգվածի ավելցուկ, այնպես էլ՝ պակաս): Նորմալ հասակի դեպքում մարմնի փոքր զանգվածը 5,3 անգամ մեծացնում է քրոնիկական հիվանդությունների զարգացման ռիսկը, իսկ զանգվածի ավելցուկը խթանում է ցանկացած ախտահարման զարգացում<sup>4</sup>:

Ելնելով վերը շարադրվածից և նաև հաշվի առնելով, որ զինծառայության ընթացքում առկա են ինչպես կյանքի պայմանների, այնպես էլ էկոլոգիական իրավիճակի փոփոխություն, մենք հետազոտել ենք ՀՀ տարբեր կլիմայական գոտիներում տեղակայված 7 զորամասերում ծառայող 1400 զինվորի և տվել նրանց ֆիզիկական զարգացման տեմպերի հիգիենիկ գնահատականը: Ֆիզիկական զարգացումն ուսումնասիրվել և գնահատվել է ռեգրեսիայի սանդղակների և սկրինինգ\* մեթոդների կիրառմամբ<sup>5</sup>: Ըստ ռեգրեսիայի սանդղակների մեթոդի՝ հետազոտվողները բաժանվել են 5 խմբի՝ ցածր, միջինից ցածր, միջին, միջինից բարձր և բարձր ֆիզիկական զարգացմամբ զինծառայողներ, իսկ ըստ սկրինինգ մեթոդի՝ չորս խմբի՝ նորմալ ֆիզիկական զարգացմամբ, մարմնի զանգվածի պակասությունով, մարմնի զանգվածի ավելցուկով և ցածրահասակ զինծառայողներ:

Ստորև ներկայացվում է զինծառայողների երեք՝ 18, 19, 20 և բարձր տարիքային խմբերի ֆիզիկական զարգացման տարբեր ցուցանիշների վերլուծությունը ծառայության առաջին ամսին և երկրորդ տարվա վերջում:

Զինծառայողների ֆիզիկական զարգացման և առողջական վիճակի միջև գոյություն ունեցող կապերի հայտնաբերման առումով հարցվածները համաձայն «Չանգվածային բժշկական քննությունների ժամանակ երեխաների, դեռահասների և երիտասարդների առողջական վիճակի համալիր գնահատման» մեթոդի բաժանվեցին չորս խմբի՝ առողջներ (1-ին առողջական խումբ), ֆունկցիոնալ շեղումներ ունեցողներ (2-րդ առողջական խումբ) և հիվանդության կոմպենսացված և սուբկոմպենսացված փուլում գտնվող քրոնիկ հիվանդություններով տառապող-

ми и социально-гигиеническими факторами. Автореф. дисс. док. мед. наук. М., 1996; Т. Г. Хамаганова. Влияние факторов внешней среды и наследственности на морфо-функциональное развитие детей и подростков на разных этапах онтогенеза. Автореф. дисс. док. мед. наук. М., 1979:

<sup>4</sup> Տես Ա. Ք. Ավետисяն. Особенности состояния здоровья и соматического развития городских и сельских школьников Армении. Автореф. дисс. канд. мед. наук. М., 1991; А. В. Оснач. Физическое развитие детей сельской и городской местности некоторых регионов Украины. Автореф. дисс. док. мед. наук. Киев, 1992:

\* Սկրինինգը (անգլ.՝ *screening* – գատում, տեսակավորում) մարդու համակողմանի հետազոտում է, որը ներառում է լայն արդիֆիլի մասնագետների կողմից բուժզննում և հիմնական կլինիկական անալիզների կատարում: Նպատակն է՝ պարզել այս կամ այն հիվանդությանը և դրա կանխարգելմանը մարդու հակվածությունը, ինչպես նաև հիվանդություններն ախտորոշել դրանց զարգացման ամենավաղ շրջանում և ապահովել բուժման մեծ արդյունավետություն: *Խմբ.*

<sup>5</sup> Տես А. А. Баранов, В. Р. Кучма, Ю. А. Ямпольская. Методы исследования физического развития детей и подростков в популяционном мониторинге. Руководство для врачей. М., 1999:



ներ (3-րդ և 4-րդ առողջական խմբեր): Հաշվարկվել է նաև մարմնի զանգվածի ինդեքսը (ՄՁԻ)<sup>6</sup>:

Ինչպես երևում է աղ. 1-ից, ծառայության սկզբում զինծառայողների միջին հասակը  $174,5 \pm 0,8$  սմ է, քաշը՝  $68,86 \pm 0,26$  կգ, իսկ վերջում՝ համապատասխանաբար,  $174,69 \pm 0,8$  սմ և  $66,73 \pm 0,25$  կգ: Բոլոր տարիքային խմբերում աճման համեմատ մեծանում են ինչպես հասակի, այնպես էլ քաշի ցուցանիշները:

Աղյուսակ 1

ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՍՄԱՐՄԱՆԱՉԱՓԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

Տարիքային խմբեր	Մարմնաչափական ցուցանիշներ	Մինչև ծառայությունը $M \pm m$	Ծառայության 2-րդ տարում $M \pm m$	Ֆիզիկական զարգացման հանրապետական ստանդարտները
18 տ. (n = 604)	հասակ (սմ)	$174,0 \pm 0,27$ $\sigma = 6,63$	$174,08 \pm 0,28$ $\sigma = 6,67$	$174,1 \pm 0,27$ $\sigma = 5,21$
	քաշ (կգ)	$68,01 \pm 0,41$ $\sigma = 9,91$	$65,84 \pm 0,39^*$ $\sigma = 9,48$	$67,66 \pm 0,41^{**}$ $\sigma = 5,65$
19 տ. (n = 551)	հասակ (սմ)	$174,38 \pm 0,29$ $\sigma = 6,83$	$174,68 \pm 0,29$ $\sigma = 6,78$	$175,05 \pm 0,27$ $\sigma = 5,39$
	քաշ (կգ)	$68,43 \pm 0,42$ $\sigma = 9,92$	$66,33 \pm 0,41^*$ $\sigma = 9,72$	$63,31 \pm 0,41^{**}$ $\sigma = 5,64$
20 և ավելի տ. (n = 245)	հասակ (սմ)	$176,0 \pm 0,43$ $\sigma = 6,74$	$176,21 \pm 0,43$ $\sigma = 6,76$	$175,9 \pm 0,29$ $\sigma = 4,92$
	քաշ (կգ)	$71,94 \pm 0,64$ $\sigma = 10,09$	$69,74 \pm 0,59^*$ $\sigma = 9,32$	$70,6 \pm 0,42$ $\sigma = 7,64$
Ընդհանուր	հասակ (սմ)	$174,5 \pm 0,18$ $\sigma = 6,76$	$174,69 \pm 0,18$ $\sigma = 6,77$	$175,2 \pm 0,22$ $\sigma = 5,27$
	քաշ (կգ)	$68,86 \pm 0,27$ $\sigma = 10,07$	$66,73 \pm 0,26^*$ $\sigma = 9,63$	$69,54 \pm 0,29^{**}$ $\sigma = 6,73$

Սակայն ծառայության դինամիկայում բոլոր տարիքային խմբերում քաշի ցուցանիշը, որպես կանոն, հավաստի կերպով ( $p < 0,05$ ,  $p < 0,001$ ) նվազում է: ՀՀ-ում զինծառայողների ցուցանիշների և 16–25 տարեկան տղաների ֆիզիկական զարգացման ստանդարտների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ բոլոր տարիքային խմբերում հասակի ցուցանիշների միջև հավաստի տարբերություն չի դիտվում, սակայն քաշի ցուցանիշի դեպքում արձանագրվում են հավաստի տարբերություններ:

Մեր կողմից կատարվել է զինծառայողների բաշխում՝ ըստ ֆիզիկական զարգացման խմբերի: Ընդ որում, զինծառայողների 69,6 %-ի հասակը համապա-

<sup>6</sup> Տես նույն տեղում:

\* Ծառայության սկզբում և վերջում ցուցանիշների տարբերությունը հավաստի է:

\*\* Ծառայության վերջում ցուցանիշի և ստանդարտի տարբերությունը հավաստի է:

տասխանում է միջին, 10,3 %-ինը՝ միջինից բարձր և բարձր, 20,1 %-ինը՝ միջինից ցածր և ցածր ֆիզիկական զարգացման համար սահմանված ցուցանիշներին: Եթե ինչպես միջին հասակային ցուցանիշը, այնպես էլ ըստ հասակի ֆիզիկական զարգացման խմբերը ծառայության ընթացքում հավաստի փոփոխության չեն ենթարկվում, ապա մարմնաչափական մյուս ցուցանիշը՝ քաշը, և ֆիզիկական զարգացման խմբերը ծառայության ընթացքում փոփոխվում են: Այսպես. ըստ քաշի՝ ֆիզիկական զարգացման միջին խմբում (տես աղ. 2) ծառայության

Աղյուսակ 2

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՐՄՆԱՉԱՓԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐՆ ԸՍՏ ՖԻԶԻԿԱԿԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԽՄԵՐԻ

Ցուցանիշները	Չինծառայողների թիվը	Ֆիզիկական զարգացման խմբերը									
		Ցածր		Միջինից ցածր		Միջին		Միջինից բարձր		Բարձր	
		n	%	n	%	n	%	n	%	n	%
Հասակ	ծառայության սկզբում (n = 1400)	25	1,8	256	18,3	969	69,2	120	8,6	30	2,1
	ծառայության երկրորդ տարվա վերջում (n = 1400)	12	0,9	222	15,9	993	70,9	143	10,2	30	2,1
Քաշ	ծառայության սկզբում (n = 1400)	75	5,4	214	15,3	851	60,8	164	11,7	95	6,8
	ծառայության երկրորդ տարվա վերջում (n=1400)	130	9,3	329	23,5	739	52,8	144	10,3	58	4,1

սկզբում ներառված էին զինծառայողների 60,8 %-ը, իսկ երկրորդ տարվա վերջում՝ 52,8 %-ը (p<0,05): Փոփոխություններ են արձանագրվել նաև ֆիզիկական զարգացման մյուս խմբերում. միջինից բարձր և բարձր խմբերում այդ թվերը կազմել են, համապատասխանաբար, 6,8 % և 4,1 % (p<0,05), իսկ միջինից ցածր և ցածր խմբերում՝ 5,4 % և 9,3 % (p<0.05):

Մեր կողմից հաշվարկվել է նաև ՄՁԻ-ի գործակիցը, որը ծառայության ընթացքում ևս փոխվում է (տես աղ. 3): Այսպես. աճում է մարմնի նորմալ զանգված ունեցողների թիվը (75,3 %-ից 78,5 %) և, հակառակը, նվազում է քաշի ավելցուկ (1,5 անգամ) և ճարպակալում (2,5 անգամ) ունեցողների թիվը: Մտահոգիչ է այն փաստը, որ 1,5 անգամ ավելանում է քաշի պակաս ունեցող զինծառայողների թիվը:

Մի շարք հեղինակների կարծիքով՝ օրգանիզմի հարմարվողական հնարա-

վորությունները, ֆիզիկական և հոգեկան ծանրաբեռնվածությունների նկատմամբ դիմացկունությունը առաջին հերթին պայմանավորված են ֆիզիկական զարգացման ներդաշնակության աստիճանով: Նրանք համարում են, որ զարգացման տարիքային ժամկետներից շեղումները և մորֆոֆունկցիոնալ վիճակի աններդաշնակությունը գրեթե միշտ ուղեկցվում են առողջական վիճակի փոփոխություններով. որքան մեծ են շեղումները, այնքան բարձր է հիվանդանալու հավանականությունը<sup>7</sup>: Մենք ուսումնասիրել ենք նաև ֆիզիկական զարգացման

Աղյուսակ 3

ՄՁԻ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ցուցանիշ (ՄՁԻ)	Ծառայության սկզբում		Երկրորդ տարվա վերջում	
	n	%	n	%
< 18,5	95	6,8	139	9,9
18,5 - 25	1054	75,3	1099	78,5
25 - 30	228	16,3	152	10,9
> 30	23	1,6	10	0,7

տեմպերի և առողջական վիճակի միջև կապը: Զինծառայողները բաժանվել էին առողջական խմբերի՝ ըստ ֆիզիկական զարգացման տեմպերի: Առողջական 1-ին խմբի երիտասարդների շրջանում գերակշռում են նորմալ ֆիզիկական զարգացում ունեցողները (տես աղ. 4): Մինչդեռ բրոնխիալ հիվանդության ախտորոշում ունեցող տղաների շրջանում ֆիզիկական զարգացման նորմալ

Աղյուսակ 4

ՄՁԻ-Ի ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Առողջական խմբեր	Մորֆոֆունկցիոնալ զարգացման մակարդակներ							
	նորմալ		մարմնի զանգվածի պակասություն		մարմնի զանգվածի ավելցուկ		ցածր հասակ	
	n	%	n	%	n	%	n	%
1-ին	483	42,3	45	28,6	18	25,0	6	21,4
2-րդ	447	39,1	66	42,1	28	38,9	14	50,0
3-րդ և 4-րդ	213	18,6	46	29,3	26	36,1	8	28,6
Ընդամենը	1143	100	157	100	72	100	28	100

<sup>7</sup> Տես B. H. Каргашенко, Т. Ю. Вишневецкая, Н. Г. Дьячкова. Динамика физического развития и состояние здоровья школьников. «Гигиена и санитария», 1987, № 6; B. H. Каргашенко, Н. Н. Суханова. К вопросу о физическом развитии и состоянии здоровья детей школьного возраста. «Советское здравоохранение», 1990, № 1:

տեմպեր ունեցողների թիվը 1-ին առողջական խմբի համեմատությամբ փոքր է ( $p < 0.05$ ), և հակառակը՝ մոտ 1,5 անգամ մեծ է մարմնի զանգվածի ավելցուկ ունեցողների և 1,3 անգամ՝ ցածրահասակների թիվը:

Այսպիսով՝ զինծառայողների հիմնական մասն ունի միջին ֆիզիկական զարգացում, իսկ մոտ 1/3-ը՝ ֆիզիկական զարգացման շեղումներ: Ծառայության ընթացքում քաշի ցուցանիշը հավաստի կերպով նվազում է և աճում է 18,5-ից ցածր ՄՁԻ-ի գործակից ունեցողների թիվը: Անմիջական կապ է հայտնաբերվել ֆիզիկական զարգացման տարբեր տեմպերի և առողջական վիճակի միջև:

## ВОЕННАЯ МЕДИЦИНА

### ГИГИЕНИЧЕСКАЯ ХАРАКТЕРИСТИКА ФИЗИЧЕСКОГО РАЗВИТИЯ ВОЕННОСЛУЖАЩИХ ОБЯЗАТЕЛЬНОЙ СРОЧНОЙ СЛУЖБЫ ВС РА

*Լ. Գ. ՕԳԱՆԻՏՅԱՆ, ԿԱՍԻՏԱՆ Կ/Ս, ԱՍՍԻՐԱՆՏ, ՏԱՐՄԱՆ ԲՐԵՍԵՆՏԱՆԻ  
ՑԻԿԼԱ ՎՈՅՆԱԿԱՆ ԹՈՔՍԻԿՈԼՈԳԻԱ, ՐԱԴԻՈԼՈԳԻԱ և ՄԵԴԻՍԻՆՍԿՈՅ ԶԱՇԽՏԻ  
ՎՈՅՆՈ-ՄԵԴԻՍԻՆՍԿՈՅ ԲԱԿԱԼՅԱՆՏԻ ԵՐԵՎԱՆՍԿՈՅ ԳՈՍՏԱՐՏՎԵՆՆՈՅ  
ՄԵԴԻՍԻՆՍԿՈՅ ՈՒՆԻՎԵՐՍԻՏԵՏԻ ԻՄ. Մ. ԳԵՐԱՑԻ*

#### РЕЗЮМЕ

Известно, что процессы развития организма в значительной степени зависят от условий жизни и состояния окружающей среды. В то же время отклонения от норм физического развития свидетельствуют о предрасположенности к заболеваемости или наличию хронических болезней. В целях определения степени физического развития и состояния здоровья военнослужащих срочной службы МО РА авторами были проведены соответствующие исследования 1400 военнослужащих семи войсковых частей МО РА, а также дана их гигиеническая оценка.

Основная часть военнослужащих имеет среднее физическое развитие, в то время как у приблизительно 1/3 наблюдаются отклонения от нормы. В процессе прохождения службы достоверно снижается показатель веса и возрастает число лиц, имеющих показатель Индекса массы тела ниже 18,5. Установлена также достоверная связь между различными темпами физического развития и разными группами состояния здоровья.

THE HYGIENIC CHARACTERISTICS  
OF PHYSICAL DEVELOPMENT OF THE RA ARMED FORCES  
COMPULSORY DRAFTEES

*L. H. HOVHANNISYAN, Captain of Medical Service,  
Graduate Student, Senior Lecturer of the Series of Military Toxicology,  
Radiology and Medical Protection of the Military-Medical Faculty  
of the Yerevan State Medical University after M. Heratsi*

SUMMARY

It is known that the processes of the organism development largely depend on the life conditions and the environment. At the same time, the deviations from the norms of physical development indicate the predisposition to disease or the presence of chronic diseases. For determining the degree of physical development and the health status of draftees of the RA Armed Forces the authors conducted relevant studies among 1400 servicemen of seven military units of the RA Armed Forces. Their hygienic evaluation is given as well.

The major part of servicemen has an average physical development, while approximately the 1/3 part has deviations from the norm. The weight ratio significantly drops and the number of persons having Body Build Index below 18,5 increases during the service. A certain connection between different rates of physical development and various groups of the health status is determined.

**ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ԱՐԳՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ  
ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՅՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ**

*Վ. Հ. ՄԱՐԳԱՐՅԱՆ, գնդապետ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ*



Յանկացած պետության ՁՈՒ-ի գերակա խնդիրների շարքն է դասվում անձնակազմի մասնագիտական և հոգեբանական պատրաստումը զինվորական գործունեությանը, ակտիվ մարտական գործողություններին: Մասնագիտական գրականության, ինչպես նաև մեր հետազոտությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ անձնակազմի մասնագիտական պատրաստման արդյունավետությունը գոհացուցիչ չէ, քանի որ պատրաստման մեթոդների և մասնագետի հոգեբանական հատկություններին ներկայացվող պահանջների միջև կա որոշակի անհամաչափություն: Այդ անհամաչափությունը առաջին հերթին պայմանավորված է բարդ ռազմական համակարգերի տեխնիկական պատրաստության բաղադրատարրերի շարքում այսպես կոչված «անձնային գործոնի» թերագնահատմամբ<sup>1</sup>:

Արտակարգ իրադրություններում զինծառայողի կողմից արդյունավետ մասնագիտական գործողությունների կատարման կարևոր նախադրյալներն են այդ իրադրությունը արագ ու ճիշտ գնահատելու կարողությունը և գործողությունների կատարմանը հոգեբանական պատրաստությունը, որոնք իրենց հերթին պայմանավորված են մի շարք կոնկրետ հոգեբանական գործոնների\* համախմբով: Այդ գործոնները պարզելու, դրանց միջև հարաբերակցական-ռեգրեսիոն կապը որոշելու նպատակով մենք մոդելավորել ենք տեղային պատերազմի մի դրվագ, այն է՝ լեռնային գոտում շարժվող ռազմական ավտոտեխնիկայի շարասյան վրա դարանակալած հակառակորդի գրոհը, հետագոտել ենք ՀՀ ՁՈՒ-ի մարդատեխնիկական չդետերմինացված համակարգում ներառված զինծառայողների գործառ-

<sup>1</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտական գործունեության հոգեբանական հիմքերը: Ե., 2009, էջ 85:

\* Հոգեբանական գործոններ ասելով՝ նկատի ունենք զինծառայողի անհատական հատկությունները, նրա ընդունակություններն ու հմտությունները, դիրքորոշումները, բնավորությունն ու խառնվածքը, բարդ հոգեշարժողական հակազդումը:

ման հուսալիությունը, նրանց բարդ հոգեշարժողական հակազդման փուլերը, մասնագիտական աշխատունակության նվազման պատճառները, ինչպես նաև զինծառայողի մարտական վիճակը\*։ Մեր կողմից մշակված մեթոդիկական ենթադրում է միջավայրի պարտադիր համապատասխանեցում հետևյալ պահանջներին՝

- ա) վտանգավոր իրադրությունը առաջանում է հանկարծակիորեն,
- բ) վտանգավոր իրադրությունը կարծրատիպային չէ,
- գ) վտանգավոր իրադրությունը խոչընդոտում է առաջ շարժվելուն:

Այսինքն՝ մարտական իրադրության մոդելավորման համար անհրաժեշտ ու բավարար պահանջներից է այնպիսի միջավայրի ստեղծումը, որի դեպքում առկա կլինեն մարտական իրադրությանը համապատասխանող բոլոր անհրաժեշտ գործոններն ու պայմանները, մասնավորապես՝

- հակառակորդի կողմից ձեռնարկված հարձակողական գործողությունները, նրա ակտիվ դիմակայությունը պատասխան գործողություններին (ինտերակտիվ գործողություններ),
- հանկարծակիորեն առաջացող ու արագ զարգացող արտակարգ իրավիճակը՝ բնորոշ հոգեծին գործոններով հանդերձ,
- մարտական տեխնիկայի և սպառազինության կիրառումը,
- հետազոտվողների հոգեկանի գործառության ծայրահեղ ինտենսիվությունը, ուժերի անսովոր լարվածությունը<sup>2</sup>:

Մոդելավորվող մարտական իրադրությունում զինծառայողի հոգեկանի գործառման ընթացքում դրսևորվող մի շարք օրինաչափությունների բացահայտումը հնարավորություն է տալիս կանխատեսելու ֆիզիկական, բարոյական և հոգեբանական փորձություններին արդյունավետ կերպով դիմակայելու նրա հոգեկան ներուժը, ռեալ կերպով օգտագործելու «մարդկային գործոնը»: Խոսքը վերաբերում է այն հոգեբանական գործոնների համախմբին, որոնց ինտեգրալային դրսևորմամբ պայմանավորված է զինծառայողի՝ իրադրությանը համարժեք հակազդումների կայունությունը և հուսալիությունը:

ՀՀ ՁՈՒ-ում կատարված գիտափորձերի արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ մոդելավորված միևնույն մարտական իրադրության պայմաններում զինծառայողների վարքագծային դրսևորումները միանգամայն տարբեր են: Վարքը պայմանավորված է հիմնականում հետևյալ երկու փոխազդող գործոններով՝

- ա) թույլ մասնագիտական պատրաստականություն,
- բ) նյարդային համակարգի բնածին թուլություն կամ չմարզվածություն:

Մեր գիտափորձերի մասնակիցների մի մասի շրջանում գրանցվել է բարձր մակարդակի ակտիվություն, որը դրսևորվել է գործողությունների արագության,

\* Մարտական վիճակ ասելով՝ նկատի ունենք հոգեկանի այն ժամանակավոր վիճակը, որը մարտական գործունեության ընթացքում ազդում է զինծառայողի հոգեկան պրոցեսների վրա և պայմանավորում տվյալ մարտական իրադրությունում նրա վարքի կոնկրետ ձևերը:

<sup>2</sup> Տես Վ. Հ. Մարգարյան, Մարտի հոգեբանություն: Ե., 2009, էջ 94:

ակտիվ վարքի, լուծումներ գտնելու, իրադրությունը ցանկալի ուղղությամբ փոխելու և բարդ իրավիճակը հաղթահարելու ցանկության ձևով, իսկ մյուս մասի շրջանում գրանցվել է գործողությունների ինտենսիվության և տեմպի անկում, որոշ դեպքերում նաև՝ արգելակում:

Մարտական իրադրության բարդ պայմաններում խոչընդոտների հաղթահարման համար պահանջվում են կամային ճիգեր՝ նյարդահոգեկան լարվածության մի առանձնահատուկ վիճակ, որը մոբիլիզացնում է զինծառայողի ֆիզիկական, մտածողական և բարոյական ուժերը: Կամքը դրսևորվում է որպես իր ուժերի նկատմամբ վստահություն, տվյալ իրադրությունում նպատակահարմար և անհրաժեշտ գործողություններ կատարելու վճռակամություն:

Հետազոտելով արտակարգ իրավիճակներում վարքի կախումը անձնավորության հատկություններից՝ Լ. Դ. Բիտեխտինան եկել է այն եզրակացության, որ ստրեսի նկատմամբ անհատի դիմադրողականությունը (տանելիությունը) խիստ տարբերակված է, ինչը հնարավորություն չի տալիս հստակ կերպով որոշելու լարվածությունների այն առավելագույն սահմանները, որոնք ընդհանուր լինեն բոլորի համար: Ուստի հասկանալի է դառնում, թե ինչու է կարևոր որոշել բարդ պայմաններում մարդու վարքի արդյունավետության կախումը կոնկրետ հոգեբանական գործոններից: Ներկայումս չկա մի բանաձև, որով հնարավոր լիներ որոշել արտակարգ պայմաններում մարդու վարքի ինտեգրալային ձևը: Սակայն կան տվյալներ, որ հոգեբանական գործոնները բարդ իրադրությունում ոչ թե թվաբանորեն գումարվում են, այլ կազմում են մի համալիր, որն ի վերջո արտահայտվում է կա՛մ ճիշտ, կա՛մ սխալ գործողությունների ձևով<sup>3</sup>:

Բարդ իրադրությունում վարքը որոշվում է ոչ միայն տվյալ պահին մարդու հոգեբանական բնութագրիչների հաստատունությամբ, այլև արտաքին միջավայրի այն գիտակցված և չգիտակցված գործոնների արտացոլմամբ, որոնք ներգործում են նրա հոգեկանի վրա: Բարդ իրադրությունը հոգեծին գրգռիչ է: Հետևաբար, այդ իրավիճակին հակազդման ուժը և տևողությունը պայմանավորված են զինծառայողի հոգեվիճակով, նրա հոգեբանական առանձնահատկություններով, պատրաստության մակարդակով: Այլ կերպ ասած՝ բարդ իրադրությունը կարող է իր բովանդակությամբ նույնը լինել, սակայն անձնավորության հոգեկանում դրա արտացոլման ձևերը կլինեն տարբեր: Այդ պատճառով էլ առաջանում են մի շարք մեթոդաբանական դժվարություններ՝ կապված բարդ իրադրությունների ոչ միայն քանակական, այլև որակական աստիճանակարգման, առավել ևս՝ դրանց հաղթահարմանն ուղղված վարքի կանխատեսման հետ: Նշենք, որ արտակարգ իրավիճակներում հավանական վարքագծի կանխատեսման առումով մենք ունենք նոր՝ փորձարարական ճանապարհով ստացված ու գիտականորեն հիմնավորված տվյալներ, որոնք հնարավորություն են տալիս լուծելու վերը ներկայացված պրոբլեմը:

<sup>3</sup> Տես *М. И. Дьяченко, А. А. Кондыбович, В. А. Пономаренко. Готовность к деятельности в напряженных ситуациях. Минск, 1985, с. 7:*



Ժամանակի ռեալ մասշտաբում զինծառայողների վրա մարտական ստրե-տորների ազդեցության պայմաններում մեր կողմից գրանցված փորձարարական տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ հետազոտվող զինծառայողների 12 %-ի շրջանում հապաղում է հոգեկան և ֆիզիկական ռեսուրսների մոբիլիզացումը, ինչը, անշուշտ, ռեալ մարտական իրադրությունում կարող է ճակատագրական լինել: Ավելին. գրանցվել են դեպքեր, երբ այդ ռեսուրսների մոբիլիզացումը պայմանավորող հոգեկան ֆունկցիաների անկայունությունը հանգեցնում է իրադրությանը ոչ համարժեք հակազդմանը, ակտիվ գործողություններից հրաժարմանը: Հետազոտվող զինծառայողների մի մասը հակազդում է իրադրությանը պատեհաժամորեն, սակայն գործողությունների ռացիոնալ տարրը հետին պլան է մղված, այսինքն՝ գերակշռում է հուզական հակազդումը, որը դրսևորվում է իմպուլսիվ գործողությունների ձևով, և հիմնականում ակտուալացված է ինքնապահպանման բնագոյր, ինչը թույլ մասնագիտական և հոգեբանական պատրաստման հետևանք է: Մինչդեռ մարտական իրադրության արտակարգ իրավիճակներում հուզական հակազդումը պետք է մղվի հետին պլան, ինչը կարող է տեղի ունենալ միայն այն դեպքում, երբ հոգեբանական պատրաստումը նպատակաուղղված է զինծառայողի բնական հակազդումը արհեստական, այսինքն՝ վարժեցնովի հակազդմամբ փոխարինելուն:

Զինծառայող մասնագետների մարտական պատրաստումը արդյունավետ կերպով կազմակերպելու համար անհրաժեշտ է հաշվի առնել նրանց գործունեության հոգեբանական առանձնահատկությունները: Ա. Ի. Բերգն իր «Կիբեռնետիկա և հուսալիություն»<sup>4</sup> աշխատության մեջ նշում է, որ տեխնիկական առաջընթացը մարդուն ազատում է ծանր ֆիզիկական աշխատանքից, սակայն շատ ավելի խիստ պահանջներ է ներկայացնում մտավոր աշխատանքին և նոր պայմաններում մարդու գործունեության հուսալիությանը: Ըստ Ե. Ա. Միլերյանի՝ հուսալիությունը անձնավորության այն հուզական, կամային, մտածողական և այլ հատկությունների ու շարժառիթների համախումբն է, որոնց փոխգործությամբ ապահովվում է գործողությունների ճշգրիտ, տվյալ իրավիճակին համարժեք, պատեհաժամ կատարման մեծ հավանականությունը<sup>5</sup>:

Արտակարգ պայմաններում մարդու վարքային հակազդումները, դրանց ժամանակային բնութագրիչները և ընդհանրապես մարդկանց հոգեֆիզիոլոգիական հնարավորությունները փոփոխական մեծություններ են, որոնք պայմանավորված են նյարդային համակարգի առանձնահատկություններով, կենսափորձով, մասնագիտական գիտելիքներով, հմտություններով, շարժառիթավորմամբ, գործունեության ոճով<sup>6</sup>:

Մարտական իրադրության մոդելավորման պայմաններում ռազմական ավ-

<sup>4</sup> Տես Ա. Ի. Берг. Кибернетика и надежность. М., 1964:

<sup>5</sup> Տես Ե. Ա. Милерян. Эмоционально-волевые компоненты надежности оператора: Очерки психологии труда оператора. М., 1974:

<sup>6</sup> Տես Շ. Ի. Мазуров. О психической устойчивости человека в экстремальных ситуациях. М., 1983, сс. 44—45:

տոտեխնիկայի վարորդների չկշռադատված իմպուլսիվ գործողությունները իրավիճակի ներգործության հետևանքն են և հանգեցնում են իրավիճակի ոչ ճիշտ ընկալմանն ու գնահատմանը, ինչպես նաև սխալ շարժողական գործողությունների կատարմանը:

Բարդ իրավիճակում կատարողական գործողությունները պայմանավորված են այդ գործողությունների շարժառիթավորմամբ և կամային ճիգերով: Կամային ճիգը այն պահեստային էներգիական գործոնն է, որը զինձառաջողի բարձր մակարդակի մասնագիտական վարպետության դեպքում նրան հնարավորություն է տալիս մեծ արդյունավետությամբ հաղթահարելու ստեղծված բարդ իրավիճակը: Ինչ վերաբերում է մոդելավորվող մարտական իրադրությունում կատարվող իմպուլսիվ գործողություններին, ապա դրանք առաջին հերթին այդ իրավիճակը ոչ ճիշտ գնահատելու և չկշռադատված որոշումներ ընդունելու հետևանք են: Նշենք, որ մարտական ստրեստրների ազդեցության նկատմամբ զինձառաջողի դիմադրողականության նշանակությունը ավելի է մեծանում այն դեպքում, երբ արտակարգ իրավիճակի հաղթահարման համար պահանջվում է ոչ թե մեկ, այլ մի քանի գործողություն: Մեր գիտավորձերում գործողությունների անհրաժեշտ հաջորդականության պահպանումը որոշ հետազոտվողների ուժերից վեր էր:

Հետազոտության ժամանակ գրանցված հուզական վիճակի, հոգեկան պրոցեսների ինտենսիվության, բարդ հոգեշարժողական հակազդման փուլերի, լարվածության աստիճանի, վիճակի կայունության և տևականության, վիճակի բևեռայնության վերաբերյալ տվյալների և թեստավորման արդյունքների վերլուծությամբ ստացված տվյալների հարաբերակցության աստիճանը հնարավորություն է տալիս ի հայտ բերելու արտակարգ իրավիճակներում ցայտունորեն արտահայտվող հոգեբանական գործոնների համախումբը: Այսինքն՝ պարզվել է, որ արտակարգ իրավիճակներում նրանց վարքը և մասնագիտական գործողությունների արդյունավետությունը առավելապես պայմանավորված են խառնվածքի գերակշռող տիպով (ԽՏ), առարկայական էրգայնությամբ (ԱԷ), վարքի վերահսկողությամբ (ՎՎ), նյարդահոգեկան կայունությամբ (ՆՀԿ), տազնապախոռվությամբ (ՏԽ), ռիսկի գնալու պատրաստակամությամբ (ՌՊ), որոնց ինտեգրալային դրսևորումը կարելի է հաշվարկել ըստ մասնագիտական գործողությունների կատարմանը պատրաստության վիճակի կայունությունը պայմանավորող հակվածության աստիճանի (ներուժի) ինտեգրալային արժեքի՝ ՄԳՀՊՎԿՀ<sub>h.h.u.</sub>: Այդ գործոնների հաշվարկման հարաբերակցական-ռեգրեսիոն բանաձևն ունի հետևյալ տեսքը՝

$$ՍԳՀՊՎԿՀ_{h.h.u.} = e^{-1.503} \times \frac{ԱԷ^{0.085} \times ՎՎ^{0.01} \times ՆՀԿ^{0.92} \times ԽՏ^{0.461}}{ՏԽ^{0.071} \times ՌՊ^{0.151}} \geq [X_1 \dots X_2]:$$

Տվյալ մաթեմատիկական մոդելում ներկայացված գործոնների ինտեգրալային դրսևորումը բնորոշում է արտակարգ իրավիճակներում մասնագիտական գործունեությանը զինձառաջողի հոգեբանական պատրաստության վիճակի կա-

յունությունը, որն էլ մասնագիտական գործունեության արդյունավետության գրավականն է:

Փորձարարական ճանապարհով ստացված արդյունքները մեզ հնարավորություն են տալիս կոնկրետացնելու հատկապես այն գործոնների համախումբը, որոնցով պայմանավորված է արտակարգ իրավիճակներում մարդու գործունեության հուսալիությունն ու արդյունավետությունը: Վերը ներկայացված բաղադրիչների միասնական ամբողջականության ցայտուն արտահայտվածությունը մասնագետի ոչ միայն բարձր մակարդակի պատրաստության ցուցանիշն է, այլև բարդ իրադրություններում կայուն վարքագծային դրսևորումների երաշխիքը:

Այսպիսով՝ գործունեության արդյունավետության վրա բարդ իրավիճակի ազդեցությունը պայմանավորված է ոչ միայն առաջադրված խնդիրների բնույթով, իրադրությամբ, այլև զինծառայողի հոգեբանական առանձնահատկություններով, նրա վարքի շարժառիթներով, փորձով, գիտելիքների մակարդակով, հմտություններով, նյարդային համակարգի հիմնական հատկություններով, ֆիզիոլոգիական ու հոգեկան կայունությամբ, ինչպես նաև հոգեբանական պատրաստությամբ\*։ Ավելին. մարտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է վերը ներկայացված գործոնների ինտեգրալային դրսևորմամբ: Դրանցից որևէ մեկի պակասը (չլինելը կամ չափից ցածր կամ բարձր մակարդակի արտահայտվածությունը) հանգեցնում է գործունեության արդյունավետության մակարդակի նվազմանը: Այս համատեքստում մեր հետազոտական տվյալների վերլուծությունը հաստատում է, որ արտակարգ իրավիճակներում զինծառայողի մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է այն հոգեբանական գործոնների համախմբով, որոնց ինտեգրալային դրսևորմամբ ապահովվում են իրադրությանը համարժեք հոգեկան ու ֆիզիկական ռեսուրսների մոբիլիզացման պատեհաժամությունը, զինծառայողի ակտուալացված հոգեկան ֆունկցիաների կայունությունը, ակտիվ վարքագծային դրսևորումների ռացիոնալությունը:

\* Ֆիզիոլոգիական կայունությունը պայմանավորված է օրգանիզմի ֆիզիկական և ֆիզիոլոգիական հատկություններով (կազմվածքային առանձնահատկություններ, նյարդային համակարգի տիպ, վեգետատիվ պլաստիկություն), հոգեկան կայունությունը պայմանավորված է զինծառայողի պատրաստմամբ և նրա հատկությունների համախմբով (արտակարգ իրավիճակներում համարժեք գործողությունների կատարման համար անհրաժեշտ առանձնահատուկ հմտություններ, դրական շարժառիթավորում և այլն), հոգեբանական պատրաստությունը ենթադրում է ակտիվ-գործունեական վիճակ, ներուժային հնարավորությունների մոբիլիզացում:

**ВОЕННАЯ ПСИХОЛОГИЯ**

**К ВОПРОСУ СООТНОШЕНИЯ ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ,  
ОПРЕДЕЛЯЮЩИХ ЭФФЕКТИВНОСТЬ БОЕВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ**

*В. Г. МАРГАРЯН, полковник, кандидат психологических наук, доцент,  
заместитель главного редактора военно-научного  
журнала «Айкакан банак» ИНСИ МО РА*

**РЕЗЮМЕ**

Для определения комплекса психологических факторов, обуславливающих эффективность деятельности военнослужащих в экстремальных условиях боевой обстановки, разработана методика моделирования конкретной боевой ситуации, в частности, нападения из засады противника на движущуюся по горной местности колонну военной автотехники.

Рассчитаны и в ходе эксперимента уточнены необходимые и достаточные требования к моделируемой среде.

Экспериментально выявлены эти психологические факторы: преобладающий тип темперамента, предметная эргичность, готовность к риску, тревожность, нервно-психологическая устойчивость, контроль поведения. Впервые получено корреляционно-регрессионное выражение, позволяющее определять степень предрасположенности военнослужащего к сохранению психологической устойчивости при воздействии психогенных факторов боевой обстановки.

**MILITARY PSYCHOLOGY**

**TO THE ISSUE OF THE CORRELATION OF PSYCHOLOGICAL  
FACTORS DETERMINING THE EFFICIENCY OF COMBAT ACTIVITIES**

*V. H. MARGARYAN, Colonel, PhD in Psychology, Associate Professor, Deputy  
Editor-in-Chief of «Haikakan Banak» Defense-Academic Journal, INSS, MOD, RA*

**SUMMARY**

For determining a complex of psychological factors providing the efficiency of servicemen's activities in extreme conditions of tactical situation a technique is elaborated. It simulates a specific combat situation, particularly, the enemy's ambush at a column of military auto equipment marching on a mountain terrain.

Necessary and sufficient requirements to the simulating environment are estimated and specified in the course of the experiment.

The following psychological factors are revealed experimentally: predominating type of temperament, subject ergic, risk alert, anxiety, neuropsychological stability, behavior control. The correlation and regression expression has been obtained for the first time. This makes it possible to determine the degree of servicemen's predisposition to keeping psychological stability under the effect of psychogenic factors of combat situation.

**ՊԱՏԵՐԱԶՄԻ ԿՈՐԾԱՆԱՐԱՐ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ  
ԲՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ: ՀԱԿԱՌԱԿՈՐԳԻ ԲՆԱՀԱՄԱԿԱՐԳԸ՝  
ՈՐՊԵՍ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԹԻՐԱԽ**

*Ա. Մ. ՇԱՀՎԵՐԳՅԱՆ, ավագ լեյտենանտ,  
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ռեֆերենտ-սապիրանտուրայի քարտուղար*



Բնության վրա մարդու ներգործությունն սկսվել է դեռ մարդու ձևավորման շրջանում: Նրա զարգացման վաղ փուլում այդ ներգործությունը եղել է համեմատաբար աննկատ. հիմնականում ոչնչացվել են խոշոր կենդանիներն ու մարդկանց բնակավայրերի շրջապատում գտնվող բուսականությունը: Աշխատանքային գործիքների ստեղծմամբ մարդը ոչ միայն տարանջատվեց բոլոր կենդանիներից, այլև այդ գործիքներից մի քանիսը (օրինակ՝ կացինը, նիզակը) օգտագործեց որպես զենք: Միջցեղային բախումները, առաջին «պատերազմները» բնապահպանական առումով բավականին «մաքուր» էին: Սակայն հետզհետե արտադրության միջոցները կատարելագործվեցին, և մարդիկ սկսեցին պատերազմել ոչ այնքան սննդի, որքան բնական ռեսուրսներով հարուստ, ռազմավարական ու տնտեսական առումով աշխարհագրական լավ դիրք ունեցող տարածքների համար<sup>1</sup>:

Նոր տարածքների զբաղեցումը, բնական միջոցների օգտագործումը հանգեցրին շրջակա միջավայրի տեսքի ու կազմության (հող, ջուր, օդ) փոփոխության: Փայտանյութը օգտագործվում էր զենքի արտադրության մեջ: Հաճախ իրականացվում էին զանգվածային անտառահատումներ՝ թաքստոց ծառայող միջոցից թշնամուն զրկելու նպատակով: Շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն էր ունենում նաև պատերազմներից հետո ռազմադաշտում մնացած հազարավոր դիակների նեխումը, ինչի հետևանքով արտազատվում էին թունավոր նյութեր, որոնք անձրևների ու գրունտային ջրերի միջոցով լցվում էին բնական ջրամբարները՝ թունավորելով դրանք և վնասելով կենդանական ու բուսական աշխարհին:

Հետզհետե փոխվեցին զենքի տեսակները, զենքերի ու սպառազինության զանգվածային արտադրությունն ու կիրառումն ավելի ու ավելի մեծ վնաս էին հասցնում բնությանը: Անտիկ աշխարհում բնության վրա մեծապես ազդում էին նաև մարդկանց, զինամթերքի ու զենքի զանգվածային տեղափոխումները: Ըստ

<sup>1</sup> Տես *С. Дорфман*. Война и природа — вечное противоборство интересов человека. «Война и экология» (<http://www.uic.unn.ru/~teog/ecologia.htm>):

Հերոդոտի՝ պարսից Քսերքսես արքայի գորքի հետ շարժվում էին նաև խոշոր եղջերավոր անասունների մեծ հոտեր, որոնք տորոում էին հողը, ոչնչացնում կանաչը: Պատերազմի ժամանակ զանգվածային տեղափոխումների վնասը հատկապես ցայտուն կերպով դրսևորվեց 20-րդ դարում, երբ տասնյակ հազարավոր մեքենաների ու զրահատեխնիկայի անիվները փոշիացնում էին հողը, դրանց արտանետումները կեղտոտում ու փոփոխում էին տեղանքը:

Մարդկային հասարակության և պատերազմի վարման միջոցների զարգացմանը զուգահեռ առաջ եկան բնապահպանական նոր խնդիրներ<sup>2</sup>: Շրջապատող միջավայրի վրա պատերազմի գործողության ավերիչ ազդեցությունը բազմաձև է: Ընդ որում, պատերազմներից հետո երկար ժամանակ է պահանջվում, որպեսզի վերականգնվեն բնությանը հասցված վնասները:

Հակառակորդի բնակչության գոյության պայմանները վնասելու նպատակով նրա բնահամակարգերը վերացնելու միտումը նկատվել է վաղուց: Նման մեծ փորձ ունեին հռոմեացիները: Օրինակ՝ Կարթագենի գրավումից հետո նրանք քաղաքի ամբողջ շրջակայքում աղ ցանեցին՝ հողերը գյուղատնտեսության համար ոչ պիտանի դարձնելով և խաթարելով դրանց բնական վերականգնումը: Դրան նպաստում էր նաև տեղանքի տաք կլիման՝ քիչ քանակությամբ տեղումներով: Սա հանգեցրեց հողերի անապատացմանը, ինչը նկատելի է անգամ ներկայիս Թունիսում<sup>3</sup>: Նման ձեռնարկումներ եղել են հետագայում ևս: Այսպես. 1944 թ. նացիստական զորքերը մեծ մասշտաբներով իրականացրեցին անտառահատումներ Լեհաստանում, իսկ Հոլանդիայում ավերեցին ջրամբարները, ինչով մեծ վնաս հասցրեցին շրջակա միջավայրին<sup>4</sup>:

Հատկապես երկրորդ աշխարհամարտը ցույց տվեց, որ պատերազմական գործողությունների ընթացքում ոչնչանում են ոչ միայն մարդիկ ու նրանց ստեղծած արժեքները, այլև անդառնալի վնաս է հասցվում շրջակա միջավայրին, ինչը լուրջ խնդիր է դառնում հաջորդ սերունդների համար: 20-րդ դարի 50-ական թվականներին անգլիական զաղութարարները օգտագործում էին ռմբակոծիչ ավիացիա՝ Քենիայի ապստամբներին ճնշելու, նրանց ջրի ու սննդի պաշարներից զրկելու, գյուղատնտեսական աշխատանքներին խոչընդոտելու նպատակով: Իսկ, օրինակ, Անգոլայում միտումնավոր կերպով ոչնչացվում էր մեծ քանակությամբ բուսականություն, հատկապես՝ ծառերը, որոնք տեղի բնակչությունը օգտագործում էր որպես վառելանյութ և շինանյութ<sup>5</sup>:

<sup>2</sup> Տես «Проблемы экологии. Экологическая проблема войны». «Российская Академия Экологии» ([http://www.raeco.ru/index.php?option=com\\_content&view=article&id=54:2009-09-10-11-29-34&catid=35:2009-09-10-08-29-55&Itemid=48](http://www.raeco.ru/index.php?option=com_content&view=article&id=54:2009-09-10-11-29-34&catid=35:2009-09-10-08-29-55&Itemid=48)):

<sup>3</sup> Տես «Карфаген. Конец истории» ([http://www.world-history.ru/countries\\_about/62/1894.html](http://www.world-history.ru/countries_about/62/1894.html)), «The Punic Wars» (<http://www.ancient-rome.biz/carthage.html>), «The Distruction of Carthage» (<http://www.carthage-lives.com/carthdestr.htm>):

<sup>4</sup> Տես «Факторы экологической катастрофы» ([know.su/link\\_8941\\_2.html](http://know.su/link_8941_2.html)):

<sup>5</sup> Նշված օրինակների մասին ավելի համաձայնորեն տես «Экология и проблемы разоружения» (<http://www.nreferat.ru/referat/ekologiya-i-problemy-razoruzheniya/1>):

Վիետնամում վարած պատերազմի ընթացքում ԱՄՆ-ի բանակը անտառների ոչնչացման համար ինքնաթիռների միջոցով Հարավային Վիետնամի տարածքում ցրել է շուրջ 72 մլն լ դեֆոլիանտ: Այդ թունաքիմիկատը պարունակում է դիոքսին, որը աղետալի ազդեցություն գործեց խաղաղ բնակչության վրա. թունաքիմիկատների արտանետումներից տուժեց շուրջ 5 մլն մարդ, գրեթե ամբողջապես ոչնչացավ շուրջ 500 հազ. հա մանգրային անտառատարածք, վնասվեց ջունգլիների 60 (մոտավորապես 1 մլն հա) և հարթավայրային անտառների 30 (ավելի քան 100 հազ. հա) տոկոսը: Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվությունը նվազեց 75 %-ով: Ծանր տեխնիկան, բուլդոզերները քերում էին հողի արտաքին շերտը՝ հողը դարձնելով հողագործության համար ոչ պիտանի: Պայթեցվում էին նաև ջրամբարները և այլ հիդրոկառույցներ<sup>6</sup>: Որպես հետևանք՝ գգալիորեն փոփոխվեց Վիետնամի բնական հավասարակշռությունը: Նշված ազդեցությանը ենթարկված տարածքներում շուրջ 160 տեսակի թռչուններից մնացին մոտավորապես 20-ը, գրեթե ամբողջովին անհետացան երկկենցաղներն ու միջատները, փոխվեց գետերի ջրի բաղադրությունը, նվազեց ձկների քանակը, խախտվեց հողաշերտի միկրոկենսաբանական բաղադրությունը, թունավորվեցին բույսերը: Խստիվ կրճատվեց խոնավ հասարակածային անտառներում աճող ծառերի ու թփերի քանակը, պահպանվեցին եզակի ծառատեսակներ և մի քանի տեսակի փշեր, որոնք որպես կեր պիտանի չէին ընտանի կենդանիների համար: Վիետնամի կենդանական աշխարհում տեղի ունեցած փոփոխությունների հետևանքով սև առնետին «ճնշեցին» այլ տեսակի առնետներ, որոնք ժանտախտի տարածողներ են, տիզերի շարքում հայտնվեցին վտանգավոր հիվանդություններ տարածող տեսակներ, մոծակների անվնաս էնդեմիկ տեսակների փոխարեն բազմացան մալարիա տարածող մոծակները<sup>7</sup>:

Ամերիկացի զինվորականները օգտագործում էին նաև գազեր, մթնոլորտում տարածում էին քիմիկատներ և առաջացնում արհեստական ամպագոյացումներ, ծծմբային անձրևներ, անտառների հրդեհումներ<sup>8</sup>:

Վիետնամի պատերազմում ամերիկյան զորքերի գործողություններից հետո շրջանառության մեջ դրվեց բնաոչնչացում (էկոցիդ) հասկացությունը<sup>9</sup> և դրվեց այն հանցագործություն համարելու հարցը<sup>9</sup>:

<sup>6</sup> Stu A. Берков. Международные следственные комиссии в зеркале современности. «Обозреватель – Observer», 1999, № 9 (116):

<sup>7</sup> Stu A. Кунцевич, Ю. Назаркин. Химическая война США в Индокитае (<http://www.himvoiska.narod.ru/vietnam.html>):

<sup>8</sup> Stu Г. Хозин. Необъявленная война природе. «Вокруг света», 1977, № 10 (2625); В. Коваль. Катастрофа по заказу. «Русский предприниматель», февраль 2004 г., № 1 – 2 (19):

\* Էկոցիդ (հուն.՝ οίκος – տուն, caedo – սպանում եմ) նշանակում է բուսական և կենդանական աշխարհի զանգվածային ոչնչացում, մթնոլորտի կամ ջրային ռեսուրսների թունավորում, ինչպես նաև այլ գործողություններ, որոնք բնապահպանական աղետի պատճառ են դառնում: Ռ-ազմական էկոցիդը ռազմական գործողությունների ժամանակ բնահամակարգերի՝ որպես մարդու բնակության միջավայրի ոչնչացումն է:

<sup>9</sup> Stu «This is Ecocide» ([www.thisisecocide.com/thesolution](http://www.thisisecocide.com/thesolution)):

Պարսից ծոցում տեղի ունեցած առաջին զինված բախման ժամանակ Քուվեյթից նահանջող իրաքյան զորքերը հրդեհեցին նավթի հանքահորերի մեծ մասը: 1991 թ. մարտին Քուվեյթում այրվում էին 650 գործող նավթահորեր: Մասնագետների գնահատմամբ՝ դրա հետևանքով 4-8 մլն բարել նավթ թափվել է ծովը, ավելի մեծ քանակությամբ՝ ներծծվել հողի շերտ, ինչը հանգեցրել է գրունտային ջրերի թունավորմանը: Այրվող նավթահորերի ծուխը մոտավորապես 10 ամիս ծածկել է արևը, ինչի հետևանքով այդ տարածքում օդի միջին ջերմաստիճանն իջել է 10°C-ով: Քուվեյթում բնակչության մահացության ցուցանիշը ազատագրման առաջին տարում աճել է գրեթե 10 տոկոսով<sup>10</sup>:

Նման իրավիճակում որոշ ուժեր կամ անհատներ հաճախ ունենում են նույնիսկ հասույթ: Այսպես. ՄԱԿ-ի տվյալներով՝ Կամբոջայում քաղաքացիական պատերազմի ընթացքում (1967–1975 թթ.) ոչնչացվել է երկրի անտառների 35 %-ը<sup>11</sup>: Հատված ծառերը վաճառվում էին ու ստացված հասույթով զենք ու զինամթերք էր գնվում: Նույն պատկերն էր նաև Լիբերիայում, որտեղ բարբարոսաբար հատվում էին հասարակածային անտառները, և փայտանյութի իրացման միջոցով ստացված հասույթն ուղղվում էր զենքի ձեռքբերմանը<sup>12</sup>: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդին ներկայացված իրավիճակային գնահատումների զեկույցներից մեկում հստակ կերպով նշվում են Լիբերիայի անտառածածկույթի վիճակն ու դրա վերահսկմանն ուղղված միջոցառումները<sup>13</sup>:

20-րդ դարի վերջերին հակառակորդի բնաշխարհին վնաս հասցնելու «գործիքարանը» համարվեց վաղնջական ժամանակներից եկող ու երկար ժամանակ մոռացված միջոցներով (օրինակ՝ չոր խոտով ծածկված դաշտավայրերի, անտառների հրկիզում, կամ ջրերի թունավորում):

Սակայն անցյալի բոլոր օրինակները չեն կարող համեմատվել ներկա վիճակի հետ, երբ հակառակորդի բնահամակարգի վնասումը դառնում է ռազմական գործողությունների գլխավոր նպատակներից մեկը, իսկ ժամանակակից սպառազինությունն էլ նորանոր խնդիրներ է առաջ բերում բնապահպանական ոլորտում: Ժամանակակից պատերազմում հակառակորդի բնաշխարհի վնասումն ունի մեկ հստակ նպատակ՝ ավերիչ ազդեցություն գործել կենսոլորտի կարևորագույն տարրերի՝ բուսական ու կենդանական աշխարհի, մթնոլորտի, գետերի ու լճերի վրա, որպեսզի դժվարանան հակառակորդի զինված ուժերի

<sup>10</sup> Stu «Iraq War Wrecks the Ecological Environment: Analysis» ([http://english.people.com.cn/200304/09/eng20030409\\_114838.shtml](http://english.people.com.cn/200304/09/eng20030409_114838.shtml)):

<sup>11</sup> Stu T. Owen, B. Kiernan. Bombs over Cambodia ([http://www.yale.edu/cgp/Walrus\\_CambodiaBombing\\_OCT06.pdf](http://www.yale.edu/cgp/Walrus_CambodiaBombing_OCT06.pdf)):

<sup>12</sup> Stu «Arms dealer and timber trader Guus Kouwenhoven found guilty of breaking a UN arms embargo» ([http://www.globalwitness.org/media\\_library\\_detail.php/444/en/arms\\_dealer\\_and\\_timber\\_trader\\_guus\\_kouwenhoven\\_fou](http://www.globalwitness.org/media_library_detail.php/444/en/arms_dealer_and_timber_trader_guus_kouwenhoven_fou)):

<sup>13</sup> Stu «Briefing Document: Recommendations and situational update presented to the UN Security Council» ([http://www.globalwitness.org/media\\_library\\_detail.php/305/en/briefing\\_document\\_recommendations\\_and\\_situational\\_](http://www.globalwitness.org/media_library_detail.php/305/en/briefing_document_recommendations_and_situational_)):



գործողությունները, խաթարվի նրա տնտեսության նորմալ գործունեությունը, իսկ բնակչությունն էլ զրկվի կյանքի ու գործունեության համար կենսականորեն անհրաժեշտ բնական պայմաններից: Բնաշխարհի ոչնչացումն այսօր դիտվում է որպես հակառակորդի թուլացման կարևոր և արդյունավետ միջոց:

Ակնհայտ է, որ բնությանը ամենամեծ վնասը հասցվել է 20-րդ դարի պատերազմների ժամանակ, հիմնականում՝ նոր տիպի պայթուցիկ սարքերի (արկեր, ռումբեր, ականներ) և նոր շարժիչների պատճառով: Փոխվեցին նաև հրանոթները, որոնք արկերն արձակում էին ավելի մեծ անկյան տակ: Հրետանու գլխավոր առավելություններից մեկը դարձավ կրականետման հեռավորության մեծացումը՝ տեսադաշտից դուրս գտնվող թիրախի խոցմամբ, այսինքն՝ մեծացավ խոցման գոտին: Արկերը, ձեռքի նռնակներն ու զանազան պայթուցիկ սարքեր, իրենց հերթին, շրջակա միջավայր էին արտանետում մեծ քանակությամբ բեկորներ և մեծապես վնասում այն: Հրետանային զինատեսակներին միացավ նաև ավիացիան. ռումբերն ավելի խորն էին մխրճվում հողաշերտի մեջ, քան նույն կշռով արկերը: Շրջակա միջավայրի վրա աղետալի ազդեցություն ունեցավ նաև 20-րդ դարի նոր զենքերից մեկը՝ ականը, որի պայթյունի հետևանքով վնասվում են ոչ միայն մարդիկ, այլև կենդանիները: Այսօր ամբողջ աշխարհում տեղադրված է ավելի քան 100 մլն-ական<sup>14</sup>:

Ինչպես նշվեց, շրջակա միջավայրի վրա մեծ ազդեցություն ունեցավ շարժիչների կիրառումը: Եթե առաջին շարժիչները՝ քարածուխով աշխատող շոգեքարշային մեքենաները, էապես չէին վնասում բնությունը (եթե, իհարկե, չհաշվենք դրանց կողմից հսկայական քանակությամբ արտանետված ծուխը, ածխի փոշին), ապա 20-րդ դարում դրանց փոխարինեցին տուրբինները և ներքին այրման շարժիչները, որոնք աշխատում էին նավթամթերքով, և որոնց արտանետումներն ու վնասը անհամեմատ մեծ են: Պատերազմի ժամանակ ծովը մեծ վնաս էր կրում ռազմական նավերի խորտակումներից: Փայտե նավերի խորտակումից ջրի մակերեսին մնում էր գրեթե 1 տ փշուր և ծովի հատակին փտող փայտանյութ, որը սնունդ է փափկամարմինների համար, իսկ հզոր շարժիչներով երկաթյա նավերի խորտակումը ծովի մակերեսին թողնում է նավթի մեծ շերտ, սինթետիկ նյութերով և կապար պարունակող գունաներկերով թունավորում է կենդանիներին: Ինչպես պատերազմի, այնպես էլ խաղաղ ժամանակ լցանավերը նավթ են տեղափոխում ծովով, ու դրանց խորտակումը ծանր հետևանքներ է ունենում բնության համար: Այդուհանդերձ, լցանավերը շարունակում են մնալ ծովային պատերազմի գլխավոր թիրախներից մեկը: Ծովի և ընդհանրապես ամբողջ բնահամակարգի վրա մեծ է նաև հրթիռների օգտագործման վնասակար ազդեցությունը:

Չանգվածային ոչնչացման զենքի կիրառման պատճառով հասցված վնասը բնությունը ի գործու չէ վերականգնելու երկար ժամանակ, կամ՝ առհասարակ:

<sup>14</sup> Stu «Landmine Monitor Report 2001. Toward a Mine-Free World». International Campaign to Ban Landmines. Landmine Monitor Core Group. «Human Rights Watch», 2001, PP. 1—55:

Պատերազմական գործողությունների ժամանակ քիմիական, կենսաբանական զենքերի կիրառումը վաղուց դարձել է աշխարհի առաջատար կենտրոնների հետազոտության առարկա: Մի շարք երկրներում մեծացել է հետաքրքրությունը կենսաբանական զենքի նկատմամբ, առանձին երկրներ մշակել են ռազմական-սաբանական ծրագրեր<sup>15</sup>:

Չանգվածային ոչնչացման բոլոր տեսակի զենքերից հատկապես վտանգավոր է միջուկային զենքը: Մարդկությունը պետք է կարողանա լիովին տիրապետել ատոմային էներգիային՝ այն ծառայեցնելով բացառապես խաղաղ և կայուն զարգացման ու բարգավաճման նպատակներին<sup>16</sup>: Հակառակ դեպքում՝ այն կդառնա ինքնառնչացման զենք, իսկ միջուկային հնարավոր պատերազմը լիովին կխաթարի բնական միջավայրը, դրա հետևանքները կարող են մեկընդմիջտ վնասել մոլորակին ու վտանգել մարդկային քաղաքակրթության գոյությունը<sup>17</sup>:

Միջուկային պայթյունի խոցիչ գործոններն են հարվածային ալիքը, լուսային ու ջերմային ճառագայթումը, առաջնային ակնթարթային ռադիացիան և հետագա ռադիացիան՝ տեղային ռադիոակտիվ նստվածքների տեսքով: Ժամանակակից հաշվարկումները հիմնականում կատարվում են փորձնական միջուկային պայթյունների հետազոտման հիման վրա: Ըստ ամերիկացի գիտնական Հ. Յորքի՝ մոլորակի մակերևույթին կատարված մոտավորապես 1 մեգատոննա հզորությամբ միջուկային պայթյունը կստեղծի 12–50 կմ շառավղով փոս և կայրի 30–120 հազ. հա անտառային տարածք<sup>18</sup>: Պայթյունից առաջացած հարվածային ալիքը, ջերմային ճառագայթումն ու ռադիացիան կվերացնեն բոլոր ողնաշարավորներին 36 հազ. հա տարածքում: Իսկ ահա պատերազմի ժամանակ 10 հազ. մեգատոննա ընդհանուր հզորությամբ միջուկային մարտագլխիկների պայթյունից ԱՄՆ-ի մակերեսին հավասար տարածքում կանհետանա գրեթե ամբողջ կենդանական աշխարհը, քանի որ ռադիացիայի միջին մակարդակը կգերազանցի 10

<sup>15</sup> Stu, օրինակ, А. Куцаев. Обзор современной военно-биологической программы США и интересы России. Современное состояние военно-биологической программы США. «Ядерный контроль», 2006, № 2:

<sup>16</sup> Stu P. Тимербаев. Режим ядерного нераспространения на современном этапе и его перспективы. «Национальная и глобальная безопасность». М., 2004, № 1; «Department of Nuclear Energy Fostering the Efficient and Safe Use of Nuclear Power. International Atomic Energy Agency» (<http://www.iaea.org/OurWork/ST/NE/index.htm>); «Ядерное нераспространение», т. 1. Под общей редакцией В. А. Орлова. М., 2002, сс. 38—61; P. M. Тимербаев. Россия и ядерное нераспространение. М., 1999, сс. 25—28, 80—81:

<sup>17</sup> Stu «...Учитывая опустошительные последствия, которые имела бы для всего человечества ядерная война, и вытекающую из этого необходимость приложить все усилия для предотвращения опасности возникновения такой войны и принять меры для обеспечения безопасности народов» («Договор о нераспространении ядерного оружия» (<http://www.un.org/russian/documen/convents/npt.htm>)); նաև՝ П. Шпихршук, 62. աշխ., էջ 354–365:

<sup>18</sup> Stu «Herbert York» (<http://www.atomicarchive.com/Bios/York.shtml>):

հազ. ռադը: Պարզ չէ միայն ձկնային աշխարհի ճակատագիրը, քանի որ ջուրը ապահովում է ռադիացիայից որոշակի պաշտպանություն, սակայն, մյուս կողմից, ռադիոակտիվ նյութերը կլցվեն հենց ջրամբարները, ինչը կհանգեցնի ավելի ծանր բնապահպանական հետևանքների:

Հարկ է նշել, որ միջատների, կրծողների, բակտերիաների ու սնկերի համեմատաբար մեծ դիմադրողականությունը հղի է մարդու ու բնության համար բազմաթիվ անցանկալի հետևանքներով: Հնարավոր է, որ այդ օրգանիզմները խուսափեն վերացումից և հետագայում նաև բազմամյան ու տարածվեն հսկայական քանակությամբ: Միջատների համար մահացու չափաբաժինը տատանվում է 2–10 հազ. ռադի սահմաններում: Այդպիսի պատերազմից հետո կգոյատևեն հատկապես բավականին դիմացկուն խոտակեր միջատները՝ ֆիտոֆագները, ընդ որում, դրանց բուռն բազմացմանը կնպաստի նաև թռչունների վերացումը: Ինչ վերաբերում է բույսերին, ապա առավել շատ կտուժեն խոշոր բույսերը. առաջին հերթին կոչնչանան ծառերը, այնուհետև՝ խոտերը, որոնց համար կործանարար է 5 հազ. ռադը:

Բուսական ծածկույթի ոչնչացման հետևանքով դեգրադացիայի կենթարկվի հողի շերտը, անձրևները կարագացնեն հողից հանքային նյութերի լվացումը: Հողը, կորցնելով իր սնուցող հատկությունները, չի կարողանա պահպանել նախկին քանակով բուսականություն: Որպես արդյունք՝ բույսերի առավել դիմացկուն տեսակները (խոտ, մամուռ, քարաքոս) աստիճանաբար կփոխարինեն ավելի դյուրագգաց ու խոցելի տեսակներին, հատկապես՝ ծառերին: Բուսականությունը կվերականգնվի հիմնականում խոտաբույսերի հաշվին, ինչը կարող է բերել կենսազանգվածի նվազմանը և համապատասխանաբար՝ նաև բնահամակարգի արգասավորության նվազմանը մոտ 80 տոկոսով: Բնական հավասարակշռության վերականգնումը կդանդաղի կամ կխաթարվի: Երկիր մոլորակի պատմության ընթացքում եղել են մեծ բնական աղետներ (օրինակ՝ Սառցադաշտային ժամանակաշրջանը), որոնք հանգեցրել են խոշոր բնահամակարգերի ոչնչացմանը: Այդ շրջանին բնորոշ մեծամարմին կենդանիների վերացումը դրա վառ ապացույցն է: Եթե միջուկային պատերազմը նման նոր աղետի պատճառ դառնա, ապա շատ դժվար է կանխատեսել, թե պատերազմից հետո ինչպես կընթանա համեմատաբար անվնաս մնացած կենդանի մատերիայի էվոլյուցիան: Հնարավոր է նաև, որ միջուկային պատերազմը դառնա վերջին աղետը<sup>19</sup>:

Օրինակ՝ միջուկային պայթյուններից հետո անապատների վիճակի մասին պատկերացում տալիս են ԱՄՆ-ի Նևադա նահանգի Մոհեև անապատում կատարված միջուկային փորձարկումների արդյունքները: 8 տարվա ընթացքում այդ տեղանքում իրականացվել է 89 ոչ մեծ մթնոլորտային պայթյուն: Դրանցից առաջիններն արդեն ոչնչացրել էին ամբողջ կենսամիջավայրը 204 հա տարածքում: Մասնակի ոչնչացման տարածքը կազմում էր 5255 հա: Միայն փորձարկումների

<sup>19</sup> Stu «The Effects of Nuclear War» (<http://www.fas.org/nuke/intro/nuke/7906/>):

դադարեցումից 3-4 տարի հետո այդ շրջանում ի հայտ եկան բուսականության վերականգնման նշաններ, իսկ բնության լիակատար վերականգնման համար կպահանջվեն տասնյակ տարիներ:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ միջազգային հանրությունը փորձում է միջոցներ ձեռնարկել բնության վրա մարդու գործունեության, հատկապես՝ պատերազմների բացասական ազդեցությունը նվազեցնելու նպատակով: Այսպես, 1968 թ. Փարիզում կայացած 1-ին միջպետական խորհրդաժողովում գերակայող դարձավ այն տեսակետը, որ արագ զարգացող արդյունաբերությունն զգալի չափով փոխում, գլխավորապես՝ աղտոտում է կենսոլորտը և, առաջին հերթին, մարդու ապրելու միջավայրը<sup>20</sup>: Բնության պահպանությունն սկսեց դիտվել որպես մարդու անվտանգ գոյության և կենսագործունեության ապահովման կարևոր բաղադրիչ:

2010 թվականը ՄԱԿ-ի կողմից հայտարարված էր որպես Կենսաբազմազանության տարի<sup>21</sup>: 1991–1992 թթ. նշակվել է, ընդունվել և փաստացի գործել, իսկ 1993 թվականի հունիսի 4-ից իրավական առումով ուժի մեջ է դրվել «Կենսաբազմազանության մասին կոնվենցիան»<sup>22</sup>: Այս համատեքստում առավել կարևորվում են բնապահպանական խնդիրները և, մասնավորապես, բնապահպանական անվտանգության խնդիրը: Կոնվենցիային կից բազմաթիվ փաստաթղթերում կարևորվում է պատերազմի կանխարգելումը, խաղաղ և պատերազմական պայմաններում նավթի, թունավոր նյութերի արտահոսքի բացասական ազդեցությունը տեղային և տարածաշրջանային բնահամակարգերի, կենդանական և բուսական աշխարհի վրա (Պարսից ծոցի պատերազմ (1991 թ.), հրդեհներ Ինդոնեզիայում, նավթային արտահոսքեր Գալապագոսյան արշիպելագում, Բոլիվիայում և այլն)<sup>23</sup>:

Բնության վրա պատերազմական գործողությունների վնասակար ազդեցության հետազոտումն առանձնակի թափ ստացավ 20-րդ դարի 80-ական թվականների երկրորդ կեսին: ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի «Բնության համաշխարհային խարտիայում» նշված է. «Հազվագյուտ ռեսուրսներին հետամուտ լինելը դարձել է հակամարտությունների պատճառ, իսկ բնության և դրա ռեսուրսների պահպանումը նպաստում է արդարության հաստատմանը և խաղաղության պահ-

<sup>20</sup> Տես *L. Մեյքոնյան*, Էկոլոգիայի հիմունքներ: Ե., 2008, էջ 14–16:

<sup>21</sup> Տես «2010 International Year of Biodiversity. United Nations Environment Programme. Environment for development» (<http://www.unep.org/iyb/>); «Biodiversity is life. 2010 has been declared the International Year of Biodiversity (IYB) by the United Nations» (<http://www.biodiversityislife.net/>):

<sup>22</sup> Տես «Convention on Biological Diversity» (<http://www.cbd.int/convention/>); «History of the Convention» (<http://www.cbd.int/history/>); «Конвенция о биологическом разнообразии» (<http://www.un.org/russian/documen/convents/biodiv.htm>):

<sup>23</sup> Տես «Convention on Biological Diversity. Summary of Case-Law and Case-Studies pertaining to Transboundary Environmental Damage. Information note by the Executive Secretary» (<http://www.cbd.int/doc/meetings/lr/eglr-01/information/eglr-01-inf-02-en.pdf>):

պանմանը, և հնարավոր չի լինի պահպանել բնությունն ու բնական ռեսուրսները, մինչև որ մարդկությունը չտուրի ապրել խաղաղության մեջ ու չիրաժարվի պատերազմներից ու զենքի արտադրությունից»<sup>24</sup>:

<sup>24</sup> «Всемирная хартия природы (принята резолюцией 37/7 Генеральной Ассамблеи от 28 октября 1982 года)» ([http://www.un.org/russian/document/convents/charter\\_for\\_nature.html](http://www.un.org/russian/document/convents/charter_for_nature.html)).

## ЭКОЛОГИЧЕСКАЯ БЕЗОПАСНОСТЬ

### РАЗРУШИТЕЛЬНОЕ ВОЗДЕЙСТВИЕ ВОЙНЫ НА ПРИРОДУ. ЭКОСИСТЕМА ПРОТИВНИКА КАК МИШЕНЬ ВОЙНЫ

*А. М. ШАХВЕРДЯН, старший лейтенант, референт-секретарь  
аспирантуры ИНСИ МО РА*

#### РЕЗЮМЕ

Отрицательное воздействие войны на природу прослеживается с древнейших времен. С развитием средств вооруженной борьбы оно приобретало все более разрушительную силу, достигнув апогея с созданием оружия массового поражения, в первую очередь—ядерного. Анализ результатов испытаний ядерного оружия малых мощностей свидетельствует о том, что на восстановление нанесенного природе ущерба требуется довольно продолжительное время (для полигона в Неваде—до несколько десятков лет). Это означает, что в случае массированного применения мощного ядерного оружия природа может оказаться не в состоянии самовосстановиться, а возможные ядерные войны могут стать причиной полного или значительного уничтожения человечества и природы.

В статье на основе анализа конкретных примеров из истории войн особое внимание уделяется вопросам умышленного уничтожения экосистем противника как одной из главных целей современных военных действий.

Осознавая данную опасность как глобальную угрозу жизни всего человечества, международные организации предпринимают комплекс соответствующих мер, включая запрет на производство, испытания и применение различных видов ОМП, способных оказать разрушительное воздействие на природу.

**ECOLOGICAL SECURITY**

THE DESTRUCTIVE EFFECT OF WAR ON THE NATURE.  
ENEMY'S ECOSYSTEM AS A WAR TARGET

*A. M. SHAHVERDYAN, Senior Lieutenant,  
Aide-Secretary of the Graduate School of the INSS, MOD, RA*

SUMMARY

The negative effect of war on the nature can be traced back to ancient times. With the development of means of armed struggle it gained more and more destructive power reaching its apogee when weapons of mass destruction, first of all nuclear ones were created. The analysis of tests results of low-yield nuclear weapons indicates that the repair of the damage caused to the nature takes a fairly long time (in case of the range in Nevada it will take up to several decades). This means that in case of massive use of high-yield nuclear weapons the nature may not be able to self-restore, and potential nuclear wars can become a reason for total or considerable destruction of the mankind and nature.

The article focuses on the issues of premeditated destruction of an enemy's ecosystems as one of the main goals of current warfare, based upon the analysis of concrete examples from the history of wars.

Realizing this danger as a global threat to the life of all the mankind, international organizations take a complex of adequate steps, including the ban on the production, test and use of different types of WMD capable of destructively impacting on the nature.

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԳԱՂՏՆԻՔԻ ՍԱՀՄԱՆԱԿԱՐԳԻ  
ԶԱՐԳԱՅՈՒՄԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՅԹՈՒՄ**

*Ա. Լ. ՔԻՆԱԿՅՅԱՆ, փոխգնդապետ, իրավաբանական գիտությունների  
թեկնածու, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության  
ծառայության գիտատնտեսական կենտրոնի պետ, Գ. Ն. ԵՆԳԻԲԱՐՅԱՆ,  
փոխգնդապետ, ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության  
ծառայության գիտատնտեսական կենտրոնի ավագ դասախոս*



Ժամանակակից տեղեկության  
հասարակության պայմաններում  
գաղտնիքի (լինի դա պետական,  
առևտրային, բանկային, նախաքննական,  
նոտարական, անձնական, բժշկական և այլն)  
պահպանումն օրինաչափորեն  
դիտարկվում է հասարակության  
և պետության ընդհանուր տեղե-



կության անվտանգության համատեքստում: Արտատարածաշրջանային ու ներտարածաշրջանային քաղաքական զարգացումների արդի բնույթով ու առանձնահատկություններով պայմանավորված՝ մեր երկրում շեշտակիորեն աճել է պետական մարմինների ու հիմնարկների, գիտահետազոտական և ուսումնական հաստատությունների, գիտնականների և հետազոտողների հետաքրքրությունը տեղեկության անվտանգության ապահովման ոլորտի նկատմամբ: Այսպես, 2009 թ. ընդունվեց «Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգության հայեցակարգը», ինչով սկիզբ դրվեց տեղեկության ոլորտում պետական համակարգված մոտեցումների սահմանմանն ու կիրառմանը<sup>1</sup>:

Տեղեկության անվտանգության ապահովման ուղղությամբ պետական արդյունավետ քաղաքականության մշակման և իրագործման համար օբյեկտիվորեն առաջնային նշանակություն են ստանում այդ ոլորտին վերաբերող առավել խրթին, չլուսաբանված կամ թերի լուսաբանված, ինչպես նաև այլ ալթերնատիվ պրոբլեմային հարցերի նպատակային հետազոտությունները<sup>2</sup>:

<sup>1</sup> Տես «ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգը հաստատելու մասին» ՀՀ Նախագահի 2009 թ. հունիսի 26-ի հմ. ՆԿ-97-Ն կարգադրությունը (տես «ՀՀ պաշտոնական տեղեկագիր», 2009, հմ. 35 (701)):

<sup>2</sup> Տես, օրինակ, Ա. Լ. Քինակցյան, Տեղեկատվական անվտանգության արդի մի քանի հարցեր: Պետություն, պատմություն, տնտեսություն, մշակույթ: Ե., 2009, էջ 83:

Տեղեկության անվտանգության համակարգի բաղադրիչներից առավել խորը պատմական արմատներ ունի պետական գաղտնիքը, քանի որ այն ձևավորվել է պետության և իրավունքի առաջացման հետ միաժամանակ: Պետական (նաև՝ այլ) գաղտնիքի իմացաբանական և իրավաբանական պրոբլեմներն ուսումնասիրողների շրջանում մեծ հետաքրքրություն են առաջ բերում հայ իրականության մեջ այդ սոցիալական (հանրային) և իրավական սահմանակարգի ծագումնաբանության, ինչպես նաև պատմական տարբեր ժամանակաշրջաններում դրա ընկալման ու զարգացման առանձնահատկությունների հարցերը:

Գաղտնիքը (լատիներեն՝ *secretum*, ռուսերեն՝ *тайна*)՝ հրապարակման ոչ ենթակա, մեծամասնությունից թաքցվող տեղեկությունն է<sup>3</sup>: Գաղտնիքը, կամ այլ կերպ ասած՝ մյուսներից թաքցվող որևէ տեղեկություն, մարդկությանը մշտապես ուղեկցող հասկացություններից է: Այն ի հայտ է եկել հնագույն ժամանակներում. սկզբում՝ որպես միջանձնային հարաբերությունների տարր, այնուհետև վերածվել է մինչպետական սոցիալական (հասարակական) իշխանությանը բնորոշ հատկանիշի, իսկ պետության առաջացումից հետո դարձել է հանրային, ներքին, արտաքին քաղաքական և իրավական սահմանակարգ:

Պետական գաղտնիքը պետության կողմից պաշտպանվող տեղեկություններն են, որոնց տարածումը կարող է վնաս հասցնել նրա անվտանգությանը<sup>4</sup>: Դա վարչակառավարչական, տնտեսական, քաղաքական հարաբերություններում առաջացող և իրավական ակտերով սահմանվող հասկացություն է:

Պետական գաղտնիքը այն գործոններից մեկն է, որոնցով մեծապես պայմանավորված են պետության՝ որպես սոցիալ-քաղաքական յուրահատուկ կազմակերպության գոյությունն ու բնականոն գործունեությունը: Դրանով է պայմանավորված պետական գաղտնիքի գերակա դերը բոլոր տեսակների գաղտնիքների համակարգում:

Իհարկե, գոյատևման ու զարգացման խնդիր բոլոր ժամանակներում ունեցել են նաև մյուս հանրային համակարգերը (տոհմ, համայնք և այլն), իսկ գաղտնիքը՝ որպես այդ խնդրի իրագործման միջոց, մարդկային հասարակությանն ուղեկցել է նրա պատմական զարգացման ցանկացած փուլում: Այսպես. հայտնի է, թե ինչպես էին նախնադարյան մարդիկ այլ տոհմախմբերից գաղտնի պահում իրենց հարուստ որսատեղիները: Դա թերևս կարելի է համարել գաղտնիքի գիտակցման, գնահատման ու պահպանման նախնական փուլ:

<sup>3</sup> Տես, օրինակ, Փ. Քոչին, Իրավաբանության բացատրական բառարան (անգլերեն – հայերեն – անգլերեն): Ե., 2005, էջ 242, *isuli*՝ «Новый юридический словарь», под ред. А. Н. Азриляна. М., 2006, с. 967:

<sup>4</sup> Տես «Новый юридический словарь», с. 967: Ըստ «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ պետական գաղտնիքը ՀՀ ռազմական, արտաքին հարաբերությունների, տնտեսական, գիտատեխնիկական, հետախուզական, հակահետախուզական, օպերատիվ-հետախուզական բնագավառների այն տեղեկություններն են, որոնք պաշտպանվում են պետության կողմից, և որոնց տարածումը կարող է ծանր հետևանքներ առաջացնել ՀՀ անվտանգության համար (տես «ՀՀ գործող օրենքների ժողովածու. գիրք 1, 1985–1997 թթ.»: Ե., 2007, էջ 443):



Գաղտնիքը «պետական կարգավիճակ» ստացավ պետության՝ որպես միանգամայն նոր տեսակի ու որակի սոցիալ-քաղաքական կազմակերպության առաջացման հետ: Նախնական փուլում այն հիմնականում ներառում էր ռազմական բնույթի գաղտնիքները: Ձևավորվելով և զարգանալով որպես առանձին ամբողջական իրավական սահմանակարգ՝ պետական գաղտնիքն աստիճանաբար սկսեց ներառել նաև սահմանափակ մատչելիության տեղեկություններ պետական գործունեության այլ ոլորտների վերաբերյալ՝ ֆինանսատնտեսական, առևտրական, արտադրական, գիտական և այլն:

Ցավոք, Հին Հայաստանի մասին մեզ հասած աղբյուրներում գրեթե չեն հանդիպում պետական գաղտնիքի ուղղակի հիշատակումներ: Սակայն դեռ ուրարտական՝ Արարատյան թագավորության ժամանակաշրջանից (մ. թ. ա. 9–6-րդ դարեր) մեզ հասած պատմական հուշարձանները վկայում են, որ արտաքին ու ներքին անվտանգության ապահովումը, այդ նպատակով իրականացվող հետախուզական և հակահետախուզական գործունեությունը դրված են եղել պետական հիմքերի վրա: Օրինակ՝ մեզ է հասել թշնամական Ատրեստանից ուղարկված երկու լրտեսների վնասագերծման մասին ուրարտական մի սեպագիր արձանագրություն, որը պահվում է Հայաստանի պատմության պետական թանգարանում: Արձանագրության մեջ նշվում է. «Հետախուզական զեկույց Թեյշեբա-յինի կուսակալին Ինուշ-շիլի Ռիրմեից: Վնասագերծվել են լրտեսության մեջ կասկածվող երկու մարդ՝ Խալդիպուրա և Ռիրադի անուններով: Արքային է ուղարկվել զանազան իրերով բեռը: Ժամանել են 5 մարդ, որոնք ծառայում են ոմն Յիպայի: Ինքը՝ Յիպան, ուղարկվել է արքայի մոտ, որտեղ ճշմարտացի ցուցմունքներ է տվել...»<sup>5</sup>: Մեպագիր արձանագրության վերծանումից և ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ լրտեսվել են Արարատյան թագավորության գաղտնիքները, որոնք պաշտպանվել են պետության կողմից, և որոնց ապօրինի ձեռքբերման համար նշված լրտեսները ենթարկվել են հետապնդման:

Իսկ ահա լրտեսության իրավական գնահատականը տրվել է շատ ավելի ուշ: 1874 թ. Բրյուսելյան խորհրդաժողովում ընդունված «Պատերազմ վարելու կանոնների մասին» հռչակագրում նշվում է, որ «Լրտես անվանվում է այն անձը, որը գաղտնի կամ կեղծ պատրվակով զբաղված է մյուս կողմի մասին տեղեկություններ հավաքելով»<sup>6</sup>: Լրտեսությունը նույն կերպ է սահմանվում նաև ժամանակակից աղբյուրներում<sup>7</sup>:

<sup>5</sup> И. М. Дьяконов. Урартские письма и документы. М.-Л., 1963, сс. 35—37. Բերվում է ըստ՝ «Հայաստանի անվտանգության մարմինների պատմության թանգարանի ուղեցույց»։ Ե., 2006, էջ 10:

<sup>6</sup> «Государственная тайна и ее защита в Российской Федерации», под общ. ред. М. А. Вуса и А. В. Федорова. СПб., 2007, с. 83.

<sup>7</sup> Տե՛ս А. А. Котенев, С. В. Лекарев. Современный энциклопедический словарь по безопасности. М., 2001, с. 480; «Новый юридический словарь», с. 1074; А. Ю. Шумилов. Оперативно-розыскная энциклопедия. М., 2004, с. 11, նաև՝ «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 4: Ե., 1978, էջ 674:

Բոլոր ժամանակներում պետության դեմ իրականացված լրտեսությունը դիտվել է որպես ծանրագույն հանցագործություն, իսկ լրտեսները ենթարկվել են առավելագույն ծանր պատիժների: Մինևույն ժամանակ, ոչ մի պետություն չի կարողացել գերծ մնալ լրտեսության՝ իր անվտանգության ապահովման նպատակով տեղեկություններ հավաքելու այդ հզոր հնարավորության օգտագործման գայթակղությունից: Ավելին. լրտեսությունը (որպես հետախուզության միջոց) եղել և մնում է ցանկացած պետության անվտանգության ապահովման համակարգի անբաժանելի մասը:

«Վայել չէ թագավորի և իշխանի համար գողեր և ավազակներ ունենալ, այլ միայն լրտեսներ, որ հետախույզներ են», գրում է Մխիթար Գոշը «Դատաստանագրքում», որը դարեր շարունակ հայերի համար ծառայել է որպես օրենսգիրք<sup>8</sup>: Մեծ օրենսդիրը թագավորներին և իշխաններին հորդորել է ոչ թե գողությամբ ու ավազակությամբ գաղտնիքներ կորզել ու հափշտակել, այլ անհրաժեշտ տեղեկությունների հավաքումը՝ հետախուզությունը, կազմակերպել պետական մակարդակով:

Պետական գաղտնիքի սահմանակարգի ձևավորման պատմական նախադրյալներին վերաբերող ուշագրավ աղբյուր է 12-րդ դարի հայ նշանավոր գիտնական և պետական գործիչ Ներսես Լամբրոնացու «Զինվորական օրենքներ» աշխատությունը, որը նա անվանել է նաև «Զինվորական սահմանադրություն»: Այն թարգմանություն է ասորերենից ու հունարենից՝ հարմարեցված միջնադարի հայ իրականությանը, մասնավորապես՝ Կիլիկյան Հայաստանի պայմաններին, և որպես օրենսգիրք է ծառայել մինչև Մխիթար Գոշի «Դատաստանագրքի»<sup>9</sup> կազմվելը, քանի որ այդ շրջանում, ի տարբերություն եկեղեցական օրենքներից (կանոնագրքեր), հայ աշխարհիկ գրավոր օրենքներ պարզապես չեն եղել:

Լամբրոնացու աշխատության մի քանի հոդվածներում արծարծվում են զինվորական գաղտնիքին առնչվող հարցեր: Այսպես. 3-րդ հոդվածում սահմանվում է, որ յուրաքանչյուր պետ (հրամանատար) պարտավոր է հրահանգավորել իր ստորադրյալներին, օրինակ՝ բացատրել նրանց, թե որ տեղեկությունները պետք է թաքցվեն, և եթե զինվորն անտեղյակության պատճառով որևէ գաղտնիք հայտնի մեկ ուրիշին, ապա կպատժվի նաև նրա վերադասը: Ավելի խիստ պատիժ էր սահմանվում, եթե զինվորականը ռազմական գաղտնիք էր հայտնում («պատմում էր») հակառակորդին (54-րդ հոդված)<sup>10</sup>:

Կիլիկյան Հայաստանում պետական գաղտնիքի պահպանման նման կարևորումը հայ իրավաբանական մտքի զարգացման նոր աստիճան էր, որն իր

<sup>8</sup> Տես *Մխիթար Գոշ*, Դատաստանագիրք: Ե., 2001, էջ 31:

<sup>9</sup> Տես *Սմբար Սպարապետ (Գունդարաբ)*, Դատաստանագիրք: Փոխադր. հեղ. և խմբ.՝ Մ. Ա. Ոսկանյան: Ե., 2008:

<sup>10</sup> Տես *Գ. Հակոբյան*, Ներսես Լամբրոնացի: Ե., 1971, էջ 190–191:

արտահայտությունն ստացավ նաև միջազգային հարաբերություններում, մասնավորապես՝ դիվանագիտության ասպարեզում\*:

Օրինակ՝ 1285 թ. Կիլիկյան Հայաստանի և Եգիպտոսի միջև կնքվեց հաշտության պայմանագիր, որն ուներ իր ռազմաքաղաքական շարժառիթները. Եգիպտոսի շահերից չէր բխում, որ Կիլիկյան Հայաստանը հենակետ դառնար իր դեմ կազմակերպվելիք արշավանքների համար, ինչը ձեռնառու էր կիլիկիացիներին, որովհետև ուժերի հարաբերակցությունն իրենց օգտին չէր: Պայմանագիրը երկու կողմերին էլ տալիս էր պետական անվտանգության երաշխիքներ: Այսպես. հողվածներից մեկով Կիլիկյան Հայաստանն ի դեմս Լևոն Գ թագավորի պարտավորվում էր Եգիպտոսի թշնամի երկրներին կամ անձանց ոչինչ չհայտնել սուլթանի, պետության, նրա զորքի ու հպատակների մասին, այսինքն՝ չտարածել եգիպտական կողմին վերաբերող այն տեղեկությունները, որոնք համարվում էին գաղտնիք: Պայմանագիրը նախատեսում էր նաև նման հնարավոր քայլերը կանխարգելելու միջոցներ. Կիլիկյան Հայաստանը չպետք է որևէ հաղորդակցություն ունենար Եգիպտոսի թշնամի երկրների կամ անձանց հետ «ոչ անուղղակի նշաններով, ոչ նամակով, ոչ դեսպանությամբ և կամ բերանացի պատգամով»<sup>11</sup>:

1285 թ. հայ-եգիպտական հաշտության պայմանագիրը (որն, ի դեպ, կնքվել է տասը տարով, տասը ամսով, տասը օրով և տասը ժամով) կարևոր միջազգային իրավական ակտ է, որը մեզ հնարավորություն է տալիս ոչ միայն պարզելու հայ-եգիպտական հարաբերությունների պատմության կարևոր դրվագներից մեկը, ծանոթանալու միջնադարյան Սերձավոր Արևելքում միջպետական պայմանագրեր կնքելու կարգին, այլև որոշակի պատկերացում կազմելու այդ շրջանում պետական անվտանգության, մասնավորապես՝ պետական գաղտնիքի նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունքի մասին:

Պետական մակարդակով տեղեկությունների ձեռքբերումը, լրտեսումը կազմակերպելու անհրաժեշտության մասին են գրում նաև Շահամիր և Հակոբ Շահամիրյաններն իրենց «Ռոբզայթ փառաց» աշխատությունում (1773 թ.), որի երկրորդ գիրքը՝ «Նշավակը», համարվում է հայկական սահմանադրության առաջին նախագիծը (521 հոդված): Խոսելով ապագա Հայաստանի ռազմաքաղաքական կառուցվածքի և անվտանգության ապահովման մասին՝ Շահամիրյաններն անհրաժեշտ են համարել նախատեսել նաև հետախուզական պաշտոններ: Լրտեսապետի մասին հրամանի օրինակում կարդում ենք. «Քեզ իշխանություն տվեցինք, որ Հայոց տան ծախսով խաղաղության ժամանակ՝ տասներկու, իսկ պատերազմի ժամանակ երեսունվեց խելամիտ ծառայողներ վերցնես» լռելյայն շրջեցնելով նրանց Հայաստանյայց երկրի երեսին և օտար աշխարհում՝ հայոց թշնամիների կամ դրացիների երկրում, ամենայն զգուշավորությամբ ձեռք

\* Բուն Հայաստանում երկար ժամանակ պետականություն չլինելու պատճառով նման փաստերը շատ չեն:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 224:

բերելով ամեն տեսակ տեղեկություններ, ինչ կարգի էլ որ նրանք լինեն, յուրաքանչյուր շաբաթ երեք օրինակից մանրամասնորեն գրառելով թղթի վրա՝ մեկը հանձնես Նախիջևան քաղաքի իշխանին, երկուսից մեկը շնորհ անես Հայոց տան պալատին, իսկ մյուսը՝ հայոց նախարարի խորհրդարանին: Եվ թող Հայոց տան կարգադրությամբ արգելք դրվի քո ձեռքին ու բերանին, որպեսզի լռեյայն և գաղտնի ամեն բան, ինչ լուր էլ այն լինի, չխտավի ու չգրվի որևէ մեկին, բացի երեք պալատներից, ինչպես քեզ հրամայեցինք վերևում: Ջանք պիտի թափես և հավատարմորեն հոգատար լինես Հայոց տան հանդեպ»<sup>12</sup>:

Ըստ Շահամիրյանների՝ «հայոց նախարարին կից» նախատեսվել է «գաղտնի խորհրդարան»՝ բաղկացած երեք տարի ժամկետով նշանակվող տասներեք անդամներից (խորհրդակիցներից): Նրանց պաշտոնի նշանակելու հրամանի օրինակում հեղինակները գրում են. «քեզ տվեցինք իշխանության պաշտոնի շնորհման հրաման՝ երկրորդ խորհրդակցի պաշտոն հայոց պատվական նախարարի գաղտնի խորհրդարանում՝ համայն խորհրդում հիշեցնելով անխախտելի Հայոց օրենքը, քանզի ամեն մի գործ, որ հրապարակվելու է հայոց նախարարի գաղտնի խորհրդարանից, պետք է անթերի համապատասխանեցվի Հայաստանյայց օրենքին»<sup>13</sup>:

«Որոգայթ փառացում» կան գաղտնիքին առնչվող նաև այլ դրույթներ: Մասնավորապես՝ 322-րդ գլուխը վերաբերում է պատերազմի ժամանակ թշնամու երկիր նամակ գրելու կամ այնտեղից նամակ ստանալու կարգին, որտեղ հատակ նշվում է, որ նամակը պետք է բաց վիճակում հանձնվի «եթե այն զերծ լինի և մաքուր ամեն տեսակ պատերազմական տեղեկություններից»<sup>14</sup>: Պատերազմի ժամանակ Հայաստանից այլազգիների հեռանալու դեպքում գաղտնիքների տարածումը կանխելու նպատակով 325-րդ գլխում դրվում է սահմանափակում. «պատերազմ հայտարարվելուց քառասունհինգ օր անցնելուց հետո ոչ ոք չի կարող հեռանալ, այլ պարտավոր է շարունակել մնալ և բնակվել մեր երկրում՝ ազատ ամեն կարգի կողմնակալ գործերից և երկու կողմին, այսինքն՝ իր ազգին կամ մեր թշնամու կողմին և մեր կողմին վերաբերող պատերազմական տեղեկությունից՝ մինչև խաղաղության հաստատումը»<sup>15</sup>:

Այսպիսով՝ «Որոգայթ փառաց» աշխատությունից կատարված այս քաղվածքները հայ իրավագիտական մտքի զարգացման նոր աստիճանի վկայությունն են. հայոց սահմանադրության առաջին նախագծի հեղինակները կարևորում են ոչ միայն գաղտնիքի պահպանումը, այլև օրինականությունը, համապատասխանությունը օրենքներին՝ գաղտնիքը դիտարկելով պետական անվտանգության ապահովման համատեքստում:

Գաղտնիքի պահպանման եղանակներից անենատարածվածներից մեկը

<sup>12</sup> Շահամիր և Հակոբ Շահամիրյանների, Որոգայթ փառաց: Ե., 2002, էջ 101:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 85:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 168:

<sup>15</sup> Նույն տեղում, էջ 169:

գաղտնագրությունն է, կամ ծածկագրությունը (կրիպտոգրաֆիա)\*: Կարելի է վստահաբար ասել, որ պետական գաղտնիքի պահպանման համակարգի զարգացումը ցանկացած երկրում, այդ թվում՝ Հայաստանում, անմիջականորեն կապված է եղել նաև գաղտնագրության զարգացման հետ: Ռուսաստանյան հայտնի գիտնական պրոֆեսոր Ա. Ֆատյանովը, խոսելով պետական գաղտնիքի հասկացության ձևավորման պատմական նախադրյալների մասին, մեծ ուշադրություն է դարձրել գաղտնագրությանը և նշել, որ հնագույն ժամանակներից «գաղտնագրերը դարձել են գաղտնիքի մշտական ուղեկիցը, շատ դեպքերում նաև՝ դրա հատկանիշը, քանի որ սակավարժեք տեքստը դժվար թե որևէ մեկը վերափոխի բավական աշխատատար միջոցով»<sup>16</sup>:

Գաղտնագրությունը որպես փաստաթղթավորման ձև, որն օգտագործվել է միայն որոշակի անձանց հասկանալի լեզվով քաղաքական, ռազմական, առևտրային և այլ բնույթի տեղեկություններ հաղորդելու համար, հայտնի է եղել հին պետականություն և մատենագրություն ունեցող ժողովուրդներին, այդ թվում՝ հայերին:

Հայ իրավաբանական մտքի մեջ գաղտնիքի հասկացության ըմբռնման զարգացումն ուսումնասիրելու համար արժեքավոր տեղեկություններ է պարունակում հայ գաղտնագրությունը: Այն դասակարգվում է հետևյալ կերպ. ռազմաքաղաքական, գրչածածուկ, արհեստագործական գաղտնագրություն, առեղծվածագիր<sup>17</sup>:

Չնայած հայոց հին և հզոր պետականության գոյությանը՝ ցավոք, այդ շրջանից մեզ չեն հասել ռազմական կամ դիվանագիտական բնույթի ամբողջական գաղտնագրեր. եղած պատառիկները մեծ մասամբ վերաբերում են պետություն չլինելու շրջանին, մասնավորապես՝ 17–18-րդ դարերին, և հիմնականում առնչվում են հայ-ռուսական հարաբերություններին<sup>18</sup>: Այնուամենայնիվ, ստեղծվել է հայ գաղտնագրությանը նվիրված բավականին հարուստ գրականություն\*\* . առաջինը դրան ուշադրություն է դարձրել 19-րդ դարի ֆրանսիացի հայագետ ակադեմիկոս Մարի Բրոսսեն, որը, Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարա-

\* Գաղտնագիրը գրության ձև է, որը նպատակ ունի գրվածը հասկանալի դարձնելու միայն որոշակի անձանց: Հայկական գաղտնագրերի մի մասը պարունակում է քաղաքական տեղեկություններ, մյուս մասը հիշատակարաններ են (տես «Հայկական համառոտ հանրագիտարան», հ. 1: Ե., 1990, էջ 605):

<sup>16</sup> А. А. Фатьянов. Тайна и право. М., 1998, с. 8.

<sup>17</sup> Այդ մասին հանգամանորեն տես Ա. Աբրահամյան, Հայկական ծածկագրություն: Ե., 1978, էջ 6–9, «Հայկական տվետական հանրագիտարան», հ. 3: Ե., 1977, էջ 643, 689, Կ. Ղաֆարյան, Ալքիմիան պատմական Հայաստանում: Ե., 1940, էջ 15:

<sup>18</sup> Տես Ա. Աբրահամյան, Նշ. աշխ., էջ 7:

\*\* Հայ գաղտնագրության հարցերի ուսումնասիրությամբ զբաղվել են բազմաթիվ բանասեր-հայագետներ՝ Գ. Տեր-Սկրտչյանը, Հ. Տաշյանը, Ե. Լալայանը, Հ. Ոսկյանը և ուրիշներ: Սակայն Հրաչյա Աճառյանն առաջինն էր, որ փորձել է խմբավորել հայերեն գաղտնագրերը և իրենց տարաբնույթ բանալիներով հանդերձ համակողմանիորեն ներկայացնել իր «Հայոց գրերը» աշխատության «Հայերեն ծածկագրերը» վերնագրով հավելվածում (տես Հ. Աճառյան, Հայոց գրերը: Վիեննա, 1928):

նում ուսումնասիրելով հայկական ձեռագրերը, հայտնաբերել և վերծանել է 17-րդ դարի հայ գործիչ Ջաքարիա Վանեցու գաղտնագրերը, որոնք առատ նյութ են տալիս այդ շրջանում հայ իրականության մեջ տիրող ռազմաքաղաքական իրավիճակի մասին:

Ուշագրավ է նաև հետևյալ փաստը. Լվովի հայ եկեղեցու վարդապետ Ներսես Երևանցին, որը մեծ ներդրում է ունեցել 1686 թ. Բուդապեշտ քաղաքը թուրքական լծից ազատագրելու գործում, վերծանել է պաշարված քաղաքից հայ քահանայի ուղարկած հայերեն գաղտնագիր ռազմական տեղեկությունները և հանձնել հունգարական բանակին<sup>19</sup>: Փաստն ինքնին վկայում է, որ գաղտնագրությունը տարածված է եղել հայերի շրջանում, իսկ դրա բանալին ունեցել են անգամ հասարակ քահանան ու վարդապետը:

Հայ գաղտնագրության ուշագրավ նմուշներից են Պետրոս Առաջինի պատվիրակ Իվան Կարապետի՝ 1724 թ. գրած գեկուցագրերը, որոնք ուղղված էին ռուսական արքունիքի գաղտնի խորհրդական Պ. Տոլստոյին (դրանցում նա գաղտնի տեղեկություններ է հաղորդում Անդրկովկասում տիրող ռազմաքաղաքական իրադրության և Դավիթ Բեկի գլխավորությամբ սյունեցիների մղած ազատագրական պայքարի մասին), Ամենայն Հայոց կաթողիկոս Ներսես Աշտարակեցու քաղաքական բնույթի գրությունները, որոնցով նա ակնկալում էր ռուսական զորքերի մուտքը Հայաստան, Աբրահամ Յուզբաշու նամակը Անդրկովկասում տեղակայված ռուսական զորքերի թարգմանչին, և այլն\*:

Եվ այսպես. ակնհայտ է, որ հասարակական-քաղաքական հարաբերությունների զարգացմանը զուգընթաց հայ իրավագիտակցության մեջ հետզհետե ավելի խորությամբ է ընկալվել և գնահատվել գաղտնիքի պահպանման ուղղակի կապը պետական անվտանգության հետ, այսինքն՝ աստիճանաբար ավելի է արմատավորվել այն գաղափարը, որ գաղտնիքի պահպանումը պետական գործունեության կարևոր ոլորտ է: Ընդամին արտաքին և ներքին անվտանգության ապահովմանն ուղղված պետական գործունեության ձևերն ու բովանդակությունը տարբեր ժամանակաշրջաններում կախված են եղել ռազմաքաղաքական իրավիճակից և պետության կառուցվածքից: Ներկայիս Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի վերաբերյալ օրենսդրությունը, անշուշտ, հիմնվում է նաև այն մեծ փորձի վրա, որն այս բնագավառում կուտակված է եղել Հայաստանի Առաջին Հանրապետությունում և հատկապես՝ Հայկական ԽՍՀ-ում:

Ամփոփելով այս համառոտ ուսումնասիրությունը՝ նշենք, որ հայ իրականության մեջ պետական գաղտնիքը ծառայել է հանրային համակարգի անվտանգության ապահովման խնդիրներին և հայ իրավաքաղաքական մտքի կողմից ի սկզբանե ընկալվել է հիմնականում որպես ռազմական բնույթի փակ տեղեկու-

<sup>19</sup> Տես «Հայկական սովետական հանրագիտարան», հ. 8: Ե., 1982, էջ 253:

\* Հայերը գաղտնագիր արձանագրություններ են դրոշմել նույնիսկ խաչքարերին, եկեղեցիների, ճարտարապետական այլ հուշարձանների պատերին (դրանք ընդունված է անվանել վիմական գաղտնագրություն):

յուն: Պետության անվտանգության ապահովումը, այդ թվում՝ պետական գաղտնիքի պահպանությունը, իրականացվել է պետական մարմինների կամ առանձին պաշտոնատար անձանց կողմից և դիտվել որպես պետական գործունեության առանձին ոլորտ:

Հայաստանի Հանրապետության պետական գաղտնիքի իրավական սահմանակարգը ձևավորվել է հայրենական փորձի ու պատմաիրավական նախադրյալների հիմքի վրա՝ այլ երկրներում դրա զարգացման օրինաչափությունների հաշվառմամբ: Ուստի այդ զարգացումների գիտական հետազոտման հրամայականն այսօր կապված է ներկայիս պայմաններում պետական գաղտնիքի պահպանության՝ որպես ՀՀ տեղեկության անվտանգության կարևորագույն բաղադրիչներից մեկի առավել հուսալի համակարգ ձևավորելու անհրաժեշտության հետ:

## ИНФОРМАЦИОННАЯ БЕЗОПАСНОСТЬ

### РАЗВИТИЕ ИНСТИТУТА ГОСУДАРСТВЕННОЙ ТАЙНЫ В АРМЕНИИ В ИСТОРИЧЕСКОМ ИЗМЕРЕНИИ

*А. Л. КИНАКЦЯН, подполковник, кандидат юридических наук,  
начальник Научно-учебного центра Службы национальной безопасности  
при Правительстве РА, Г. Н. ЕНГИБАРЯН, подполковник,  
старший преподаватель Научно-учебного центра  
Службы национальной безопасности при Правительстве РА*

#### РЕЗЮМЕ

В условиях развития современного информационного общества охрана тайны (будь то государственной, служебной, коммерческой или иной) закономерно рассматривается в контексте общей информационной безопасности государства и общества.

Для разработки и осуществления эффективной государственной политики в данной сфере объективно первоочередное значение приобретают целевые исследования наиболее сложных, неизученных или недостаточно изученных проблемных вопросов. В связи с этим представляется важным всеохватывающее изучение в историческом разрезе системы охраны государственной тайны как социального и правового института.

На основе широкого спектра фактографических материалов в статье выявлены и проанализированы основные исторические закономерности возникновения и развития института государственной тайны в Армении, что поможет не только сформировать более четкое представление о гносеологических аспектах государственной тайны, но и выявить историко-правовые особенности ее восприятия в армянском обществе в целях обеспечения перспективного развития системы ее охраны в РА.

**INFORMATION SECURITY**

**THE DEVELOPMENT OF THE INSTITUTE OF STATE SECRET  
IN ARMENIA IN THE HISTORICAL DIMENSION**

*A. L. KINAKTSYAN, Lieutenant-Colonel, PhD in Law, Head of the Academic-Educational Center of the National Security Service under the RA Government,  
G. N. YENGIBARYAN, Lieutenant-Colonel, Senior Lecturer at the  
Academic-Educational Center of the National Security Service  
under the RA Government*

**SUMMARY**

Under conditions of the development of modern information society the secret protection (either state, official, commercial or other) is considered in the context of general information security of the state and the society.

For elaborating and implementing efficient state policy in the given sphere the targeted studies of more complicated, not studied or insufficiently studied problems are becoming of objectively top priority. In this connection it is of utmost importance to comprehensively study in the historical aspect the system of protecting the state secret as a social and legal institute.

The main historical regularities of emergence and development of the institute of the state secret in Armenia have been revealed and analyzed in this article on the basis of a wide spectrum of factual materials. This will help not only to shape a more precise opinion about gnosiological aspects of the state secret, but also to reveal historical and legal peculiarities of its comprehension in the Armenian community for ensuring the prospective development of the system of its protection in the Republic of Armenia.



**ՀԱՅԵՐԵՆԻ ՌԱԶՄԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԾԻՆՈՒԹՅԱՆ  
ՈՐՈՇ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ**

*Լ. Ժ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, ԲՀԾ 3-րդ դասի խորհրդական, ՀՀ ՊՆ աշխատակազմի  
տեղեկատվություն-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ*

Խորհրդային Միության փլուզումից և ազգային բանակի ստեղծումից հետո կարևորագույն խնդիր դարձավ ռազմական ոլորտի հայերենի բառապաշարի՝ իբրև նոր, ինքնուրույն համակարգի ձևավորումը: Սկսվեց բառաստեղծման բուռն գործընթաց, որը ծնունդ տվեց բազմաթիվ նորաբանությունների, որոնք միանգամից ներխուժեցին մեր լեզվի բառապաշար: Այդ բարդ գործընթացը շարունակվում է մինչ օրս: Այսօր էլ գործածական են մի շարք օտար ռազմագիտական տերմիններ ու բառեր. ՀՀ բանակի սպայակազմը, որի մի զգալի մասը պատրաստվում է արտասահմանում, մեծ մասամբ՝ ՌԴ-ում, չի կարողանում գիտականորեն հիմնավորված ու համակարգված ձևով լուծել ծագող լեզվական խնդիրները՝ հրնթացս «հայացնելով» փոխառյալ տերմինները: Օրինակ՝ *барбем* (հարթակ՝ հրանոթների տեղակայման համար), *башня* (խոզանակ՝ հրանոթի փողանցքը մաքրելու և յուղելու համար), *марш-бросок* (ստորաբաժանումների արագ տեղաշարժ, նաև վարժանքի մեթոդ՝ դիմացկունությունը զարգացնելու համար), *այո* (զինամթերքի հայտնաբերման համար պողպատե ձող) տերմիններին փոխարինելու համար ստեղծվել են դրանց հայերեն համարժեքները, համապատասխանաբար՝ *հրեպարունք, ներմաքրիչ, ցարկերթ, զոնդոց* բառերը, սակայն դրանք ունեն շատ հազվադեպ գործածություն, այն էլ միայն գրավոր խոսքում՝ պաշտոնական գրությունների մեջ:

Մինչ ռազմական ոլորտում օգտագործվող նոր բառերի քննությանն անցնելը պարզորոշենք *նորաբանություն*, կամ *նորակազմություն*, և *նոր բառ* հասկացությունները: *Նորաբանություն* է բառային այն միավորը, որը տվյալ ժամանակահատվածում գիտակցվում է որպես նոր: Այն տվյալ լեզվի բառակազմական միջոցներով ստեղծված բառ է, ինչպես՝ *քիմիագոր, զորէջք, շարակարգ, նորոգումադարարահանման մեքենա, վերթիռավայրէջքային գուրի, փարաշարժային պարերազմ* և այլն: Ժամանակի ընթացքում նորաստեղծ այդ բառին «վիճակված է» լուծել պասիվ բառապաշարում մնալու կամ ակտիվ, համագործածական բառապաշար անցնելու և *նոր բառ* դառնալու խնդիրը: Այսինքն՝ նոր բառերը այն նորաբանություններն են, որոնք լայն գործածություն են ձեռք բերում՝ ժամանակի ընթացքում արդեն դադարելով նորաբանություն լինելուց:

Նորաբանությունները լինում են բառային և իմաստային: **Բառային** են կոչվում այն նորաբանությունները, որոնք անվանում են նոր առարկաներ, երևույթներ, հասկացություններ կամ հանդես են գալիս իբրև հին անվանումների փոխանորդ-

ներ: Բառային նորաբանությունները ստեղծվում են տվյալ լեզվի միջոցներով, բառակազմական գործող կաղապարներով՝ ածանցմամբ և բառաբարդմամբ:

Ածանցման կաղապարներն ըստ հիմնական ձևույթի նկատմամբ ածանցի գրաված դիրքի՝ լինում են նախածանցային և վերջածանցային: Նախածանցավոր նորաբանությունները սակավաթիվ են. *անհերպազլոր, հակազառիվերակ, ապածավալում, հակապարասպորություն, հակառադիոլոգիկոլոգիումային*: Ավելի մեծ թիվ են կազմում *սերոդ հիմք + վերջածանց* կաղապարով նորաբանությունները, ինչը, անշուշտ, բխում է հայերենում ձևավորված բառակերտական ավանդույթից, ըստ որի՝ վերջածանցումն ավելի լայն տարածում ունի: Այս կաղապարով հատկապես արդյունավետ են *բարդ բառ + վերջածանց, բարդածանցավոր բառ + վերջածանց* մասնակաղապարները, որտեղ մեծ ակտիվություն են ցուցաբերում հետևյալ ածանցները՝

- «-ային» – *հերպազադեպային, վերթիռավայրէջքային, սկանային, թիրահային, պահակաուղեկցորդային, ռադիոլոգիկոլոգիումային, փարաշարժային,*
- «-ական» – *խափանարարահերպազական\*, հրամանակարգավարական, ջրասուզական, ծածկապաշտպանական,*
- «-ություն» – *նվարկագիրություն, օդաշարժություն, պայթակայունություն, փշրողություն,*
- «-ում» – *ջրատեղորոշում, արգելավերացում, նշանափորձում, զավթախուժում,*
- «-իչ» – *նմբափնտրիչ, զրահափոխադրիչ, ուղղորոշիչ:*

Բառաբարդումը բառակազմության (բառաստեղծման) մյուս կարևոր եղանակն է, երբ «պարզ, ածանցավոր բառերի կամ արմատների համակցումով ստեղծվում են բառեր կամ նոր բառեր»<sup>1</sup>: Իսկ Ս. Էլոյանի սահմանմամբ՝ «Բառաբարդությունները ստեղծվում են ոչ միայն նոր հասկացություններ արտահայտելու պահանջով, այլև երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ, որ հաղորդակցման առավել տնտեսված և արտահայտիչ միջոց է»<sup>2</sup>: Հենց «երկու կամ ավելի իմաստներ մեկ բառով արտահայտելու անհրաժեշտությամբ» է պայմանավորված այն հանգամանքը, որ ռազմական ոլորտում քանակապես գերակշռում են բառաբարդմամբ կազմված նորաբանությունները: Հատկապես մեծ թիվ են կազմում երկուսից ավելի արմատ ունեցող բարդությունները, օրինակ՝ *վերթիռավայրէջքային, ռադիոլոգիկոլոգիում, զրահափոխադրիչ, ռազմափորձադաշտ* և այլն:

Ինչպես հայտնի է, «ըստ ձևաբանական-շարահյուսական կառույցի՝ բարդությունները լինում են համադրական և վերլուծական»<sup>3</sup>: Ռազմական ոլորտի

\* *Խափանարարություն*՝ ...2. (արևմտ.) «Ռազմական կամ պետական նշանակություն ունեցող ձեռնարկությունների քայքայումը, շարքից հանելը հակառակորդի թիկունքում կամ որևէ երկրում, դիվերսիա» (տես *Էդ. Ադայան*, Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 572):

<sup>1</sup> Հ. Պեդրոսյան, Հայերենագիտական բառարան: Ե., 1987, էջ 109:

<sup>2</sup> Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, հ. 1: Ե., 1979, էջ 109:

<sup>3</sup> Ա. Մ. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու: Ե., 2008, էջ 232:

նորաբանությունների շարքում հանդիպում են գերազանցապես համադրական բարդություններ, որոնցից առավել գործուն են հետևյալ կաղապարները.

- *գոյական + գոյական*՝ հրետաթումբ, պատժագորհամաս, տեղեկամատյան, սահմանագոր, ցամաքագոր, հրետանավակ, թմբատափ, ռազմաբեմ և այլն,

- *բվական + գոյական* – Եռաբլուր, երկտախտակամած, քառափող,

- *բայսահիմք + գոյական* – պայթափաթեթ, սուզասարք, լիցքախուց, ընթացապաշար, պայթակայունություն և այլն,

- *գոյական + բայսահիմք* – ռմբափնտրիչ, կամրջաղիր, գորէջք, ռադիոքողարկում, ռադիոտեղորոշում,

- *գոյական + ածական* – տանկավտանգ, պայթյունավտանգ, ճակատամերձ,

- *բայսահիմք + բայսահիմք* – զավթախուժում, դիպաշեղում, թռիչքանցում,

- *ածական + բայսահիմք* – թեքադարձ, գաղտնակիր, դիպուկահար,

- *բայսահիմք + ածական* – պայթակայուն, պաշտպանունակ:

Գործածության մեջ եղած բառերի մի ստվար զանգված Խորհրդային Միության փլուզումից հետո հայերեն թարգմանվեց բառապատճենման միջոցով: Այսօր էլ բառապատճենումը մնում է նորաբանությունների ստեղծման գործուն միջոցներից, ընդամին բոլոր բառապատճենումները հիմնականում կատարվում են ռուսերենից: Վերը նշված օրինակների մի ստվար մասը (և՛ ածանցմամբ, և՛ բառարարմամբ կազմված) ստեղծվել է ռուսերենից բառապատճենման միջոցով:

Օրինակ՝ безоткатное – անհետազուր, бомбоискатель – ռմբափնտրիչ, взрыв-пакет – պայթափաթեթ, ремонтно-эвакуационная машина – նորոգումատարահանման մեքենա, разведывательно-дозорная машина – հետախուզադետրային մեքենա, врачебно-летная комиссия – բժշկաթռիչքային հանձնաժողով, радиомаскировка – ռադիոքողարկում, командно-диспетчерский пункт – հրամանակարգավարական կետ, поисково-ударная группа – որոնողահարվածային խումբ, бронетранспортер – գրահափոխադրիչ, танкоопасный – տանկավտանգ:

Ինչպես գիտենք, նորաբանությունները **իմաստային** են կոչվում այն դեպքում, երբ բառը գործածվում է նոր, անցյալում չունեցած իմաստով կամ իմաստներով: Օրինակ՝ *ամրոցիկ* բառի դիմաց Էդ. Ադայանի բառարանում գրված է. «Դաշտային հողաշեն ամրոց՝ արտաքին պատերով ու խրամով»<sup>4</sup>, իսկ ռազմական ոլորտում այս բառը նշանակում է «*հրացանագնդացրային, երթնն ևսև հրեղանային, շրջանաձև կրակ վարելու համար պաշտպանական կառույց*»<sup>5</sup>: Ներկայումս *փոռնջ* բառը գործածվում է նաև որպես ռազմագիտական տերմին և ունի հետևյալ նշանակությունը՝ «*նույն նշանակելուի վրա հրաչգության ժամանակ միևնույն կրակային դիրքում տեղադրված մարտկոցի (դասակի) հրեղանային հրանոթների (ականաներների, մարտական մեքենաների) փողերի փոխհա-*

<sup>4</sup> Էդ. Ադայան, Նշ. աշխ., էջ 37:

<sup>5</sup> Լ. Քոթանջյան, Ս. Ներսիսյան, Հայերեն ռազմական տերմինների բացատրական բառարան: Ե., 2006, էջ 49:

*մաշայնեցված ուղղություն»։ Զառոռդակ բառը նշանակում է ինչ-որ բանի մեկ քառորդ մասը, ռազմական ոլորտում օգտագործվելիս ձեռք է բերել նոր իմաստ՝ «անկյունաշափական հրեպանային սարք, որը ժամանակակից հրանոթներում օգտագործվում է նշանառության ճշգրտման համար»։ Տարաշարժ բառը նշանակում է տարբեր կողմեր շարժվող, մղվող, իսկ որպես ռազմական տերմին՝ «Սիրո-րաբաժանումների ու զորամասերի կազմակերպված փեղաշարժ մարտի ընթացքում՝ հակառակորդի նկատմամբ առավել նպաստավոր դիրքեր զբաղեցնելու, ուժերի ու միջոցների անհրաժեշտ խմբավորում ստեղծելու, ինչպես նաև կրակային հարվածներն առավել արդյունավետ դարձնելու համար»<sup>6</sup>։ Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, տեղի է ունեցել նաև խոսքիմասային անցում՝ ածական→գոյական։*

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ այսօր ռազմական ոլորտում օգտագործվող նոր բառերի առաջացումը ակտիվ և շարունակական գործընթաց է։ Մինևույն ժամանակ, դրանց մեծ մասն այդպես էլ լայն կիրառություն չի ստանում և, չդառնալով *նոր բառ*, աստիճանաբար մոռացվում է։ Այնուամենայնիվ, մի շարք ռազմագիտական տերմիններ, փոխարինելով օտար տարբերակներին կամ արտահայտելով նոր հասկացություններ, հաջողությամբ մտնում են հիմնական բառաֆոնդ՝ հարստացնելով ոչ միայն ռազմագիտական տերմինաբանությունը, այլև մեր լեզվի ամբողջ բառապաշարը։

<sup>6</sup> Ռազմագիտական տերմինների իմաստները տես՝ նույն տեղում, էջ 79, 229, 258։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Մարտիրոսյան, Արդի հայերենի նորաբանությունների բառակազմական կաղապարները։ Ե., 2007։
2. Փ. Մեյրիխանյան, Նոր բառերի բացատրական բառարան։ Ե., 1996։
3. Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Բառակազմություն։ Ե., 1990։

ՀԱՄԱՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Ն. Ս. ՄԿՐՏՉՅԱՆ, մալոր, Լ. Հ. ՊԱՊԻԿՅԱՆ, մալոր,  
Դ. Ս. ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ, գնդապետ

ՀԱՅ-ՌՈՒՍԵՐԵՆ-ԱՆԳԼԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

այլընտրանք – альтернатива; alternative  
աշխարհատարածական կապ—геопространственная связь; geospatial communication  
անեղծվածագիր—загадка в письме; riddle in writing  
աստիճանակարգություն—иерархия; hierarchy

աստիճանակարգում—ранжирование; merit ranking  
աստղարդ—астероид; asteroid  
ասուպ—метеорит; meteorite  
արտոլորտ—экзосфера; exosphere  
բնառնչացում—экоцид; ecocide  
բևեռայնություն—полярность; polarity  
գաղտնագրություն—криптография;

тайнопись; cryptography  
 գնագոյացում—ценообразование;  
 pricing, price formation  
 գործառում—функционирование; func-  
 tioning  
 գործիքարան—инструментарий; tools  
 գործունակություն—дееспособность; 1.  
 capacity, 2. տես *հրավունակություն*  
 երկրոլորտ—геосфера; geosphere  
 զենք—оружие; weapon  
 —անհիիլացիոն զենք—аннигиляцион-  
 ное оружие; annihilating weapon  
 —զերրարձրհաճախականային զենք—  
 сверхвысокочастотное оружие;  
 superhigh-frequency weapon  
 —զերճզրիտ զենք—сверхточное ору-  
 жие; high-accuracy weapon  
 —երկրակեղևային զենք—տես *քարոլոր-  
 տային զենք*  
 —երկրաֆիզիկական զենք—геофизиче-  
 ское оружие; geophysical weapon  
 —իոնոլորտային զենք—ионосферное  
 оружие; ionospheric weapon  
 —կենսոլորտային զենք—биосферное  
 оружие; biospheric weapon  
 —հոգեխոցիչ զենք—психотропное ору-  
 жие; psychotropic weapon  
 —մթնոլորտային զենք—атмосферное  
 оружие; atmospheric weapon  
 —ջրոլորտային զենք—гидросферное  
 оружие; hydrospheric weapon  
 —փնջային զենք—пучковое оружие;  
 particle-beam weapon  
 —քարոլորտային զենք—литосферное  
 оружие; lithospheric weapon  
 —օդերևութաբանական զենք—метеоро-  
 логическое оружие; meteorological  
 weapon  
 —օզոնային զենք—озоновое оружие;  
 ozone weapon  
 ընթացակարգ—процедура; procedure  
 ժամկետայնություն—срочность; urgency  
 իրավունակություն—правоспособность;

legal capacity, juridical competence  
 խառնուկ—примесь; admixture  
 ծածկագրություն—տես *գաղղնագրու-  
 յուն*  
 կանոնակարգ—регламент; regulations  
 կարգացուցակ—расписание; schedule,  
 timetable  
 հանցակազմ—состав преступления;  
 corpus delicti, legally defined crime  
 հաշվետվականություն—отчетность;  
 accountability, reporting  
 հաստատություն—1. заведение, 2. ин-  
 ститут; 1. institution, establishment,  
 2. institute  
 —բանակային քահանաների հաստատու-  
 թյուն—институт армейских капел-  
 ланов; institute for army chaplains  
 հեղեղատ—овраг; ravine, gully  
 հիվանդացություն—заболеваемость;  
 morbidity, sickness rate  
 հոգեշարժողական հակազդում—психо-  
 моторная реакция; psychomotor  
 action  
 հռչակագիր—декларация; declaration  
 հրահանգագիր—инструкция; instruc-  
 tions  
 հուզական հակազդում—эмоциональная  
 реакция; emotional reaction, emo-  
 tional response  
 մագնիսական շեղում—магнитная анома-  
 лия; magnetic anomaly  
 մակընթաց ալիք—приливная волна;  
 tidal wave  
 մեղայական—повинная; confession  
 մզկիթ—мечеть; mosque  
 միջնոլորտ—мезосфера; mesosphere  
 մշտագնում—мониторинг; monitoring  
 մրրկայուն—смерч; tornado  
 ներթափանցիչ—пенетратор; penetrator  
 ներքնոլորտ—тропосфера; troposphere  
 նշանացուցում—целеуказание; target  
 designation  
 նորամուծական մոտեցում—инноваци-

онный подход; innovation approach  
 շարժառիթավորում—мотивация; motivation  
 որողանաշում—эрозия; erosion  
 որոշարկում—детерминация; determination  
 պակասորդ—дефицит; deficit, shortage  
 պայթուցիկ նյութ—взрывчатое вещество; high explosive, blasting agent  
 օտտահողմ—вихрь; whirlwind  
 ջրագրական ցանց—гидрографическая сеть; hydrographic system, hydrographic network

ջրածածկում—затопление; inundation, flood  
 ջրոլորտ—гидросфера; hydrosphere  
 սահմանակարգ—институт; institute  
 —պետական գաղտնիքի սահմանակարգ  
 —институт государственной тайны; institute of state secret  
 սեյսմաբրնիչ—сейсмодвижитель; seismic vibrator  
 վերնոլորտ—стратосфера; stratosphere  
 ուղորոշիչ—пеленгатор; direction-finder  
 քարաքոս—лишай; lichen  
 քարոլորտ—литосфера; lithosphere

РУССКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

альтернатива—ալրնորանք  
 астероид—աստղարդ  
 взрывчатое вещество—պայթուցիկ նյութ  
 вихрь—օտտահողմ  
 геопространственная связь—աշխարհատարածական կապ  
 геосфера—երկրոլորտ  
 гидрографическая сеть—ջրագրական ցանց  
 гидросфера—ջրոլորտ  
 дееспособность—գործունակություն  
 декларация—1. հռչակագիր, 2. հայտարարություն  
 детерминация—որոշարկում  
 дефицит—պակասորդ  
 заболеваемость—հիվանդացություն  
 загадка в письме—անեղծվածագիր  
 затопление—ջրածածկում  
 иерархия—աստիճանակարգություն  
 инновационный подход—նորամուծական մոտեցում  
 институт—1. ինստիտուտ, 2. հաստատություն, 3. սահմանակարգ  
 —институт армейских капелланов  
 —բանակային քահանաների հաստատություն

—институт государственной тайны—պետական գաղտնիքի սահմանակարգ  
 инструкция—1. հրահանգ, 2. հրահանգագիր  
 инструментарий—գործիքարան, գործիքակազմ  
 криптография—գաղտնագրություն, ծածկագրություն  
 литосфера—քարոլորտ, երկրակեղև  
 лишай—քարաքոս  
 магнитная аномалия—մագնիսական շեղում  
 мезосфера—միջնոլորտ  
 метеорит—ասուպ  
 мечеть—մզկիթ  
 мониторинг—մշտագնում  
 мотивация—շարժառիթավորում  
 овраг—հեղեղատ  
 оружие—զենք  
 —аннигиляционное оружие—անիհիլացիոն զենք  
 —атмосферное оружие—մթնոլորտային զենք  
 —биосферное оружие—կենսոլորտային զենք  
 —геофизическое оружие—երկրաֆիզիկական զենք

—гидросферное оружие—ջրոլորտային զենք  
 —ионосферное оружие—իոնոլորտային զենք  
 —литосферное оружие—քարոլորտային զենք, երկրակեղևային զենք  
 —метеорологическое оружие—օդերևութաբանական զենք  
 —озоновое оружие—օզոնային զենք  
 —психотропное оружие—հոգեխոցիչ զենք  
 —пучковое оружие—փնջային զենք  
 —сверхвысокочастотное оружие—գերբարձրհաճախականային զենք  
 —сверточное оружие—գերճգրիտ զենք  
 отчетность—հաշվետվականություն  
 пеленгатор—ուղորդիչ  
 пенетратор—ներթափանցիչ  
 повинная—մեղայական  
 полярность—բևեռայնություն  
 правоспособность—իրավունակություն  
 приливная волна—մակընթաց ալիք  
 примесь—խառնուկ  
 процедура—ընթացակարգ

психомоторная реакция—հոգեշարժողական հակազդում  
 ранжирование—1. հասակի կարգով շարելը, 2. աստիճանակարգում  
 расписание—1. չվացուցակ, 2. կարգացուցակ  
 регламент—կանոնակարգ  
 сейсмовибратор—սեյսմաբորոյիչ  
 смерч—մրրկայուն  
 состав преступления—հանցակազմ  
 срочность—1. ժամկետայնություն, 2. հրատապություն  
 стратосфера—վերնոլորտ  
 тайнопись—սմ. *криптография*  
 тропосфера—ներքնոլորտ  
 функционирование—գործում, գործառնում  
 целеуказание—նշանացուցում  
 ценообразование—զնազոյացում  
 экзосфера—արտոլորտ  
 экоцид—բնաշնչացում  
 эмоциональная реакция—հուզական հակազդում  
 эрозия—ողողամաշում

ENGLISH-ARMENIAN DICTIONARY

accountability—հաշվետվականություն  
 admixture—խառնուկ  
 alternative—ալընտրանք  
 asteroid—աստղարդ  
 blasting agent—see *high explosive*  
 capacity—1. ունակություն, 2. գործունակություն  
 confession—1. խոստովանում, 2. մեղայական  
 corpus delicti—հանցակազմ  
 cryptography—գաղտնագրություն, ծածկագրություն  
 declaration—1. հայտարարություն, 2. հռչակագիր  
 deficit—պակասորդ  
 determination—որոշարկում

direction-finder—ուղորդիչ  
 ecocide—բնաշնչացում  
 emotional reaction—հուզական հակազդում  
 emotional response—see *emotional reaction*  
 erosion—ողողամաշում  
 establishment—see *institution*  
 exosphere—արտոլորտ  
 flood—see *inundation*  
 functioning—գործում, գործառնում  
 geospatial communication—աշխարհատարածական կապ  
 geosphere—երկրոլորտ  
 gully—see *ravine*  
 hierarchy—աստիճանակարգություն

high explosive—պայթուցիկ նյութ  
 hydrographic network—see *hydrographic system*  
 hydrographic system—ջրագրական ցանց  
 hydrosphere—ջրոլորտ  
 innovation approach—նորամուծական մոտեցում  
 institute—1. ինստիտուտ, 2. հաստատություն, 3. սահմանակարգ  
 —institute for army chaplains—բանակային քահանաների հաստատություն  
 —institute of state secret—պետական գաղտնիքի սահմանակարգ  
 institution—հաստատություն  
 instructions—հրահանգագիր  
 inundation—ջրածածկում  
 juridical competence—see *legal capacity*  
 legal capacity—1. իրավունակություն, 2. գործունակություն  
 legally defined crime—see *corpus delicti*  
 lichen—քարաքոս  
 lithosphere—քարոլորտ  
 magnetic anomaly—մագնիսական շեղում  
 merit ranking—աստիճանակարգում  
 mesosphere—միջնոլորտ  
 meteorite—ասուպ  
 monitoring—մշտագնում  
 morbidity—հիվանդացություն  
 mosque—մզկիթ  
 motivation—շարժառիթավորում  
 penetrator—ներթափանցիչ  
 polarity—բևեռայնություն  
 price formation—see *pricing*  
 pricing—զննագոյացում  
 procedure—ընթացակարգ  
 psychomotor action—հոգեշարժողական հակազդում  
 ravine—հեղեղատ  
 regulations—կանոնակարգ  
 reporting—see *accountability*

riddle in writing—առեղծվածագիր  
 schedule—1. չվացուցակ, 2. ծրագիր, 3. կարգացուցակ  
 seismic vibrator—սեյսմաբորբոխ  
 shortage—see *deficit*  
 sickness rate—see *morbidity*  
 stratosphere—վերնոլորտ  
 target designation—նշանացուցում  
 tidal wave—մակընթաց ալիք  
 timetable—1. չվացուցակ, 2. կարգացուցակ  
 tools—գործիքարան, գործիքակազմ  
 tornado—մրրկայտյուն  
 troposphere—ներքնոլորտ  
 urgency—1. անհետաձգելիություն, 2. ժամկետայնություն, 3. հրատապություն  
 weapon—զենք  
 —annihilating weapon—անիիլացիոն զենք  
 —atmospheric weapon—մթնոլորտային զենք  
 —biospheric weapon—կենսոլորտային զենք  
 —geophysical weapon—երկրաֆիզիկական զենք  
 —high-accuracy weapon—զերճշգրիտ զենք  
 —hydrospheric weapon—ջրոլորտային զենք  
 —ionospheric weapon—իոնոլորտային զենք  
 —lithospheric weapon—քարոլորտային զենք, երկրակեղևային զենք  
 —meteorological weapon—օդերևութաբանական զենք  
 —ozone weapon—օզոնային զենք  
 —particle-beam weapon—փնջային զենք  
 —psychotropic weapon—հոգեխոցիչ զենք  
 —superhigh-frequency weapon—զերբարձրհաճախականային զենք  
 whirlwind—պտտահողմ



### **Ի գիտություն հեղինակների և ընթերցողների**

ՀՀ ՊՆ Ռ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդեսն ընդգրկված է ԲՈՒՀ-ի կողմից հաստատված «Դ-ոկտորական և թեկնածուական ատենախոսությունների արդյունքների հրապարակման համար ընդունելի ամսագրերի ցանկում»:

Հոդվածները պետք է ներկայացվեն հայերեն լեզվով, երկու օրինակով՝ շարված 1,5 ինտերվալով, մինչև 10 համակարգչային էջ ծավալով, հոդվածին կից պետք է լինեն նրա ռուսերեն և անգլերեն ամփոփումները մինչև 2 էջ ծավալով:

Հեղինակները պետք է վկայակոչեն օգտագործված առավել կարևոր աղբյուրները:

Հեղինակները պատասխանատու են հոդվածներում բերվող փաստերի հավաստիության և զաղտմիության պահանջների պահպանման համար:

Հեղինակների դիրքորոշումը պարտադիր չէ, որ համընկնի խմբագրության դիրքորոշման հետ:

Գիագրամները, սխեմաները, գծագրերը, նկարները, լուսանկարները պետք է լինեն հստակ, տպագրության համար պիտանի:

Հոդվածներում պետք է վերծանված լինեն օգտագործվող ռազմաանագիտական հավալումները:

Չեռագրերը հետ չեն վերադարձվում:

Հոդվածները հրապարակվում են պարտադիր գիտական փորձաքննություն անցնելուց հետո:

Նյութերի մասամբ կամ ամբողջությամբ արտատպումը թույլատրվում է միայն խմբագրության գրավոր համաձայնությամբ:

### **К сведению авторов и читателей**

Военно-научный журнал Института национальных стратегических исследований им. Д. Канаяна МО РА «Айкакан банак» включен в утвержденный ВАК-ом «Список приемлемых журналов для публикации результатов докторских и кандидатских диссертаций».

Статьи следует представлять на армянском языке, в двух экземплярах, в пределах 10 компьютерных страниц, напечатанных в 1,5 интервала, с приложением резюме на русском и английском языках объемом до 2-х страниц.

Авторы должны давать сноски на использованные наиболее важные источники.

Авторы ответственны за достоверность и несекретность фактов, приводимых в статьях.

Позиции авторов не обязательно совпадают с позицией редакции.

Диаграммы, схемы, чертежи, рисунки, фотоснимки должны быть исполнены в четком изображении, пригодными для печати.

В статьях должны быть раскрыты употребляемые военно-специальные аббревиатуры.

Рукописи не возвращаются.

Статьи публикуются после прохождения обязательной научной экспертизы.

Перепечатка частично или полностью материалов допускается только с письменного разрешения редакции.

### **For the information of the authors and readers**

Defense-academic journal «Haikakan banak» of Drastamat Kanayan Institute for National Strategic Studies of the Defense Ministry of the Republic of Armenia is included into «The list of acceptable magazines for the publication of the results of doctors and candidates' dissertations», affirmed by the Superior Attesting Commission.

The articles should be submitted in Armenian. Please, supply two copies. Articles are to be 1,5 spaced and should not exceed 10 computer pages in length. Provide Russian and English summaries (2 pages maximum).

Authors should give footnotes for the sources used.

Authors are responsible for the accuracy and the non-confidential nature of the facts given in the articles.

Opinions expressed herein are those of the authors and are not necessarily those of the editorial board.

Diagrams, schemes, drawings, pictures and photos should be of clear print quality.

Please explain special military acronyms.

Manuscripts are not returned.

Articles get published after obligatory scientific examination.

Partially or fully re-printing of materials is allowed only by written permission of the editorial staff.

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ

Պատասխանատու քարտուղար՝ *Ա. Զ. Պեղրոսյան*  
Ռազմագիտական խմբագրման բաժնի պետ՝ *Զ. Դ. Ասարյան*  
Թարգմանչության և խմբագրման բաժնի պետ՝ *Ա. Մ. Մովսիսյան*  
Տեխնիկական բաժնի պետ՝ *Ա. Պ. Նազարեթյան*

Ձևավորող նկարիչ՝ *Դ. Ա. Փարվանյան*  
Լուսանկարիչ՝ *Ա. Դ. Ներսիսյան*

Տեխնիկական և գեղարվեստական խմբագրումը՝ *Ա. Պ. Նազարեթյանի*  
Համակարգչային ապահովումը՝ *Գ. Ս. Դադայանի, Վ. Ռ. Խաչաֆյանի*  
Սրբագրիչներ՝ *Ն. Հ. Բաղդասարյան, Ա. Հ. Սարուխանյան*

Խորհրդատվություն անգլերեն տեքստերի վերաբերյալ՝  
*Ա. Հ. Հակոբյան, Ա. Ա. Մարտիրոսյան*

Լուսանկարչական ապահովումը՝

ՀՀ ՊՆ Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության

Խմբագրության հասցեն՝ Երևան, Կ. ՌԻՆեցու փողոց, 56/6, հեռ. 28-54-25, 28-12-94:

URL: <http://www.mil.am/arm/index.php?page=105>

Էլ. փոստ՝ haykakan\_banak@mail.am

© ՀՀ ՊՆ Գ. Կանայանի անվան ազգային ռազմավարական հետազոտությունների  
ինստիտուտի «Հայկական բանակ» ռազմագիտական հանդես, 2010 թ.

Ստորագրվել է տպագրության 23.12.2010: Թուղթը՝ օֆսեթային: Չևաչափը՝ 70x100 1/16:  
Տեքստը՝ 132 էջ + 4 էջ ներդիր: Պայմանական տպագրական 10,5 մամուլ: Տպաքանակը՝ 500:

Տառատեսակը՝ «Թայմս» և «Բայբիկա»: Տպագրությունը՝ օֆսեթ:

Վկայական՝ 523: Դասիչ՝ 69263: ISSN 1829-0108:

Տպագրվել է «Լիմուշ» տպարանում:



ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌ-ՀԻ-ի  
«ՀՀ-Սփյուռք երկխոսության ռազմավարական ուղենիշները» մշակման  
փորձագիտական քննարկման ժամանակ.

աջից ձախ՝ ՀՀ Պաշտպանության նախարար Ս. Օհանյան,  
ՀՀ Նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Վ. Սարգսյան,  
ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան ԱՌ-ՀԻ-ի պետ, պաշտպանության նախարարի  
խորհրդական, գեներալ-մայոր Հ. Քոթանջյան

Երևան, 2010 թ. նոյեմբերի 3



# ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ